Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 1962

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. Х. САРКИСЯН

# О ПУТЯХ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1962

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)14

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

A II / 20617

ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1962

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Ներկա աշխատությունը նվիրված է Հին Հայաստանի (մինչև մ. թ. V դար) սոցիալ-տնտեսական կառուցվածքի և նրա զարգացման առանցքային մի քանի հարցերի ուսումնասիրմանը։ Ի մի հավաքելով աղբյուրների մատակարարած սուղ տվյալները և դրանք դիտելով Հայաստանին սահմանակից ու նրա հետ սերտ կապված ստրկատիրական երկրների (Փոքր Ասիա, Միջագետք, Պարսկաստան) սոցիալ-տնտեսական միջավայրում, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Հայաստանի զարգացման ուղին այդ երկրների զարգացման հետ նմանություն հայտաբերելով հանդերձ, ունեցել է նաև իր սեփական առանձնահատկությունները։ Աշխատությունն ավարտվում է Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի պրոբլեմի հետագա ուսումնասիրման հեռանկարների քննարկմամբ։

Հին Հայաստանի պատմության աղբյուրները միջնադարյան Հայաստանի պատմության աղբյուրների հետ համեմատելիս աչքի է զարնում մի էական տարբերություն։ Առատ ու հարուստ հայ պատմական գրականությունը սկիզբ է առնում մեր թվականության V դարից, հայկական մատենագրության ծագման ժամանակներից։ Միջնադարի պատմաբաններին այն մատակարարում է այնպիսի տվյալներ, որոնց հանդեպ գունատվում է Հայաստանի պատմության այդ ժամանակաշրջանին վերաբերող օտարական, թեկուզ և շատ արժեքավոր, աղբյուրների նշանակությունը։ Նախընթաց, մինչև IV—V դարն ընկած ժամանակաշրջանը հակառակ պատկերն է ներկայացնում։ Այստեղ առաջին պլանում հանդես է գալիս օտարական՝ խեթական, ասորեստանյան, ուրարտական, հին-պարսկական, առանձնապես հունական ու լատինական, ինչպես նաև ասորական, պահլավական և այլ աղբյուրների խումբը, կազմելով այն նյութը, որով հիմնականում վերարտադրվում է հին Հայաստանի պատմությունը։ Իհարկե, այդ գործում նշանակալի է նաև աղբյուրների մյուս, տեղական, հայկական խումբը (վաղ միջնադարի հայ հեղինակների տեղեկությունները հեռավոր անցյալի մասին և հնագիտական ու վիմագրական ոչ հարուստ նյութ), որը գնալով աճում է, բայց, այնուամենայնիվ, առայժմ մնում է երկրորդական դերում։

Հեշտ է պատկերացնել, թե որքան տարբերվում է միջնադարին և հեռավոր անցյալին վերաբերող աղբյուրներից եկող ինֆորմացիան։ Առաջին դեպքում, քաղված լինելով առավելապես ներքին աղբյուրներից, այն բազմակողմանի կերպով բնութագրում է հայ հասարակության ներքին կառուցվածքը,

այն է՝ ֆեոդալական հասարակարգը։ Երկրորդ գլխում, ելնելով մեծ մասամբ արտաքին աղբյուրներից, այն պատկերացում է տալիս գլխավորապես արտաքին քաղաքական պատմության մասին, անխուսափելիորեն ստվերի մեջ թողնելով Հայաստանի ներքին կյանքի բնագավառը․ նրա հասարակարգը։

Հին Հայաստանի հասարակարգի ուսումնասիրության ինֆորմացիայի այդ սակավությամբ բացատրվող դժվարությունները նրա առաջին հետազոտողներին բնականաբար ստիպում էին Հայաստանի ֆեոդալական կարգերի մասին ավելի ուշ տվյալների հիման վրա ստեղծված պատկերացումները տեղափոխելու և տարածելու նաև հին ժամանակաշրջանի վրա։ Վերջինիս մասին պահպանված, այն ժամանակ դեռևս բավարար չափով չուսումնասիրված աղքատիկ տեղեկությունները հարմարեցվում էին այդ պատկերացումներին։ Հենց այդպես էլ վարվել է Նիկողայոս Ադոնցը, որին է պատկանում հայկական ֆեոդալիզմի էության մեջ թափանցելու առաջին լուրջ և հաջողված փորձը[1]։

Այսպես, հայկական ֆեոդալիզմի իր ընդարձակ բնութագիրը Ն. Ադոնցը ներածում է հետևյալ խոսքերով. «Այժմ անցնենք մեր կողմից ուսումնասիրվող երևույթի քննությանը այն փուլում, որում նրան հանդիպեց հայկական մատենագրությունը և որը մեզ ex silentio բացա ծառայից դեպի հեռավոր անցյալը կատարած նախընթաց էքսկուրսների ժամանակ»[2]։

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, СПБ, 1908, էջ 453—493: Հատկանշական է, որ Ն. Ադոնցը իր դատողությունների և բնութագրերի մեջ դուրս չի գալիս հասարակության քաղաքական ու իրավական ինստիտուտների սահմաններից: Որպես բուրժուական պատմագրության ներկայացուցչի՝ «ֆեոդալիզմը» նրա համար բնավ էլ արտադրության եղանակ չէ, այլ լոկ քաղաքական կազմակերպության որոշակի ձև, որը պարունակում է, օրինակ, այնպիսի տարրեր, ինչպիսիք են հիերարխիան, վասալիտետը, պետության քաղաքական մասնատվածությունը, այնուհետև, որոշակի իրավավիճակը հողատիրության մեջ, և այլն:

[2] Նույն տեղում, էջ 452:

Այդ «դեպի հեռավոր անցյալը էքսկուրսներում» Ն. Ադոնցը ֆեոդալական կարգերի մասին իր պատկերացումը անցյալի վրա տարածելու հնարավորության հիմնավորումներ է որոնում: Ըստ նրա, դրանցից գլխավորն է Հայաստանի տերիտորիալ բաժանման մասին Պլինիոս Ավագի հայտնի հաղորդումը: Հայաստանը, ասում է Պլինիոսը, «բաժանված է պրեֆեկտուրաների, թվով 120, որոնց անվանում են ստրատեգիաներ, ունեն բարբարոսական անվանումներ: Դրանցից մի քանիսը մի ժամանակ, հավանորեն, եղել են առանձին թագավորություններ» (Nat. hist., *VI*, 9): Այդ ստրատեգիաները, Ն. Ադոնցի կարծիքով, վարչական բնույթ չէին կրում և ներկայացնում էին «տիրակալական իշխանություններ, թեկուզ դրանց զարգացման սկզբնական փուլում»: Նրանց կարգավորումը և որոշակի սիստեմի բերելը Ն. Ադոնցը վերագրում է Տրդատ I-ին: Արդարև, Ադոնցը Պլինիոսի վկայությունը տեղավորում է կանխակալ պատկերացումների պրոկրուստյան մահճում: Չէ որ Պլինիոսի գործածած երկու տերմիններն էլ՝ և լատիներեն praefectura-ն, և հունարեն στρατηγία-ն, նշանակությունների ինչպիսի գամմա էլ տրված լինեն նրանց հնում որպես տերիտորիալ միավորների, ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այլ կերպ, քան վարչական տերիտորիալ միավորի այս կամ այն տարատեսակ, չեն կարող մեկնաբանվել որպես տիրույթ, իշխանություն:

Ն. Ադոնցը, լինելով կլասիկ լեզուների հիանալի մասնագետ, անշուշտ գիտակցում էր այդ: Դրա համար նա վկայաբերում է «կլասիկների բառագործածության անճշգրտությունը» և ջանում համոզել, որ Պլինիոսի հիշատակած «ստրատեգիան» ամենևին էլ ստրատեգիա չէր, և հայտնի չէ թե ինչ էր: «Ի՞նչ էին ներկայացնում հիշյալ բաժանումները,— գրում է նա,— ինչո՞ւ նրանք կոչվում էին ստրատեգիա, այնքան էլ պարզ չէ: Օտարերկրյա ծագում ունեցող բաժանումների նկատմամբ կլասիկների բառագործածությունը աչքի չի ընկնում ճշգրտությամբ»[1]: Անհաջող փորձ, որովհետև «կլասիկների

---

[1] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, էջ 131.

բառագործածությունը» այստեղ դեր չի խաղում, խոսքը ամենևին էլ այն մասին չէ, թե կլասիկները ինչպես էին անվանում Հայաստանի տերիտորիալ միավորները, այլ այն մասին, որ դրանք բուն Հայաստանում անվանվում էին ստրատեգիաներ (տե՛ս Պլինիոսի տեքստը)։ Հենց այդ պատճառով էլ Պլինիոսը «ստրատեգիա» բառը պարզաբանում է «պրեֆեկտուրա» բառով։ Այն, որ Պլինիոսը նաև ավելի կոնկրետ դեպքում այս վերջին տերմինը գործածել է նրա ճշգրիտ նշանակությամբ. բարեբախտաբար հաստատվում է հենց տեքստում, այդ նույն հատվածում. այդ տերմինին (իսկ դրա հետ միասին նաև «ստրատեգիա» տերմինին) նա հակադրել է regnum— «թագավորություն», «իշխանություն» տերմինը, որով էլ ավելի է ընդգծվում «պրեֆեկտուրա» տերմինի, որպես վարչական միավորի, նշանակությունը։ Ահա՛ որտեղ պետք է խոսվեր «կլասիկների բառագործածության» մասին[1]։

[1] Ն. Ադոնցի մյուս նկատառումը այն մասին, թե այդ տերիտորիալ միավորները ծագել են մասնավոր նախաձեռնություններից անկախ, թե «առաջին Արշակունուն կարելի է վերագրել լոկ նրանց կարգավորումը և որոշ սիստեմի բերելը»—կարելի էր ընդունել, եթե նա այդ նկատառումը ևս չծառայեցներ իր այն գաղափարին, որ ստրատեգիաները եղել են տիրույթներ։ Բայց չէ՞ որ վարչական միավորները ևս չէին ծագում տիրակալի քմահաճույքով։ Նրանք իրենց հիմքն ունեն բնական սահմաններում, էթնիկական և այլ պայմաններում։ Մասնավորապես, ստրատեգիաների եզրագծերը, անկասկած, որոշում էին հայկական լեռնաշխարհը մասերի բաժանող բնական սահմաններով, գլխավորապես, լեռնաշղթաներով, ուստի կարելի է ենթադրել, որ հետագայի շատ ֆեոդալական իշխանություններ տերիտորիայով համընկնում էին նախկին ստրատեգիաների հետ։

Վերջապես, ստրատեգիաների հետ կապված մի հարց ևս։ Իրո՞ք նրանց հիմնադիրը եղել է Տրդատ I-ը, որ սկսել թագավորել մեր թվականության 66 թ.։ Չէ՞ որ Պլինիոսը մահացել է դրանից միայն 13 տարի հետո՝ մ. թ. 77 թ.։ Ե՞րբ է նա գրել Հայաստանի ստրատեգիաների մասին։ Գուցե 60 թ. ավելի առաջ, իսկ եթե ավելի ուշ, ապա կհասցնե՞ր նա արդյոք իր հաղորդման մեջ արտացոլել այդ ռեֆորմը, եթե իսկապես այն կատարված լիներ նշված ժամանակամիջոցում։ Մեզ քիչ հավանական է թվում այդ։ Ամենից հավանականն այն է, որ համապատասխան ռեֆորմը անց է կացվել ավելի վաղ. Արտաշեսյանների

Ն. Ադոնցը Տրդատ I-ի ժամանակին է վերագրում նաև նախարարության, որպես ֆեոդալական ինստիտուտի, կազմավորումը։ Նախարարները, նրա կարծիքով, իրենց հողերում սկզբնապես հանդիսանում էին թագավորի կողմից կարգված կառավարչի և ժառանգական տիրոջ զուգակցությունը։ Ադոնցը, անկասկած, միանգամայն ճիշտ է նշմարել նախարարության դրության քաղաքական կողմը նրա զարգացման վաղ էտապում, բայց շրջանցել է նրան տալ նաև սոցիալական, այն է՝ ֆեոդալական գնահատում, և այդ այն պարզ պատճառով, որ դասակարգային, բևեռացված, կամ, ինչպես նա ինքն էր արտահայտվում, «արիստոկրատացված» հասարակության զարգացման այլ ուղի, քան ֆեոդալացումը, նա չգիտեր, գոնե արևելյան երկրների համար։

Հին Հայաստանում թագավորական և նախարարական հողատիրության ինստիտուտի զարգացումը այն ֆոնն է, որի վրա հստակ կերպով ուրվագծվում է և՛ տերիտորիալ միավորների, և՛ նրանց կառավարիչների՝ նախարարների իսկական բնույթը[1]։ Հելլենիստական ժամանակաշրջանում թագավորա-

---

ժամանակաշրջանում և, եթե այդպես է, հենց Արտաշես I-ի ժամանակ (մ. թ. ա. II դարի առաջին կեսին), ի թիվս այն բազմաթիվ վերափոխումների, որոնք ձեռնարկվել էին զգալիորեն ընդարձակված պետության կառավարման ավելի կուռ կազմակերպման պահանջի հետևանքով (տես ներքևում, էջ 66)։ Հարցի նման լուծման օգտին են խոսում նաև այլ նկատառումներ՝ որ Արտաշեսը, մինչև թագավորելը, եղել է սելևկյան ստրատեգ (ստրատեգության կառավարիչ), որ Հայաստանի հարևան Կապադովկիան, դեռևս Ստրաբոնի հաղորդման համաձայն, նույնպես կազմված էր ստրատեգիաներից (XII, 1, 4) և այլն։

[1] Իրանագետ Վ. Հենինգը Խորասանի նորագյուտ պարթևական մի արձանագրության հիման վրա նորերս վերջնականապես պարզել է «նախարար» տերմինի ստուգաբանությունը, որպես «նա, ով ունի իշխանություն, առաջին տեղը. պետ», ընդ որում այդ արձանագրության մեջ «նախարար» բառը հանդես է գալիս «սատրապ» բառի հոմանիշ։ Այսպիսով, հաստատվում է նաև նախարար և սատրապ տերմինների հայերեն գործածության մեջ մի ժամանակ նույնպես հոմանիշ լինելու վերաբերյալ ենթադրությունը, որը բխում է Փավստոս Բուզանդի աշխա-

կան հողերի կազմի մեջ էր մտնում հայկական պետության տերիտորիայի մեծագույն մասը, այլ կերպ ասած, Հայաստանը այդ տեսակետից բացառություն չէր կազմում հելլենիստական աշխարհի մյուս երկրների շարքում[1]: Հետագայում տեղի ունեցավ թագավորական հողային ֆոնդի տարրաճանական, սկզբում դանդաղ, այնուհետև ավելի ու ավելի արագընթաց «քայքայում», որի հաշվին աճեց քաղաքային[2], տաճարական[3] և, առանձնապես, նախարարական հողատիրությունը: IV դարում հողերի հիմնական զանգվածը արդեն պատկանում էր եկեղեցուն և նախարարական տներին, որոնք սողոսկել էին նույնիսկ արքունական տիրույթների բուն սիրտը՝ Այրարատ նահանգը: Թագավորի կողմից նախարարներին և եկեղեցուն արված հողային նվիրատվությունների մասին աղբյուրներում (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Ապարանի հունարեն արձանագրություն) հանդիպող բազմաթիվ տեղեկությունները ցույց են տալիս այն ուղիներից մեկը, որոնցով հողերը դուրս էին գալիս թագավորի ձեռքից: Այդ տեղեկությունները ասես համրագումարի են բերված այն պատասխանի մեջ, որ Ներսես կաթողիկոսը (IV դարի կեսերին) տվել է թագավորից դժգոհ, գանգատվող իր մոտ եկած նախարարներին. «...ամենքեան դուք կեցեալ էք յազգէս Արշակունեաց. ամենք ի ձէնջ դաստակերտս լեալ ի նոցանէն.

---

տության որոշ տեղերից (IV, 3, 4, 5): Տե՛ս W. B. Henning, A New Parthian Inscription, „Journal of Royal Asiatic Society", 1955, 3—4, էջ 132 և հետ.: Հմմտ. А. Г. Периханян, Древнеармянские востаники. В связи с вопросом о формах землевладения, „Вестник древней истории" (այսուհետև կրճատ՝ ВДИ), 1956, № 2, էջ 49 և հետ.:

[1] Տե՛ս С. Т. Еремян, Рабовладельческое общество древней Армении, М., 1953 ([illegible]), էջ 36; А. Г. Периханян, նշ. աշխ., էջ 49 և հետ.:

[2] Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, էջ 104, 106 և հետ.:

[3] Տե՛ս А. Г. Периханян, Храмовые объединения Малой Азии и Армении (IV в. до. н. э.—III в. н. э.), М., 1959, էջ 100 և հետ.: Տե՛ս Փավստոս Բուզանդի [illegible] (IV, 14):

և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աստ՝ անդ ատենից, գեղից և գանձուց տեարք լեալ էր և ոչխարաց դաստակերտացն» (Փավստոս Բուզանդ, IV, 51):

Ադոնցի հարթած ուղիով են ընթացել նաև Հ. Մանանդյանը և մի շարք այլ հետազոտողներ, Հայաստանում ֆեոդալիզմի սկիզբը վերագրելով տարբեր ժամանակների՝ մինչուրարտական ժամանակաշրջանից մինչև Տիգրան II-ի դարաշրջանը[1]:

Սակայն Հին Հայաստանի հասարակարգի բուն դեմքը երևան բերելու ձգտումը անխուսափելիորեն պետք է հանգեցներ այդ տեսակետի վերանայմանը, և Ս. Տ. Երեմյանը առաջ քաշեց ու մի շարք հոդվածներում հիմնավորեց մի նոր տեսակետ[2]:

Ս. Երեմյանը հանգեց Հին Հայաստանի հասարակարգի ստրկատիրական բնույթի վերաբերյալ եզրակացության և տվեց նրա զարգացման հետևյալ պարբերացումը. համայնաստրկատիրական ժամանակաշրջան (VII—IV դդ. մ. թ. ա.), ստրկատիրական էկոնոմիկայի ծաղկման ժամանակաշրջան

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջանում), Երևան, 1934, էջ 219 և հետ., նույնը. Проблема общественного строя доаршакидской Армении, „Исторические записки", № 15, 1945, էջ 25 և հետ.: Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, I, Երևան, 1939, էջ 101. Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, I, Վաղ ֆեոդալիզմի շրջան, Երևան, 1957, էջ 110 և հետ. և ուրիշներ:

[2] История СССР с древнейших времен до образования древнерусского государства (на правах рукописи). ч. I—II. М.—Л., 1939, էջ 316; С. Т. Еремян. Основные черты общественного строя Армении в эллинистический период, „Известия Академии наук Армянской ССР, Общественные науки" (այսուհետև կրճատ՝ ИАНА), 1948, № 11. նույնը, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1. նույնը, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3. նույնը, Рабовладельческое общество древней Армении, М., 1953 (դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատ). Очерки истории СССР (III—IX вв.), М., 1958, էջ 198 և հետ. (Ս. Երեմյանի բաժինը):

(III դ. մ. թ. ա.—II դ. մ. թ.), ստրկատիրական արտադրական հարաբերությունների ճգնաժամի և անկման ժամանակաշրջան (III—IV դդ. մ. թ.)։

Ս. Երեմյանը ցույց տվեց, որ հին Հայաստանում տարածված դաստակերտները և ագարակները ստրկատիրական՝ տնտեսություններ էին, ստրկական ուժի կիրառմամբ[1]։

Ստրկական վիճակը նշանակող զարգացած հայկական տերմինաբանությամբ, որ երևան բերեց և ուսումնասիրեց մեծ մասամբ Ս. Երեմյանը, վկայում է հին Հայաստանում ստրկության տարածվածության և ճյուղավորվածության մասին։ Ընդգծելով աղբյուրների որոշ տեղեկություններ, Ս. Երեմյանը ցույց տվեց ստրուկների արտաքին աղբյուրի՝ նվաճողական պատերազմների առանձնապես կարևոր նշանակությունը։ Նա զգալի աշխատանք կատարեց նաև հին Հայաստանի ստրկատիրական քաղաքի և մինչֆեոդալական գյուղական համայնքի հետազոտման ուղղությամբ։

Չի կարելի ժխտել, որ նոր տեսակետի երևան գալը որոշ չափով կապված է եղել Հին Արևելքի ստրկատիրական հասարակությունների նկատմամբ 30-ական թվականներին սովետական պատմագրության մեջ մշակված կոնցեպցիան հին Հայաստանի վրա տարածելու հետ։ Սակայն նման տարածման հնարավորությունը հենց պայմանավորված է եղել Հայաստանի հին պատմության, մասնավորապես ստրկատիրության վերաբերյալ նյութերի մինչ այդ կատարված ուսումնասիրությամբ[2]։

Նոր տեսակետը արտահայտում գտավ և ներկայումս ընդունված է, ո՛չ միայն Հայկական ՍՍՌ Գիտությունների

[1] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении. ВДИ, 1950, № 1, էջ 13 և հետ.։ А. Г. Периханян, К вопросу о рабовладении и землевладении в Иране парфянского времени, ВДИ, 1952, № 4, էջ 18 և հետ.։

[2] Հատկանշական է, որ հին Հայաստանում ստրկության գոյության հարցը առաջին անգամ, կոնկրետ կերպով և փաստական ավյալների հիման վրա, դրված է Հ. Հ. Մանանդյանի աշխատություններ

ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» երկհատորյակում, այլև համամիութենական հրատարակություններում, ինչպես, օրինակ՝ «Всемирная история», «Очерки истории СССР» և այլն։

Այսուհանդերձ՝ պետք է խոստովանել, որ մենք առայժմ գտնվում ենք նրա մշակման դեռ սկզբնական փուլում և ցավալի է, որ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության նկատմամբ հետաքրքրությունը վերջին տարիներս որոշ չափով սառել է։ Չէ՞ որ մի շարք թեզեր դեռևս սպառիչ կամ բավարար չափով փաստարկված չեն, շատ հարցեր հեռու են լուծված լինելուց, մյուսները ռեալ կերպով դեռևս դրված էլ չեն։ Նկատենք նաև, որ հիմնական դրույթների վերաբերյալ հետազոտողների շրջանում միասնություն չկա։ Հին Հայաստա-

---

«Ստրկությունը,— գրում էր նա,— համատարած և ընդհանուր մի երևույթ էր հին աշխարհում, ուստի ինքնըստինքյան հասկանալի է, որ բացառություն չէր կարող կազմել նաև հին Հայաստանը» («Ֆեոդալիզմը», էջ 233)։ Իր ուսումնասիրության մեջ Հ. Հ. Մանանդյանը շատ հանգամանորեն մշակել է ստրկական ուժի աղբյուրների և նրա կիրառման տնտեսական ասպարեզների հարցը։ Դրա հետ մեկտեղ—նա նախազգուշացնում էր հին Հայաստանում ստրկության նշանակությունը չափազանցելուց («Ֆեոդալիզմը հին Հայաստանում», էջ 239)։

Խ. Սամուելյանը այդ պրոբլեմին նվիրել է հատուկ ուսումնասիրություն—«Ստրկությունը հին Հայաստանում» («Տեղեկագիր ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտի», № 2, Երևան, 1937)։ Ըստ նրա, հին Հայաստանում գոյություն են ունեցել չորս կատեգորիայի ստրուկներ՝ արքունական, ճորտացված, անտային և տաճարական։ Հենվելով ստրկացված ազգաբերինների վերաբերյալ եղած թվական տվյալների վրա, ստրուկների թիվը նա համարում էր խիստ զգալի։ Նրա կարծիքով հին Հայաստանում ստրուկներն ունեին որոշ, թեպետև խիստ սահմանափակ, իրավունքներ—տիրոջ թույլտվությամբ ձեռք բերել տնտեսության համար անհրաժեշտ իրեր, ազատվել որոշ պայմաններով և այլն։ Խ. Սամուելյանի աշխատությունը ավանդ հանդիսացավ հին Հայաստանի հասարակարգի ուսումնասիրության գործում։ Այդ աշխատության թերությունների թվին են պատկանում որոշակի սխեմատիկությունը և մի շարք դեպքերում՝ ենթադրականությունը։

տանի հասարակության ստրկատիրական բնույթի վերաբե-րյալ նոր տեսակետը հետազոտողների մեծամասնության կողմից ընդունվելու հետ մեկտեղ, կա նաև այդ տեսակետի քննադատություն և լուռ անհավանություն:

Պետք է, սակայն, հենց այստեղ ասել, որ այդ քննադատության հիմնական կետը նպատակակետին չի դիպչում: Սոցիալական կարգի վերաբերյալ տեսակետի հակառակորդները համառորեն պնդում են, որ այդ տեսակետը հիմնըված է, իբր թե, լոկ հին Հայաստանի հասարակարգը անտիկ ստրկատիրական հասարակությունների կարգերի հետ համանմանեցնելու կամ հենց նույնացնելու վրա: Ըստ երևույթին, նրանք կարծում են, որ միմիայն այդ եղանակով, որևէ երկրի հասարակարգը հռոմեական կամ հունական ստրկատիրական կարգերի հետ նույնացնելու եղանակով է, որ կարելի է հետևություն անել նրա ստրկատիրական բնույթի մասին: Փաստորեն հենց այդ էր պահանջում Հ. Մանանդյանը, երբ ամբողջ փաստարկումն ուղղելով Հայաստանի հողի վրա հունական և հռոմեական ստրկատիրական լատիֆունդիաների գոյությունը ժխտելու նպատակին[1]:

Այնինչ այդ կարգի բաներ ոչ ոք հանձն չի առնի ապացուցել, որովհետև Հայաստանի համար ոչ միայն պարտադիր չէր կրկնել հունական կամ հռոմեական տիպի ստրկատիրական հասարակությունների զարգացման ուղին, այլև իրենք՝ այդ երկու տիպերը իրարից խիստ տարբերվում էին, իսկ եթե համեմատելու լինենք անտեսության մի քանի առանձին բնագավառներ, ապա կտեսնենք, որ նրանք ամենևին էլ նման չեն եղել միմյանց: Օրինակ՝ գյուղատնտեսության մեջ, հռոմեական կլասիկ ստրկատիրության համար (այսինքն ռեսպուբլիկայի վերջին շրջանի և կայսրության առաջին շրջանի Իտալիայի ստրկատիրության, որովհետև այլ ժամանակա-

[1] Я. А. Манандян, Проблема общественного строя доаршакидской Армении, „Исторические записки", № 5, 1945, էջ 5 և հետ.:

շրջաններում կամ տարբեր պոլիսներում իրերի դրությունը տարբեր է եղել) բնորոշ էին խոշոր արտաքաղաքային տնտեսությունները—վիլլաները ու լատիֆունդիաները՝ ստրուկների մեծ զանգվածների օգտագործմամբ: Իսկ հունական-կլասիկ ստրկատիրության մեջ (այսինքն մ. թ. ա. V դարի ատտիկյան ստրկատիրության) լատիֆունդիաներին նմանվող որևէ բան չի նկատվում: Այստեղ բնորոշ էր մանր պոլիսային (քաղաքային) հողատիրությունը՝ ստրկական աշխատանքի թույլ կիրառմամբ: Այդ նույն ժամանակաշրջանի Հունաստանի մյուս մարզերի գյուղատնտեսության մեջ իշխում էին ստրկատիրության այլ ձևեր: Օրինակ՝ Սպարտայում գյուղատնտեսությունը վարում էին հիլոտների շահագործման միջոցով՝ արտադրողների մի կատեգորիա, որը դժվարությամբ է տեղավորվում ստրուկների մասին դասական պատկերացումների մեջ, թեև հիլոտներն իսկական ստրուկներ էին, իսկ Սպարտան ինքը՝ տիպիկ ստրկատիրական պետություն[1]:

---

[1] Վերջին տասնամյակների ընթացքում բուրժուական պատմագրությունը մեծ մասամբ շրջանցում է հին աշխարհում ստրկության պրոբլեմը, իսկ եղած ուսումնասիրություններում երևում է նրա նշանակությունը խիստ նվազեցնելու բացահայտ ձգտում: Այդ ձգտումը իր վառ արտահայտությունն է գտել ստրկության մասին՝ ամենախոշոր, ավելի ճիշտ՝ միակ խոշոր աշխատության մեջ, որը պատկանում է Վեստերմանի գրչին (W. Westermann, The Slave Systems of Greek and Roman Antiquity, Philadelphia, 1955): Հեղինակը, մի կողմից՝ փորձում է ստրուկների ու ստրկատերերի միջև անտագոնիզմը հարթել փաստերի այնպիսի ընտրության միջոցով, որից բխեր, թե ստրուկների շահագործումը այնքան էլ դաժան բնույթ չի կրել: Մյուս կողմից՝ նա փորձում է հիմնավորել այնպիսի մի թեզ, թե ստրկությունն ամենևին էլ այն չափով տարածված չի եղել նույնիսկ Հռոմում և Հունաստանում, որպեսզի կարելի լիներ հունական ու հռոմեական հասարակությունների էկոնոմիկան համարել ստրկատիրական: Ընդսմին հիլոտական և նման ձևերը Վեստերմանը դուրս է նետում հաշվից, որպես ստրկության հետ չառնչվող: Այդ տեսությունների քաղաքական նպատակը ոչ մի կասկած չի հարուցում. դրանք վերաբերում են այն միջոցների զինանոցին, որոնցով բուրժուական գաղափարախոսները փորձում են արդարացնել ժամանակակից կապիտալիստական հասարակության դասակարգային անտագոնիզմը:

Ստրկատիրական հասարակարգի սովետական հետազոտողները վաղուց արդեն հրաժարվել են տարբեր ժամանակաշրջանների և երկրների տնտեսական ձևերի ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների ողջ բազմազանությունը՝ ստրկատիրական հասարակարգի մասին կանխապես տրված տարրական ստերեոտիպ պատկերացման մեջ խցկելու փորձերից[1]: Այդպիսի հրաժարումը առանձնապես օգնեց հին-արևելյան հասարակությունների մարքսիստական խոր ուսումնասիրությունը, որը հետազոտողների աչքի առջև բացեց ստրկատիրական արտադրական հարաբերությունների նոր կոնկրետ ձևեր՝ մերթ միմյանց և անտիկ աշխարհի ձևերին նման, մերթ միանգամայն տարբեր[2]:

Հին Հայաստանի հասարակարգի ստրկատիրական բնույթի տեսակետը քննադատողների պնդումների էությունից անկախ, քննադատության ռացիոնալ հատիկը, ըստ երևույթին, այն է, որ մինչ այժմ հիմնական ուշադրությունը հատկացվելով Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր հարցերին, քիչ բան է արվել նրա առանձնահատկությունները պարզելու համար: Ներկա աշխատությունը մենք ձգտել ենք ուղղել հենց այս վերջին հունով, սահմանափակելով մեզ ուսումնասիրվող պրոբլեմի լոկ մի քանի կողմնորոշող ասպեկտներով:

---

[1] Տե՛ս «Вестник древней истории» ամսագրում 1950-ական, ինչպես նաև 1960 և 1961 թթ., տպագրված Ս. Լ. Ուտչենկոյի, Ե. Մ. Շտաերմանի, Ա. Յա. Լենցմանի, Ի. Դ. Ամուսինի, Ա. Ռ. Կորսունսկու, Կ. Մ. Կոլոբովայի, Ա. Գ. Դեմպի, Լ. Ն. Կազամանովայի, Է. Լ. Կազակևիչի, Յու. Բ. Յուսիֆովի և ուրիշների հոդվածները:

[2] Տե՛ս В. В. Струве, Проблема зарождения, развития и разложения рабовладельческого общества Древнего Востока. М.—Л., 1934. Նույնը, История Древнего Востока, изд. 2-е, М., 1941. В. И. Авдиев, История Древнего Востока, изд. 2-е, М., 1953. А. И. Тюменев, Государственное хозяйство древнего Шумера, М.—Л., 1956. Նույնը, Передний Восток и античность, „Вопросы истории“, 1957, № 6. И. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, Л., 1949. Նույնը, Общественный и государственный строй древнего Шумера, М., 1959 և ուրիշներ:

* * *

Դրանցից մեկն է դաստակերտների և ագարակների հարցը։ Թեև այն բավական արծարծվել է սովետական պատմագիտական գրականության մեջ, այդուհանդերձ խնդրի վերջնական լուծումը պահանջում է նորից ու նորից անդրադառնալ դրան։ Ներկա դեպքում մեր նպատակն է աղբյուրների մի շարք տվյալներով ճշտել դաստակերտ հասկացության ծավալը, նրա հարաբերակցությունը ագարակ տերմինի հետ։ Ճշտման անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ առկա ուսումնասիրություններում հաճախ իրար են խառնվում դաստակերտ բառի՝ աղբյուրներում դրսևորվող երկու միանգամայն տարբեր նշանակությունները, որոնցից իրականում միայն մեկն է առնչվում ագարակ տերմինի հետ։

Այս կապակցությամբ նորից դրվում է դաստակերտ-ագարակների սոցիալ-տնտեսական բնույթի հարցը, ըստ որում հատուկ շեշտվում է մի կարևոր հանգամանք։ Ինչպես ասվեց սկզբում, օտարաբան, արտաքին աղբյուրները, հին Հայաստանի պատմության շարադրման հիմքը հանդիսանալով հանդերձ, չափազանց ժլատ են նրա ներքին կառուցվածքի ու կարգերի լուսաբանման գործում։ Հետազոտողները այդ պակասը լրացնում են վաղ միջնադարյան հայկական մատենագրական աղբյուրների օգտագործմամբ՝ հենվելով անառարկելի այն փաստի վրա, որ նրանց մեջ իրենց արտացոլումն են գտել ավելի հին ժամանակներում գոյություն ունեցած շատ իրողություններ ու երևույթներ։ Սակայն չի կարելի պահանջել, որ շատ արժեքավոր, բայց ավելի ուշ շրջանի պատկանող այդ աղբյուրները լրիվ և ադեկվատ կերպով արտացոլեն հին շրջանի պատմությունը։ Հիշյալ աղբյուրներում այդ պատմությունը կարող է ներկայանալ միջնորդաբար, միայն մնացորդային ձևով։ Սույն չափանիշով էլ պարտավոր ենք մոտենալ V դ. հայկական աղբյուրների այն տեղեկություններին, որոնք վերաբերում են մեզ հետաքրքրող հարցին։

A 20617

Դաստակերտների և ագարակների սոցիալ-տնտեսական էության մասին գոյություն ունեն տարբեր տեսակետներ։

Ն. Ադոնցի կարծիքով ագարակները հայ նախարարների ու ազատների անձնական տնտեսություններն էին և մշակվում էին իշխանի ու նրա ծառաների ձեռքով։ Ի տարբերություն գյուղերի, ագարակները պետության կողմից հարկված չէին[1]։

Հ. Մանանդյանը բոլորովին ժխտում էր այդ տնտեսական միավորների ստրկատիրական բնույթը, միաժամանակ ագարակների ու դաստակերտների անմիջական արտադրողների դրության վերաբերյալ բուն էության որոշակի ոչինչ չասելով։ Նա նշում է, որ «խոշոր ու մանր ֆեոդալներին, եկեղեցուն, առանձին հոգևոր անձերի, ինչպես նաև քաղաքներին ու գյուղերին» պատկանող ագարակների («դաշտ, վարելահող, կալվածատուն և բնակավայր») բնակչությունը նվաստացված վիճակում էր գտնվում գյուղերի բնակիչների համեմատությամբ[2], իսկ դաստակերտների («թագավորական, նախարարական ու եկեղեցական վիլլաներ և կալվածատներ») բնակիչները, ընդհակառակը, արտոնյալ էին, նրանց վերապահված էին քաղաքի բնակիչների արտոնությունների նման որոշ արտոնություններ և իրավունքներ[3]։ «Միանգամայն հավանական է,— ավելացնում է նա, հաշվի առնելով պահպանված ուղղակի տվյալները,— որ բացի արտոնյալ հիմնական բնակչությունից, դաստակերտներում տեղ-տեղ աշխատել են նաև ռազմագերիներ և ստրուկներ»։

Այս սահմանումները չեն պարզում հիմնականը՝ ինչպի՞սի սոցիալ-տնտեսական բովանդակություն է տեսնում Հ. Մանանդյանը, գյուղերի բնակիչների (այսինքն գյուղացի-համայնականների) համեմատությամբ, կալված-ագարակների բնակիչների «նվաստացվածության» մեջ, կտրականապես

---

[1] Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 198 և 202։

[2] Я. А. Манандян, Проблема общественного строя доаршакидской Армении. „Исторические записки", М., 15, 1945, էջ 4։

[3] Նույն տեղում, էջ 5 և հետ.։

ժխտելով նրանց ստրկական վիճակը, ինչպես նաև՝ ո՞րն է կալված-դաստակերտների «հիմնական բնակչության» (հենց նույն գյուղացի-համայնականների համեմատությամբ) «արտոնվածության» սոցիալ-տնտեսական իմաստը։ Եվ ինչպե՞ս շաղկապել մեկը մյուսի հետ։

Ս. Երեմյանը գտնում է, որ ագարակը «մասնատիրական հողի, մասնատիրական տնտեսության, վարկապաշտերով կալվածատան, կալվածքի և, վերջապես, ավելի ուշ՝ բնակավայրի անունն է... Հայկական մատենագրության հնագույն երկերում ագարակներում աշխատող անմիջական արտադրողները նշանակվում են մշակ տերմինով...»։ Նա միանում է Խ. Սամուելյանի այն կարծիքին, թե դրանք ստրուկներ էին[1]։ «Ուշ հելլենիստական ժամանակաշրջանում, ֆեոդալիզացիայի պրոցեսի խորացմանը և կոլոնատի զարգացմանը զուգընթաց, ագարակի անմիջական արտադրողները... մշակները գնալով ավելի էին ամրացվում հողին։ Նրանք անցնում էին կցագրված կոլոնների և հողագործական ստրուկների դրությանը, իսկ նրանցով գրաղված հողերը (ագարակները) դառնում էին գյուղական բնակավայրեր»[2]։

Դաստակերտն իրենից ներկայացնում էր «կալվածք, կալվածատիրոջ մեծ տնտեսություն, վիլլա կամ օժանդակ շենքերով պալատ»։ «Դատելով մեզ հասած աղբյուրների հաղորդումներից,—գրում է Ս. Երեմյանը,— դաստակերտներում աշխատող անմիջական արտադրողները նշանակվում են **ծառայ** տերմինով»[3]։ Հաճախ դաստակերտները, հատկապես թագավորական դաստակերտները վերածվում էին քաղաքների, ինչպես էին, օրինակ, Տիգրանակերտը, Արշակավանը։ «Թագավորը կամ ավագանու և հոգևորականության մի խոշոր ներկայացուցիչ իր դաստակերտում բնակեցնում էր արհեստավորներ ու վաճառականներ, վերապահելով նրանց որոշակի

---

[1] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, М., 1, էջ 14։

[2] Նույն տեղում, էջ 14։

[3] Նույն տեղում, էջ 15։

իրավունքներ ու արտոնություններ՝ «ըստ պայմանի քաղաքականաց» և այլն[1]։

Ագարակի և դաստակերտի նման սահմանումները շատ կետերով ընդունելի են, սակայն նրանց բնութագրական որոշակի տարբերակումը թուլացնում է հեղինակի այն եզրակացությունը, թե ագարակին հավասարազոր է եղել դաստակերտը, թե «ագարակի ու դաստակերտի միջև տարբերություն չի եղել»[2]։

Ս. Հակոբյանը թեև ընդունում է որոշ թվով ստրուկ-աղա-մախինների ներկայությունը ագարակներում և դաստակերտներում, բայց Հ. Մանանդյանի նման կտրականապես ժխտում է դրանց ստրկատիրական բնույթը։ Ընդսմին, ընտրելով փոքր ինչ անսպասելի ուղի, պնդում է, թե միջնադարյան հայ մատենագիրները, «ավան, շեն, ագարակ, գյուղ գործ են ածում միևնույն իմաստով և նշանակությամբ»[3]։

Այդ թեզը հիմնավորելու համար հեղինակը քաղվածքներ է բերում աղբյուրներից՝ հենվելով այն փաստի վրա, որ վերոհիշյալ տերմինները այնտեղ հաճախ հանդես են գալիս միասնաբար։ Այնուհետև նույն բանը կատարում է դաստա-

---

[1] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1, էջ 19։

[2] Հատկապես Ս. Երեմյանը փաստորեն հրաժարվել է այս եզրակացությունից, համարելով ագարակը ոչ թե դաստակերտ, այլ դաստակերտին կից բնակավայր։ Տե՛ս Очерки по истории СССР, М., 1958, էջ 308։

[3] Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Վաղ ֆեոդալիզմի շրջան, Երևան, 1947, էջ 231։ Հեղինակը բերում է Ագաթանգեղոսից Տրդատ III-ի հրովարտակի սկիզբը, ուր թագավորը դիմում է «...առ այլ մարդիկ, որ ընդ իմով իշխանութեամբ էք, յաւանս, ի շէնս, ի գիւղս, յագարակս, առ ազատս և առ շինականս...» և ընդգծում, որ այստեղ հիշատակված լինելով Հայաստանի բոլոր դասերը, ստրուկների մասին ակնարկ անգամ չկա։ Վերջին փաստը անժխտելի է, բայց միևնույն ժամանակ այդ հանգամանքը մեզ միանգամայն բնական է թվում, և բերված հատվածից բնավ չի երևում, թե ագարակները բնակեցված էին շինականներով։ «Մարդիկ... յագարակս»՝ հավանորեն ագարակատերերն են, տվյալ դեպքում, ըստ երևույթին, ազատները։

կերտների նկատմամբ՝ բերելով համանման կոնտեքստներ։ Հեղինակը բազմաթիվ էջեր նվիրելով հիշյալ քաղվածքներին, այնուամենայնիվ լռությամբ է շրջանցում Մխիթար Գոշի հենց այն ցուցումը (Դատաստանագիրք, II, 1), որը պետք է ամենից առաջ վկայաբերել՝ գյուղերի և ագարակների տարբերության կամ նմանության մասին խոսելիս։ Հեղինակը օգտվել է նաև Աստվածաշնչի հայերեն թարգմանության ընձեռած տվյալներից, սակայն այդ տվյալները իրականում խոսում են նրա կարծիքի դեմ։

Ծանոթանանք հետևյալ աղյուսակին, որի մեջ հանրագումարի են բերված Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ հետաքրքրող տերմինների գործածության բոլոր դեպքերը և նրանց հարաբերակցությունը «Յոթանասնից թարգմանության» (Սեպտուագինտայի) համապատասխան տերմինաբանության հետ։

| հունական / հայկական | χώρη | ἀγρός | ἔπαυλις | χωρίον | այլք | չկա Սեպտուագինտայում | ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| աւան | 36 | — | 7 | — | 1 | — | 44 |
| գեւղ<br>գիւղ<br>գեօղ | 38 | 2 | — | 10 | 3 | 1 | 54 |
| շէն | 4 | — | — | — | 4 | 1 | 9 |
| ագարակ | 2 | 80 | 8 | 1 | 2 | 4 | 96 |
| դաստակերտ | — | 2 | — | — | — | 1 | 3 |

Աղյուսակն անառարկելիորեն հաստատում է, որ աւան, գիւղ, շէն բառերի հիմնական նշանակությունը հայ թարգմանիչները համարել են χώρη — «գյուղ», իսկ ագարակ և դաստակերտ[1] բառերի հիմնական նշանակությունը՝ ἀγρός — «վարելադաշտ, կալվածք, կալվածատուն» և այլն և, հետևաբար,

[1] Ավելի ճիշտ՝ դաստակերտ-ը նշված երկու դեպքերից մեկում համապատասխանում է γεώργιον տերմինին, որը հոմանշանակ է ἀγρος տերմինին։

այդ տերմինների իմաստի ու նշանակության նույնության մասին խոսք անգամ չի կարող լինել[1]։

Նույնը նկատվում է նաև հայկական ինքնուրույն գրականության մեջ։ Ստորև մենք կծանոթանանք V դարի պատմական գրականությամբ, որը մեզ հետաքրքրող հարցի մա-

---

[1] Բերված պարբերությունը կապակցությամբ ծագում են մի շարք հարցեր։ Ինչն են նկատի ունեցել հայ թարգմանիչները, երբ χώρα բառը նրա օգտագործման դեպքերի համարյա կեսում թարգմանել են որպես «ուսան», իսկ մյուս կեսում՝ որպես «գեւղ»։ Կոնտեքստների քննությունը ցույց է տալիս՝ որ համարյա բոլոր դեպքում «ուսան»-ը հանդես է գալիս այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է այն χώρα-ներին, որոնք կազմում էին տվյալ քաղաքի հողային շրջակայքը, նրա մերձքաղաքային գոտին։ Մեկ դեպքում էլ «ուսան» բառով անուղղակիորեն թարգմանված է հունարեն τὴ περίπολις «քաղաքի շրջակայք» արտահայտությունը։ Ընդհանրապես «գեւղ»-ը հազվագյուտ բացառությամբ, հանդես է գալիս այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է կամ գյուղին, որպես այդպիսին, կամ քաղաքին հակադրված գյուղական վայրին։ Այդ տարբերությունը երևան է գալիս նաև «ուսան» և «գեւղ» բառերի ավելի հազվագյուտ համապատասխանությունների մեջ. «ուսան»-ը 7 դեպքում համապատասխանում է Սեպտուագինտայի ἔπαυλις բառին, իսկ այնտեղ այդ բառը նշանակում է հենց քաղաքամերձ բնակավայր կամ կալվածք։ Իսկ «գեւղ»-ը 10 դեպքում համապատասխանում է χωρίον բառին՝ «անդ, գյուղ, ամրոց»։

Մյուս կողմից ἔπαυλις բառը 8 դեպքում թարգմանվում է «ագարակ» բառով։ Կոնտեքստները չափազանց հետաքրքրական են։ Նախ 8 դեպքից 7-ը կենտրոնացված են Աստվածաշնչի ընդամենը մեկ, այն է՝ Հիսուս Նավինի որդու գրքում։ Երկրորդ, 5 դեպքում կոնտեքստը կրում է այսպիսի բնույթ՝ „X, Y քաղաքները, նրանց χώρα-ները և նրանց ἔπαυλις-ները“։ Ինչպես χώρα-ն նման կոնտեքստում, այնպես էլ ἔπαυλις-ը, Աստվածաշնչի մնացյալ գրքերում թարգմանված են «ուսան» բառով, բայց տվյալ դեպքում հարկ է եղել ընտրություն կատարել և թարգմանիչը իրավացիորեն նախապատվությունը տվել է χώρα-ին (ութը դեպքից մեկում—Հուդիթ, XV, 8—χώρα-ն թարգմանվել է «գեւղ» բառով), իսկ ἔπαυλις-ի համար ավելի հարմար թարգմանություն չի գտել, քան «ագարակը»։ Մնացած երեք դեպքում, „X քաղաքը և նրա ἔπαυλις-ները“ կոնտեքստով, որոնք գտնվում են վերը բերվածների արանքում, թարգմանիչը պարզապես չի կարողացել նահանջել մի անգամ արդեն իր ընդունած տերմինաբանությունից։

այն բավական առատ նյութ մատակարարելով հանդերձ, նաև ժամանակակից է Աստվածաշնչի թարգմանության և պահպանել է այդ տերմինների մեջ հասած ամենահին հիշատակությունները, հետևաբար և նրանց առավել անաղարտ նշանակությունները։

Այստեղ ագարակը հիշատակվում է երկու տասնյակից, իսկ դաստակերտը երեք տասնյակից ավելի անգամ՝ բազմազան կոնտեքստներում։ Վերջինները կարելի է բաժանել երկու խմբի, որոնցից առաջինում ուսումնասիրվող տերմինները հանդես են գալիս բնակավայրերի տեսակները թվարկելու կապակցությամբ, իսկ երկրորդում՝ բոլորովին անկախ, առանձին։

Առաջին խումբը բնութագրվում է այս կարգի օրինակներով։

Ագարակ տերմինի համար։ Տրդատ III-ը գրում է «առ այլ մարդիկ, որ ընդ իմով իշխանութեամբ էք, յաւանս, ի շէնս, ի գեօղս, յագարակս...» (Ագաթ., էջ 73)[1]. Ներսես կաթողիկոսը աղքատների համար իր հիմնած ապաստարաններին բաժանում է «զաւանս և ագարակս»՝ ապրուստի համար (Մ. Խոր., III, 20). Պարսից թագավորը հայ նախարարներին խոստա-

---

* Քննարկվող տերմինների թարգմանության մեջ եղած տարամիտումն մյուս գրքերը պետք է դիտել որպես սոսկ անհետևողականություն, որն անխուսափելի է տեքստի հնագույն ժամանակի և թարգմանիչների զգալի թվի պայմաններում, և որի բնորոշ օրինակ կարող է ծառայել մի գրքում πόλις—«քաղաք» բառի թարգմանությունը «գեւղ» բառով, մյուս գրքում ἐπαύλεις բառինը՝ «քաղաք»-ով և այլն։

Վերջին դիտողությունը չի վերաբերում «շէն» տերմինին, որը չորս գրքում համապատասխանում է κώμης բառին, մնացած գրքում հանդես է գալիս իր այլ նշանակությամբ՝ «շեն վիճակում գտնվող, բնակեցված» և համապատասխանում է οἰκουμένη, κατοικουμένη բառերին։

[1] Այստեղ և հետագայում Ագաթանգեղոսը վկայակոչվում է «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, Եղիշէն՝ «Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Երևան, 1957, Ղազար Փարպեցին «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904 հրատարակությամբ։

*նում է պարգևատրել «ագարակօք և մեծամեծ գեղօք» (Եղիշե, էջ 17). Հայերը լքում են «իւրաքանչիւր զգեղս, զաւանս և զագարակս» (Եղիշե, էջ 124) և այլն։*

*Դաստակերտ տերմինի համար։ Հայ իշխանները «Թողլով զիւրաքանչիւր արտս և զգիւղս և զդաստակերտս», գնում են Հայաստանի բյուզանդական մասը (Մ. Խոր, III, 42). Ամատունի նախարարական տոհմին Արտաշես թագավորը պարգևում է «գեղիւք և դաստակերտօք» (Մ. Խոր., II, 57). Ներսես կաթողիկոսը համոզում է նախարարներին դուրս չգալ Արշակ թագավորի դեմ, հիշեցնելով նրանց, որ հենց Արշակունիներից է գալիս նրանց ունեցվածքը՝ «...ոմանք (ի ձէնջ—Գ. Ս.) աւագ աւագ աւանաց գեղից և գանձուց տեարք լեալ էք, և ոչխապէս դաստակերտացն» (Փավստ., IV, 51) և այլն։*

*Բերում ենք V դարի պատմական գրականության մեջ հանդիպող այդ կարգի կոնտեքստների լրիվ ցանկը։*

| | |
|---|---|
| *Աւան, շէն, գեւղ, ագարակ* | *Ագաթ., էջ 73 և 436։* |
| *Աւան, գեւղ, ագարակ* | *Ագաթ., էջ 497, Եղիշե, էջ 124։* |
| *Աւան, ագարակ* | *Ագաթ., էջ 426 և 436։ Եղիշե, էջ 50. Մ. Խոր., II, 62, III. 20. III, 44։* |
| *Գեւղ, ագարակ* | *Եղիշե, էջ 17, 57 և 69. Ղազար Փարպեցի, էջ 37 և 54. Մ. Խոր., II, 56։* |
| *Գեւղ, դաստակերտ* | *Ագաթ., էջ 408, Մ. Խոր., II, 7. II, 57. II, 84. III, 22. III, 42 (երկու անգամ). III, 45. III, 51 (երկու անգամ)։* |
| *Շէն, դաստակերտ* | *Մ. Խոր., I, 7. III, 36։* |
| *Աւան, գեւղ, դաստակերտ* | *Փավստ., IV, 51։* |

*Ինչպես օրինակներում, այնպես էլ ցանկում, աչքի է ընկնում ագարակ և դաստակերտ տերմինների կոնտեքստների նմանությունը։*

Կոնտեքստներում, ինչպես այդ երևաց նաև Աստվածաշնչի թարգմանության տվյալներից, գյուղական համայնքի (κώμη) համար օգտագործված են տարբեր անվանումներ, որոնցից յուրաքանչյուրը, թերևս, նրա ինչ-որ տարատեսակն է[1]։ Աղբյուրներում դրանք հանդես են գալիս կամ բոլորը միասին, կամ երկուսով համատեղ, կամ առանձին-առանձին։ Այդ խմբին հակադրվում են դաստակերտն ու ագարակը, որոնք, ինչպես կարելի է նկատել, օրինակներից և ոչ մեկում չեն հանդիպում կողք-կողքի, այսինքն, մեկի ներկայությունը բացառում է մյուսի գործածությունը։ Այս հանգամանքը, կոնտեքստների նույնության պայմաններում, կասկած չի թողնում, որ բերված վկայություններում (իսկ դրանցով սպառվում է V դարի համապատասխան նյութը) ագարակ և դաստակերտ տերմինները փոխադարձաբար փոխարինելի են և, հետևաբար, նույնական են[2]։ Մեկի կամ մյուսի գործածության գերադասումը մնում է վերագրել այս կամ այն հեղինակի ճաշակին։ Գործի էությունը չի փոխվի, եթե հաշվի առնելով գոյություն ունեցող տարակարծությունները Խորենացու ժամանակի մասին, հրաժարվենք նրանից վերցված օրինակներից։ Կպակասի միայն օրինակների ընդհանուր գումարը։

Սկզբնաղբյուրներում ագարակ տերմինի կոնտեքստների մյուս խումբը, այսինքն՝ առանձին, ինքնուրույն գործածության դեպքերը վերևում ասվածին հակառակ ոչինչ չի մտցնում

---

[1] Գեղ-ի և շէն-ի միջև տարբերությունը չի հաջողվում որոշել, բայց երևույթին այն չնչին է եղել: Ավան-ը ծագում է պարսկական ahavana-ից (բնակավայր)։ Ի տարբերություն Աստվածաշնչի թարգմանության՝ պատմական գրականության մեջ այն, քաղաքի արվարձանին զուգահեռ, հաճախ նշանակում է նաև առանձին բնակավայր, մեծ գյուղ, որը հակում ունի վերաճելու քաղաքի։ Ագաթանգեղոսի հունարեն տեքստում այն հաղորդված է κωμόπολις—«գյուղաքաղաք» տերմինով. (տե՛ս Agathangelus, hrgg. von Paul de Lagarde, Göttingen, 1887, էջ 76):

[2] Հմմտ. С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении. ВДИ, 1950, № 1, էջ 16, հեղինակը վկայակոչում է նաև այն փաստը, որ Սողոմոնի առակների հայկական վերսիայի «դաստակերտ» տերմինին վրացական վերսիայում համապատասխանում է «ագարակ» տերմինը։

(տե՛ս Ագաթ., էջ 41, Փավստ., III, 16 և III, 19)։ Նույնը կարելի է ասել նաև դաստակերտ տերմինի նոր կոնտեքստների մի մասի վերաբերյալ։ Այսպես՝ Ագաթանգեղոսը (էջ 406) հաղորդում է, որ Տրդատ III թագավորը եկեղեցուն նվիրեց իր կործանած հեթանոսական տաճարի դաստակերտները՝ նրանց սպասավորների, հողերի, սահմանների հետ միասին[1]։ Մովսես Խորենացին (II, 42, 46) նկարագրում է Երվանդակերտ դաստակերտը՝ Երվանդ թագավորի կառուցած տնտեսական կոմպլեքսը։ Նա պատմում է նաև, որ գերի մարերը բնակեցվել էին մի շարք դաստակերտներում, և հականե-հանվանե նշում է նրանցից չորսը (I, 30)։

Կան նաև դաստակերտ բառը փոխաբերական իմաստով գործածելու դեպքեր։ Եղիշեն վկայում է, որ հայ նախարարները Թեոդոս կայսրին ուղղված նամակում նշել են, որ հասմեացիները, Արևելքում իրենց բարձր փառքի և իշխանության ժամանակաշրջանում, ամբողջ Հայաստանը կոչել են «դաստակերտ մեծ և սիրելի» (էջ 72)։ Ագաթանգեղոսի մոտ Տրդատ III-ը նույն այդ իմաստով Հայաստանը կոչում է «դաստակերտ կայսերաց» (էջ 73)։

Սակայն հանդիպում ենք այսպիսի մի դեպք։ Եղիշեն պատմում է, թե ինչպես Ավարայրի ճակատամարտի զոհերի տեսիլքը ներկայանում է պարսկական մի մոգի և թե ինչպես մոգը, այդ տեսիլքից ցնցված, քրիստոնեական հավատ է ընդունում։ Հայերը այդ մոգին կոչում էին աստծո նորաստեղծ դաստակերտ (էջ 152 և 169)։ Միանգամայն ակներև է, որ տվյալ դաստակերտը ոչ մի կերպ չի տեղավորվում վերը բերված կոնտեքստներում և հանդես է գալիս իր սկզբնական նշանակությամբ՝ «ձեռակերտ», ձեռքով ստեղծված (=պարսկ. աքեմ. dastakarta, պարթ. dastkart)։ Այս ցայտուն դեպքը հնարավորություն է տալիս ճանաչել դաստակերտ բառի գործածության այդպիսի նշանակությունը նաև մի շարք այլ, ոչ

[1] Սրանց կողքին հիշատակվում են նաև «քուրմեր»։ Այս մասին տե՛ս Ա. Գ. Փերիխանյանի հետաքրքրական դիտողությունը (Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959, էջ 130 և հետ.)։

այդ չափ պարզ, դեպքերում։ Այսպես, երբ Խորենացին պատմում է, որ Շամիրամը քաղաքի շրջակայքը զարդարեց «դաստակերտօք, ռաղարթիւք ծառոց» (I, 16), ապա մենք հնարավորություն ենք ստանում «դաստակերտ-ագարակ» տվյալ դեպքում անհամապատասխան նշանակությունը կոնտեքստի վրին չփաթաթելով, դաստակերտին տալ «ձեռքով ստեղծված» իմաստը և դրա տակ այս դեպքում հասկանալ այն, ինչ կարող է զարդարել մի քաղաքի շրջակայքը՝ պարտեզներ, ջրավազաններ, հուշարձաններ և այլն։ Նույնը վերաբերում է նաև Մովսես Խորենացու մի այլ հաղորդմանը, որի համաձայն, Հայկը դաստակերտ շինեց իր շահած ճակատամարտի տեղում (I, 11)։

Այդ ուղին բռնելով մենք նաև հնարավորություն ենք ստանում ճիշտ հասկանալու այն հաղորդումները, որոնց մեջ քաղաքները, որևէ մեկի կողմից հիմնված, կառուցված լինելու առթիվ, անվանված են դաստակերտ։ Փավստոս Բուզանդը նոր հիմնված Արշակավան քաղաքը անվանում է Արշակ II-ի դաստակերտ (IV, 12), Մ. Խորենացին (I, 14) դաստակերտ է անվանում Մաժաք (Կեսարիա) քաղաքը, Մշակի կողմից այն կառուցված լինելու կապակցությամբ (I, 14)։ Դրասխանակերտը, որը ըստ Եղիշեի տվյալների (էջ 79), ուներ իր գյուղերն ու ավանները, այսինքն քաղաքի իրավավիճակում էր գտնվում, Մովսես Խորենացին անվանում է «Մեծ դաստակերտ Սրտաշխի» (II, 90)։ Եթե մենք նշված դեպքերում տեղադրենք բառի ἀγρός, γεωργός նշանակությունը, ապա, մի կողմից՝ ճիշտ պատկերացում չենք կազմի քաղաքներ հիմնելու ակտի մասին, իսկ մյուս կողմից՝ դաստակերտ-ագարակի՝ մասնատիրական տնտեսության, կալվածի հասկացությունը կզրկենք հստակությունից ու որոշակիությունից և նրան կվերագրենք

[1] Մեր օրերում հին ժամանակներից պահպանված բացահայտելիս, պետք է առանձին ուշադրություն դարձնել նման սահմանագատումներին, քանի որ բնակչության կազմակերպման՝ ստրկատիրության դարաշրջանին հատուկ ձևերի անհետ համընթաց, հենց կյանքում տեղի է ունեցել և գրականության մեջ էլ արտացոլվել է.

այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ են քաղաքներին՝ բնակչության արտոնվածություն և այլն։

Որ «ձեռքով ստեղծված» իմաստը դաստակերտ բառի մեջ շարունակում էր ապրել հայկական հողի վրա, անվիճելիորեն հաստատվում է նրա տառացի թարգմանություն հանդիսացող «ձեռակերտ» տերմինի զուգահեռ գործածությամբ, մասնավորապես Մովսես Խորենացու մոտ։ Ահա այն դեպքերը, որոնց վերաբերում է խոսքը։ Արշակավանի հիմնադրման առթիվ հեղինակը գրում է. Արշակը «ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց ձեռակերտ» (III, 27, տես նաև III, 29 և 31)։ Գեղամը «ի ձորակի միում ամրոց շինէ ձեռակերտ մի», որը հետագայում անվանվեց Գառնի (I, 12). «Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերտ»—այսպես է վերնագրված Երվանդ Թագավորի կողմից Երվանդակերտի ստեղծման վերաբերյալ գլուխը. Երվանդակերտը տեքստում արդեն անվանված է դաստակերտ (II, 42)։ Բագարանում վերցված ատրուշաններին Սմբատը «տարեալ բնակեցուցանէ ի թիկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն» (II, 48)։ Ամենուրեք «ձեռքով ստեղծված» իմաստը պարզորոշ դրսևորվում է, իսկ Աստվածաշնչի թարգմանության մեջ «ձեռակերտը» հենց ուղղակի փոխարինում է Սեպտուագինտայի τὰ ἔργα χειρῶν —«ձեռքերի գործեր» արտահայտությանը (Սաղմ., VIII, 7)։

---

նրանց հատկանիշների իրական խառնում։ Օրինակ՝ դաստակերտ-ագարակները փոխարկվել են բնակավայրերի ու ավանների, քաղաքները՝ գյուղերի և այլն, և, այդ ամենից՝ նոր ֆեոդալական ձևեր են կազմավորվել։ Հնամենի տրադիցիաների և նոր տենդենցների այդպիսի խառնուրդի տիպիկ օրինակ են պատկերում Սեբեոսը և Հովհաննես Դրասխանակերտցին՝ Ներսես կաթողիկոսի կողմից VII դարում կառուցված Զվարթնոց տաճարի և նրա շուրջը հիմնված ու «ըստ պայմանի քաղաքականաց», այսինքն արտոնյալ մարդկանցով, բնակեցված վայրի նկարագրության մեջ։ Հենց այդ հաղորդումները Հ. Մանանդյանին դաստակերտների բնակիչներին արտոնյալ վիճակ վերագրելու համար հիմք են ծառայել, թեև, ի դեպ ասած, Զվարթնոցի կոմպլեքսը նրանց մեջ դաստակերտ չի էլ անվանված (տես Я. А. Манандян, Проблема..., „Истор. зап.", № 15, 1945, էջ 5 և հետ.։ Հմմտ. С. Т. Еремян, О рабстве и рабовладении... ВДИ, 1950, М., 1, էջ 10)։

Խորենացուց բերված վերջին երկու օրինակները ցույց են տալիս, որ դաստակերտ-ագարակն էլ, ի թիվս մյուս օբյեկտների, կարող է կոչվել ձեռակերտ, բայց միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է նրա ստեղծմանը, հիմնադրմանը: Այդ պատճառով էլ միանգամայն բնական է, որ մեր կողմից առաջին խմբին դասված կոնտեքստներում, որտեղ խոսքը վերաբերում է ոչ թե դաստակերտ-ագարակների հիմնադրմանը, այլ նրանց տիրապետմանը, նրանց նվիրաբերմանը, բռնագրավմանը և այլն, ձեռակերտ բառը երբեք չի փոխարինում դաստակերտ բառին:

---

[1] Նույն այդ երկու նշանակություններին հանդիպում ենք և վաղ սասանյան՝ մ. թ. III դարի աղբյուրում: Շապուհ I-ի հունարեն արձանագրության մեջ կարդում ենք. «...ինչպես մենք աստվածների կարիքների ու պաշտամունքի մասին ջերմեռանդ հոգում ենք և աստվածների ստեղծագործություն (κτίσμα τῶν θεῶν) ենք համարվում ու աստվածների օգնությամբ բոլոր այն ժողովուրդներին նվաճած ենք... նույնպես և նա, ով մեզնից հետո կլինի, թող ջերմեռանդ հոգա աստվածների կարիքների ու պաշտամունքի մասին, որպեսզի աստվածները նրան օգնական լինեն և նրան իրենց դաստակերտ (δαστακερτ) դարձնեն...» (E. Honigmann et A. Maricq, Recherches sur les Res gestae divi Saporis, Academie Royale de Belgique, Classe des lettres et des sciences morales et politiques. Mémoires, Tome XLVII. Fascicule 4., Bruxelles, 1953, տող 68): Տեքստի զուգահեռական կառուցվածքը պարզ ցույց է տալիս, որ երկրորդ նախադասության «իրենց դաստակերտը դարձնեն» արտահայտությունը համապատասխանում է առաջին նախադասության «աստվածների ստեղծագործություն ենք համարվում» արտահայտությանը: Դաստակերտ բառի այդ իմաստը հաստատված է նույն արձանագրության 37-րդ տողում: Պարզ չի սակայն, թե կոնկրետ ինչ իմաստ է դրել արձանագրության հեղինակը «աստվածների ստեղծագործություն (կամ դաստակերտ) լինելու (կամ դառնալու)» մեջ: Արձանագրության 60-րդ տողում «դաստակերտ» տերմինը հանդես է գալիս այլ իմաստով՝ այն նշանակում է, որքան մի ամբողջ երկիր (ինչպես Եղիշեից ու Ագաթանգեղոսից վերհիշված բերված օրինակներում): Այս խնդիրների մասին տե՛ս նաև A. Maricq, Classica et orientalia. 5. Res Gestae divi Saporis. „Syria", XXXV, № 3—4, 1958, էջ 314—315: Դաստակերտի «մասնատիրական տնտեսություն» իմաստի մասին՝ «Մատիկան է հազար դատաստան» սասանյան շրջանի աղբյուրում, որն արտացոլված է նաև պարթևական ժամանակի իրավիճակը, տես ներքևում՝ էջ 41:

Այսպիսով, մենք հանգում ենք այն եզրակացության, որ V դարի պատմական գրականության մեջ դաստակերտ բառը ունի երկու նշանակություն[1]։

1. Դաստակերտ-ձեռակերտ — որևէ մեկի կողմից նորաստեղծ ինչ-որ բան, մեկի ձեռքի ստեղծագործություն։

2. Դաստակերտ-ագարակ — վարելահող, կալվածք, կալվածատուն, բնակավայր։

Երկրորդ նշանակությունը պատմականորեն ծագում է առաջինից։ Իրավացի է Ս. Երեմյանը, որը հայերենում դաստակերտ տերմինի երևան գալը վերագրում է այն ժամանակաշրջանին, «երբ զինվորական ավագանին յուրացնում և կենդանացնում էր ապարդյուն մնացած հողերը, որոնց վրա չէր տարածվում գյուղական համայնքների տիրապետման իրավունքը»[1]։

Պարթևական փոխառությունները հայերենում սովորաբար վերագրում են Արշակունիների դինաստիայի ժամանակաշրջանին, բացառված չէ, սակայն, որ առանձին բառեր կարող էին ավելի վաղ շրջանում մտած լինել։ Հայաստանում դաստակերտ տերմինի երևան գալու ժամանակը պարզելու համար որոշ հենարան կարող է ծառայել քաղաքների անունների «-կերտ» վերջավորությունը, որը նույնպես փոխառված է պարթևերից։ Հայաստանում այդ վերջածանցով կազմված թերևս ամենահին տեղանուններն են Երվանդակերտը (մ. թ. ա. III դ. վերջը)[2] և Կարկաթիոկերտը (ավելի ճիշտ Արկաթիոկերտ) Ծոփքում (մ. թ. ա. II դ. առաջին քառորդը)[3]։ Այս ժամանակը «դաստակերտ» տերմինի՝ Հայաստան մուտքի համար կարող է ծառայել որպես terminus ante quem non.

Հողի մասնավոր սեփականության զարգացման կապակցությամբ մասնատիրական տնտեսությունների առաջացման

---

[1] С. Т. Еремян, О рабстве и рабовладении... ВДИ, 1950, № 1, էջ 70։

[2] Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин. М., 1960, էջ 22 և հետ., 41։

[3] Նույն տեղում, էջ 44։

պլույեսի ամեղացումը կարելի է ոչ առանց հիմքի կապել մոտավորապես այդ նույն ժամանակների հետ, նկատի ունենալով Արտաշես I-ի հողային ռեֆորմները (մ. թ. ա. II դ. առաջին կեսը)։ Վերջիններիս հուշարձաններ են հանդիսանում արամեական արձանագրություններ կրող սահմանաքարերը, որոնք, առայժմ հինգ օրինակ, գտնվել են Սևանա լճի մոտերքում։ Մեզ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում այդ սահմանաքարերի՝ Խորենացու տված բացատրությունը։ Խորենացին լավ ծանոթ էր դրանց և գիտեր, որ դրանք դրվել են Արտաշես Թագավորի կողմից։ Նա պնդում է, որ դրանցով որոշվել են «սահմանս գեղից և ագարակաց», այսինքն՝ համայնական և մասնավոր հողերի։ Այսպիսով, հնարավոր է, որ V դարում դաստակերտ տերմինը Հայաստանում ուներ արդեն հինգ-վեց հարյուր տարվա պատմություն[1]։

Հին Հայաստանում դաստակերտների ու ագարակների մասին մեր պատկերացումների հիմքում ընկած է Թագավորական դաստակերտ Երվանդակերտի նկարագիրը, որ տվել է Մովսես Խորենացին։

«Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն Երուանդ գեղեցիկ և շքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ։ Իսկ շուրջ զմարդկութեամբ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական։ Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանանց խիտ և գեղեցիկ ծիրն. որոյ հիւսիսային կողմանն զեր կարակնաձև արդարև գեղաւոր կուսից յօնից զարաւանդայ համեմատ։ Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն։ Իսկ գետն բերանացեալ զարաւանդօք ափանցն՝ զերկթերթիւն նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեց-

---

[1] Հաշվի առնելով դաստակերտ և ագարակ տերմինների սերտ կապը, կարելի է ենթադրել դրանց պատմական հետևյալ զարգացումը։ Հայերենում ավելի հին ագարակ տերմինին (որը սկզբնապես նշանակել է միայն «վարելադաշտ», տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի արմատա-

վութեան գիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ Թագաւորանիստն ըՀայեցուածոն ունի. և արդարև բերդի և Թագաւորական դաստակերտն» (II, 42)։

Մեզ համար միանգամայն պարզ է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե կոնկրետ դաստակերտի նկարագրության, այլ դաստակերտների մասին Խորենացու պատկերացումների հետ, բայց սա էլ քիչ արժեք չունի[1]։

---

կան բառարան) որպես արոշիչ ավելացրել է դաստակերտ («ձեռքով ստեղծված» իմաստով), և դրանք երկուսը «դաստակերտ-ագարակ» («ձեռքով ստեղծված վարելահող») բառակապակցությամբ նշանակել են միայն նոր յուրացված մշակութային հող, ապա սկսել են գործածվել նաև գյուղ-գյուղ միևնույն օբյեկտը նշանակելու համար: Հետագայում, այդ հողերի՝ մասնավոր կալվածատիրությունների ու բնակավայրերի աստիճանական փոխարկման համընթաց, նրանց հետ կապված դաստակերտ ու ագարակ տերմինները էլ աստիճանաբար կորցրել են իրենց իմաստի «նոր յուրացվածություն», «ձեռքով ստեղծվածություն» երանգը: Այդ վիճակում էլ մենք հանդիպում ենք նրանց V դ. աղբյուրներում: Բացի այդ բոլորից, սակայն, դաստակերտ տերմինը զուգահեռաբար պահպանել է նաև իր սկզբնական իմաստը: Այդ երևույթը կարելի է պարզաբանել արդի հայերենից վերցրած հետևյալ օրինակով. «տնամերձ հողամաս» արտահայտությունից զատվել է «տնամերձ»-ը, որը փոխարինում է ամբողջ արտահայտությունը, փաստորեն կորցնելով իր սկզբնական նշանակությունը, որովհետև այդպես անվանվող հողամասը կարող է ամենևին ոչ տանը մերձ, այլ տնից բավական հեռու լինել: Բայց միևնույն ժամանակ «տնամերձ» բառը այլ արտահայտություններում պահպանում է նաև իր «տանը մոտ», «տան կողքին գտնվող» իմաստը:

[1] Ներկա դեպքում, մեր կարծիքով, միանգամայն հավաստի է երևում ամբողջ նկարագրության հիմքում ընկած այն փաստը միայն, որ այն վայրը, ուր տեղադրվում է Երվանդակերտը, կրում էր այդ նույն անունը դեռևս Խորենացու օրոք: Սա ինքնին մի շատ կարևոր ցուցում է, քանի որ դրա հիման վրա մենք կարող ենք եզրակացություն անել, ինչպես այդ արել է նաև Խորենացին, որ տվյալ վայրը իր ժամանակին եղել է Երվանդյանների դինաստիայի շինարարական գործունեության ասպարեզ: Մեր եզրակացությունը Խորենացու եզրակացությունից կտարբերվի միայն նրանով, որ մենք Երվանդյաններին կդնենք մ. թ. ա. III դարում, մինչդեռ Խորենացին սխալ կերպով Երվանդին համարել է Ֆլավիոսների ժամանակակից:

Խորենացու վերոհիշյալ նկարագրությունը, պերճ և գունեղ համեմատություններից զատված, ասում է այն մասին, որ դաստակերտ անվանվող անտեսական կոմպլեքսի միջին մասը հատկացվում էր հողագործների բնակարանների համար, իսկ դրանց շուրջը դասավորված էին պարտեզները, խաղողի այգիները, վարելադաշտերը և այլն։ Այստեղ էր գտնվում նաև տիրոջ, տվյալ դեպքում՝ թագավորի աթոռանիստը։

«...Արքայակ. բերդի և թագաւորական դաստակերտին...», հանրագումարի է բերում Մովսես Խորենացին իր նկարագրությունը, ասես ընդգծելով, մի կողմից՝ նրա անտեսական բնույթը, իսկ մյուս կողմից՝ այն, որ այստեղ նա նկատի ունի ոչ թե որևէ, այլ հատկապես թագավորական, թագավորին վայել դաստակերտ։

Իրականում դաստակերտները կարող էին ունենալ տարբեր տեսք, մեծություն ու անտեսական ուղղվածություն։ Ագարակների բնույթի մասին եղած աղքատիկ տվյալները, որոնք ներկայացնում են դրանց մերթ որպես բնակավայր, ուր կառուցվել է եկեղեցի (Ագաթ., էջ 407, 426, 436), մերթ որպես պարզապես այգի (Փավստ., III, 19), վկայում են հենց այդ մասին։ Այդ նույնն է հաստատում այն պերճախոս փաստը, որ դաստակերտ-ագարակները պատկանում էին ամենատարբեր կարողության տերերի՝ թագավորին (Ագաթ., էջ 438. Մ. Խորենացի, II, 42. III, 22), նախարարներին (Փավստ., IV, 51. Եղիշե, էջ 17, 50. Ղազար Փարպ., էջ 37, 54. Մ. Խոր., II. 42. II, 57. II, 84. III, 42. III, 51), տաճարներին, նախ հեթանոսական, հետագայում՝ քրիստոնեական (Ագաթ., էջ 406. Փավստ., III, 16. III, 19), ոստանիկներին (Մ. Խոր., II, 7), ազատներին (Մովսես Կաղանկատվացի, էջ 102)[1], քաղաքներին (Եղիշե, էջ 69), ամրոցներին (նույն տեղում), ավաններին (Մ. Խոր., II, 52. III, 44), գյուղերին (Ագաթ., էջ 408)

---

[1] Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912։



393 - 3

և նույնիսկ՝ աղքատների ապաստարաններին (Մ. Խոր., III, 20)[1]:

Ովքե՞ր են աշխատել դաստակերտ-ագարակներում։ Այս հարցը, հաշվի առնելով աղբյուրների ներկայիս վիճակը, թերևս ամենադժվարինն է։ Խ. Սամուելյանը և Ս. Երեմյանը ագարակների աշխատողներին համարում են ստրուկներ, Հ. Մանանդյանը, ինչպես ասվեց, մերժում է այդ պնդումը, թեև նշում է ագարակների բնակիչների «նվաստացվածությունը»։ Նրա համար հիմք է ծառայել XII դարի հեղինակ Մխիթար Գոշի (Դատաստանագիրք, II, 1) հետևյալ նշումը. «Այրք քաղաքացիք առաւել քան զգեղջուկս պատուիցին և գեղջկաց նմանապէս առաւել պատիւ լիցի քան բնակչաց ագարակի...»։

Դատաստանագրքի այս հոդվածում արտացոլված հասարակության շերտավորումը ներկայանում է մեզ որպես մինչֆեոդալական հասարակական հարաբերությունների մնացորդ, որը, թերևս, ինչ-որ չափով, սրվել է նաև ֆեոդալական հասարակության կողմից։

«Քաղաքացիների» և «գեղջուկների» փոխհարաբերության հարցի մանրամասն քննությունը[2] մեզ բերել է այն եզրակացության, որ Գոշի Դատաստանագրքում նշված դրությունը հանգեցրած պատմական պրոցեսի սկզբում քաղաքի և գյուղի միջև, քաղաքի գերակշռության պայմաններում, գոյություն է ունեցել այնպիսի անտագոնիզմ, որը խիստ բնորոշ է ստրկատիրական հասարակության համար։ Այդ անտագոնիզմը արտացոլվել է նաև քաղաքացիների ու գեղջուկների մասին Մովսես Խորենացու հայտնի հաղորդման մեջ, որը, ի դեպ, դրական նմուշ է ծառայել Գոշի Դատաստանագրքի վերը բերված հոդվածի համար[3]։

---

[1] Այն դեպքերում, երբ հիշատակվում են դաստակերտ-ագարակների կոլեկտիվ տերեր՝ քաղաքներ, ավաններ, գյուղեր, պետք է կարծել, որ խոսքը վերաբերում է այդ կոլեկտիվների անդամների՝ քաղաքացիների կամ համայնականների հողային սեփականության ամբողջությանը:

[2] Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 102 և հետ.:

[3] Նույն տեղում, էջ 103, ծանոթագր. 54:

Մեր կարծիքով, մոտավորապես նույնն է դրությունը նաև «գեղջուկների» ու «ագարակների բնակիչների» վերաբերմամբ։ Դաստակերտ-ագարակների և գյուղերի (շեների, ավանների) վերը նշված պարզորոշ սահմանազատումը այն բոլոր կոնտեքստներում, որտեղ նրանք հանդիպում են միասին, ցույց է տալիս արդեն, որ գյուղացիների համեմատությամբ ագարակների բնակիչների դրության «նվաստացվածությունը» գոյություն է ունեցել համենայն դեպս արդեն IV—V դդ. և ունի պատմական խոր արմատներ։ Այն ծագում է, վերջ ի վերջո, մինչֆեոդալական ժամանակաշրջանի դասակարգային հարաբերություններից։

Սեպտուագինտայի մեջ ἀγρός-ներում աշխատող հողագործները կոչվում են δοῦλοι (Մատթ., XIII, 27. Ղուկաս, XVII, 7), իսկ հայերեն թարգմանության համապատասխան տեղերում ագարակի աշխատողները կոչված են ծ ա ռ ա յ ք։ Այդ տերմինը սովորական է նաև հայկական պատմական գրականության մեջ, իսկ Խորենացին ուղղակի նշում է, որ ծառայ-ներին բնակեցնում էին դաստակերտներում (տե՛ս ներքևում, էջ 42)։ Մյուս կողմից՝ Աստվածաշնչի մեջ որպես ագարակների աշխատողներ հիշատակված են նաև մ շ ա կ ն ե ր ը (Սեպտուագինտայում՝ γεωργοί)։ Այստեղ հակասություն չկա, քանի որ δοῦλος նշանակում էր բոլոր կատեգորիաների ստրուկներ, ինչպես նաև ցանկացած տեսակի կախյալ մարդկի[1] և «ծառայ» տերմինը հանդիսանում է նրա շատ ճշգրիտ համարժեքը, իսկ «մշակը», ըստ երևույթին, եղել է ագարակի հողագործների համար յուրահատուկ անվանում, ճիշտ այնպես, ինչպես գյուղերի ու շեների հողագործները համապատասխանաբար կոչվում էին գեղջուկ և շինական։

Մշակ բառը ընդհանրապես նշանակում էր հողի մշակությամբ զբաղվող մարդ, հողագործ, շատ դեպքերում այն գործ

[1] Տե՛ս. Я. А. Л е н ц м а н, О древнеармянских терминах, обозначающих рабов. ВДИ, 1951, էջ 58. И. Д. А м у с и н, Термины, обозначающие рабов в эллинистическом Египте по данным Септуагинты. ВДИ, 1952, № 3, էջ 56 և հետ.։

է ածված նաև փոխաբերական՝ կրոնական իմաստով, որպես «աստծո մշակ», ընդ որում պատկերներն ու համեմատությունները այդ գրքում միշտ վերցվում են դարձյալ հողագործության բնագավառից (Ղազար Փարպեցի, էջ 159. Ագաթ., էջ 63, 257, 340, 392 և ուրիշ., Փավստ., IV, 4 և ուրիշ.):

Սոցիալական գունավորում ունեցող կոնտեքստներից պարզվում է, որ մշակ կոչվել է ոչ թե ամեն մի հողագործ, այլ ուրիշի հողը մշակող հողագործը (Ագաթ., էջ 188, 313), ասենք, վարձու աշխատողը, որն իր աշխատանքի համար ստանում է դրամական վարձատրություն (Ագաթ., էջ 128. Մատթ., XX, 1, 2, 8): Թեև դաստակերտ-ագարակներում վարձու աշխատանքի կիրառումը միանգամայն հնարավոր էր, սակայն մեծ մասամբ բնակավայրի կերպարանք ստացած այդ տնտեսությունների բնույթը թույլ է տալիս ենթադրել, որ նրանց հիմնական արտադրողները վարձու աշխատողներ չեն եղել, որ վարձու աշխատանքը այդտեղ կարող էր ունենալ միայն լրացուցիչ, սեզոնային բնույթ:

Կան նաև մշակ բառի այնպիսի կոնտեքստներ, որոնք տեղիք են տալիս տիրոջ ու մշակի միջև եղած հարաբերության շատ լայն մեկնաբանության, սկսած վարձակալական հարաբերություններից մինչև ճորտական կախումը: Օրինակ՝ «...Իմ է այգին, և դուք էք մշակքն. և ես եկի, զի ես իմ ժառանգ այգւոյն, եկի խնդրել զպտուղ այգւոյն զի տայց...» (Ագաթ., էջ 223, հմմտ. Մատթ., XXI, 41, Ղուկաս, XX, 9):

Շատ ավելի որոշակի է այն տեղեկությունը, որ տալիս է Ղ. Փարպեցին (էջ 105 և հետ.) պարսիկների ձեռքն ընկած երկու հայ հոգևորականների ճակատագրի մասին: Նրանց առաջարկված է եղել զրադաշտոն ընդունել, իսկ հրաժարվելու դեպքում, թագավորի վճիռն է եղել՝ «...պատուհասս կրեսցեն խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակս և ի հարկի[1] կայցեն մինչև ցվախճանն իւրեանց»:

---

[1] «Ի հարկի», «ընդ հարկիւ» արտահայտության կապակցությամբ տարակարծություններ գոյություն ունեն Ն. Ադոնցի, որը իմաստավո-

Քանի որ նրանք խնկարկելուց հրաժարվում էին, ապա «...կտրեալ երկոցունց զականջսն՝ եւ տանել յԱսորեստան, ի գաւառն որ անուանեալ կոչի Տախուլ, կալ անդ նոցա ի հարկի և տանել մշակութիւն արքունի»։

Նրանցից մեկը մեռնում է, իսկ մյուսը տեղական քրիստոնյաների օգնությամբ ազատվում և վերադառնում է Հայաստան։ Նրանք «...զատեալն խրեանց և զայլս փախանակ ընդ հարկի նորա դրեցին յարքունիս ցխախճան նորա, և կատարեցին զկարգեալսն անվէհեր յաղագս նորա»։

Ղազար Փարպեցու այս պատմածը և՛ բովանդակությամբ, և՛ տերմինաբանությամբ լայն հնարավորություն է տալիս դատողությունների ու եզրակացությունների համար։ Սահմանափակվենք սակայն երկու դիտողությամբ։ Առաջին՝ տեքստից երևում է, որ պատժի էությունը, բացի ականջներից զրկելուց, ոչ թե աքսորելն է, այլ ազատ մարդկանց «արքունի մշակների» կատեգորիան փոխադրելը (հմմտ. մեծապարտների ստրկացման հնում ընդունված սովորույթը, ինչպես նաև «արքունի ստրուկների» կատեգորիան Հայաստանում՝ Փավստոս, IV, 17), իսկ այդ կատեգորիայի մարդիկ իրենցից ներկայացնում էին ոչ թե պարզ կրող աքսորյալներ, այլ արքունական տնտեսության մեջ անմիջական արտադրողների՝ հողագործների սոցիալական որոշակի խումբ։ Երկրորդ՝ տեքստը այդ սոցիալական կատեգորիայի վիճակը բնութագրում է որպես ստրկական կամ ստրկականին մոտ։

Մշակների մասին այս պատկերացումները վերագրելով Հայաստանի թագավորական և մասնավորական տնտեսու-

---

րում է այն «ի հնազանդութեան» («Армения в эпоху Юстиниана», էջ 180) և Հ. Մանանդյանի միջև, որը մեկնաբանում է այն որպես «հարկի տակ, ստրուկի տակ» («Ֆեոդալիզմը հին Հայաստանում», էջ 154 և հետ.)։ Հ. Մանանդյանի մեկնաբանությունը հիմնված է Փավստոս Բուզանդի «Պատմության» որոշ տվյալների վրա (V, 10, 11 և այլն.), որոնք չեն հակասում այդ մեկնաբանությանը, բայց և չեն կարող նրա անվերապահ հաստատումն ծառայել։ Իսկ ավելի կոնկրետացված Ն. Ադոնցի մեկնաբանությունը ավելի համոզիչ է երևում։

*թյուններին՝ դաստակերտ-ագարակներին, կստանանք այնտեղ աշխատող հողագործների սոցիալական դրության եթե ոչ լրիվ, գոնե մոտավոր բնութագիրը։*

*Այդպիսի բնութագրի համար կարևոր լրացում է հանդիսանում Ագաթանգեղոսի այն հաղորդումը, թե Տրդատ III թագավորը յուրաքանչյուր ավանում հոգևորականության համար առանձնացնելով չորս «հող երդոյ», չորսական նույնպիսի հողամաս էլ հատկացրել է ագարակներում (էջ 436)։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ ագարակներում ևս հողը բաժանվում էր «հող երդոյ»-ների, որ համայնական հողատիրության ազդեցության որոշակի դրսևորում է, սակայն այստեղ, մասնավոր հողատիրության պայմաններում, ի տարբերություն կոլեկտիվի անդամներին հողամասեր տալու համայնական կարգերի, տիրոջ խնդիրն է եղել ոչ թե արտադրողներին հողաբաժիններով բավարարելը, այլ ընդհակառակը՝ հողը արտադրողներով ապահովելը։*

*Ղազար Փարպեցու մի այլ հաղորդման մեջ նշված է, որ մշակներն ունեին իրենց տները (էջ 159), հետևաբար, և իրենց ընտանիքները։*

*Դաստակերտ-ագարակների բնակիչների նկարագրվող հատկանիշները հիշեցնում են Առաջավոր Ասիայում լայնորեն տարածված նյութական բարիքներ արտադրողների կատեգորիան՝ հողի վրա նստեցված ստրուկներին* (робы, посаженные на землю)։ *Բայց մի այլ ուսումնասիրող կարող է նրանց մեջ տեսնել նաև ճորտեր։ Առկա տեղեկությունները բավականաչափ հստակ չեն։*

*Սակայն պետք է նորից հիշեցնել, որ դաստակերտ-ագարակների և նրանց բնակիչների մասին մեր կողմից բերված բոլոր տվյալները, առանց բացառության, չեն անցնում V դարից այն կողմ և հիմնականում արտացոլում են այդ նույն ժամանակներում, կամ նաև նախընթաց հարյուրամյակում, այսինքն հին հայկական հասարակության ֆեոդալացման պրոցեսի ամենաինտենսիվ շրջանում եղած դրությունը։ Այդ տվյալները մեխանիկորեն նախընթաց դարերի վրա տարածելն,*

Իհարկե, անթույլատրելի է, բայց ակներև է, որ նրանցում արտացոլված դրությունը հանդիսացել է դրանից շատ առաջ ծագած և զարգացած պրոցեսների պատմական արդյունքը և, հետևաբար, որպես այդպիսին, կարող է մեզ նախադրյալ ծառայել այդ պրոցեսները ճանաչելու և բացահայտելու համար։

Սակայն այդ պատկերը դեպի պատմության խորքերը շարժելու վճիռ ընդունելու համար, այնուամենայնիվ անհրաժեշտ է ինչ-որ իրական հենարան ունենալ։ Այդպիսի հենարան մենք գտնում ենք, նախ՝ սահմանակից երկրների մասին նախահելլենիստական ու հելլենիստական ժամանակաշրջանների, ինչպես նաև մ. թ. առաջին դարերի համապատասխան տվյալների մեջ, երկրորդ՝ Մովսես Խորենացու պահպանած, թեկուզ և ուշ ժամանակների, բայց հին Հայաստանի շատ ավելի վաղ ժամանակաշրջանների պատմությունը լուսաբանել ակնկալող մի քանի ուղղակի տվյալների մեջ։

Մեր թվականությունից առաջ VIII—VII դդ. Ասորեստանյան տերության տերիտորիայում նկատվում է, մի կողմից՝ ստրկատիրության ուժեղ աճ՝ ի հաշիվ և՛ ռազմագերիների ու վերաբնակեցվածների, և՛ ազատ գյուղացիության ստրկատիրական հարաբերությունների մեջ ներգրավման, մյուս կողմից՝ մասսայական հեռացում ստրկատիրական տնտեսության «կլասիկ» ձևերից, որոնք հիմնված էին արտադրամիջոցներից լիովին կտրված ստրուկների աշխատանքի վրա[1]։ Այդ տիպի ստրուկների հետ մեկտեղ, լայն տարածում է ստանում մի նոր սոցիալական կատեգորիա՝ հողի վրա նստեցված ստրուկները։ Այդ ստրուկները, թվով 5—10-ական մարդ, ընտանիքներով, ապրել են թագավորին, տաճարներին, մասնավոր մարդկանց պատկանող ոչ-մեծ բնակավայրերում և կալվածներում։ Նրանք միշտ աշխատել են տիրոջ հողի վրա և, որպես կանոն, բանեցրել են տիրոջ անասունները։ Կատարել են որոշ պետական պարհակներ։ Նրանց կարելի էր վաճառել հողի հետ միասին[2]։ Բնութագրելով նրանց դրությունը, Ի. Մ. Դյա-

[1] Տե՛ս И. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, Л., 1949, էջ 109։

[2] Նույն տեղում, էջ 110 և հետ.։

կոնովը այն համեմատում է հռոմեական կոլոնների դրության հետ, վերապահությամբ, որ նկատի ունի «ոչ թե վաղ միջնադարի կոլոն-ճորտերին, այլ մեր թվականության առաջին դարերի այն ստրուկներին, որոնք բնակեցվում էին առանձին հողամասերի վրա՝ բահրային աշխատանք կատարելու, ձուլվելով կոլոն-վարձակալների հետ»[1]։

Տվյալների սակավությունը, նրանց անբավարար ուսումնասիրվածությունը հնարավորություն չեն տալիս ամբողջական գաղափար կազմել Աքեմենյան պետության մեջ ստրուկների շահագործման նույնպիսի մեթոդի տարածվածության աստիճանի մասին, սակայն անվիճելի է այն փաստը, որ պարսկական մեծատոհմիկների կալվածներում աշխատած ստրուկների մի մասն ուներ որոշ շարժական գույք, ընտանիք, հող ունենալու իրավունք[2] (համենայն դեպս՝ Բաբելոնիայում)։ Այդ կալվածներում հողը մշակվում էր ստրուկների հետ մեկտեղ նաև վարձակալների կողմից։

Հելլենիստական ժամանակաշրջանի հողային հարաբերությունների մեջ հետաքրքրող հարցի վերաբերյալ տվյալներ գտնում ենք Սարդ քաղաքի շրջակայքում հայտնաբերված Մնեսիմաքոսի հայտնի արձանագրության մեջ (մ. թ. ա. III դարի վերջը), որը կարևորագույնն է այդ կարգի սակավաթիվ վավերագրերից։ Արձանագրությունում խոսվում է մի կալվածքի մասին, որի կազմի մեջ մտնում են գյուղեր, կալվածատուն, հողաբաժիններ։ Անմիջական արտադրողներ են հանդիսանում գյուղացիները և ստրուկ-հողագործները։ Կալվածքի մի մասի վրա դրված են պետական հարկեր, մյուս մասը ազատված է դրանցից[3]։ Հելլենիստական ժամանակների ստրուկ-հողագործների մասին կան նաև մի շարք այլ տվյալներ։

---

[1] И. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, Л., 1949, էջ 118։

[2] Տե՛ս И. М. Дьяконов, Рабовладельческие имения персидских вельмоги, ВДИ, 1959, № 4, էջ 88 և հետ.։

[3] W. N. Buckler and D. M. Robinson, Greek Inscriptions from Sardes, I. „American Journal of Archaeology", XVI, էջ 12 և հետ.։ Արձանագրության թվագրումը մ. թ. ա. III դարի վերջով պատ-

Հայկական նյութը վերլուծելիս Ս. Տ. Երեմյանը ամենայն իրավամբ համեմատության համար բերում է այսպես կոչված «Բաբելոնյան Թալմուդի» տվյալները, որը բացառիկ հարուստ տեղեկություններ է պարունակում Իրաքի և սահմանակից երկրների մ. թ. առաջին դարերի սոցիալ-տնտեսական պատմության մասին։ Ըստ այդ տեղեկությունների, Իրաքում լայն տարածում ունեին մասնատիրական տնտեսությունները «դասկարտա դե աբդե» («դաստակերտ՝ ստրուկներով»), որոնք կարող էին ունենալ հարյուրավոր ստրուկ աշխատողներ։ Այդ դաստակերտներն օտարվում էին նրանցում աշխատող ստրուկների հետ միասին[1]։ Յու. Ա. Սոլոդուխոն նշում է այդտեղի ստրուկների շահագործման մեթոդների զարգացումը. նրանց կցում էին որոշակի հողամասի և պարտավորեցնում մշակել այն։ Սկզբնապես տերը որոշակի օրերին ստրուկներին տալիս էր «սաղրուսա» (довольствие) աշխատանքի դիմաց։ Հետագայում ստրուկներն սկսել են իրենց հողամասի բերքից բաժին ստանալ[2]։

Պակաս հատկանշական չէ հայկական դաստակերտների համեմատությունը[3] պարթևական «դաստակարտների» հետ, որոնց մասին տեղեկություններ պահպանվել են «Մատիկան է հազար դատաստան»-ում («Հազար դատավճռի մատյան»)[4]։ Այդ դաստակարտներում աշխատող ստրուկները անշահրիկները նույնպես բնակեցված էին հողի վրա, և դաստակարտների

---

կանում է լեհ գիտնական Տ. Զավադսկուն (տե՛ս Ա. Գ. Փերիխանյանի գրախոսականը, ВДИ, 1954, № 3, էջ 114 և հետ.)։

[1] Ю. А. Солодухо. Значение еврейских источников раннего средневековья для истории Ближнего Востока, „Советское востоковедение“, II, 1941, էջ 39, նույնը, К вопросу о социальной структуре Ирака, „Учение записки“, т. XIV, էջ 76։

[2] Նույն տեղում, էջ 77 և հետ.։

[3] Տե՛ս С. Т. Еремян, О рабстве и рабовладении..., ВДИ, 1950, № 1, էջ 17։

[4] А. Г. Периханян, К вопросу о рабовладении и землевладении в Иране парфянского времени, ВДИ, 1952, № 4, էջ 18 և հետ.։

օտարվում էին (ընծայվում, վաճառվում, անցնում էին ժառանգաբար) նրանց հետ միասին։ Այդ ստրուկները, որոնք սկզբնապես, հավանորեն, ապրուստ (довольствие) էին ստանում իրենց կատարած աշխատանքների դիմաց, ժամանակի ընթացքում հասան իրենց կողմից մշակվող հողաբաժնի բերքի մի մասն ստանալու իրավունքին, որը իրավաբանորեն ձևակերպվել է ստրուկին՝ նրան տրվելիք բերքի բաժնին համապատասխան մասով «ազատագրելու» վերաբերյալ ստրկատիրոջ դեկլարացիայով[1]։

Այս ամենը խոսում է այն բանի օգտին, որ հայկական դաստակերտ-ագարակների հողագործների մեծակը, եթե ոչ IV—V դարերում, ապա, համենայն դեպս, ոչ շատ հեռավոր անցյալում, պետք է համարել հողի վրա բնակեցված ստրուկների մեծակ։ Դրանով, հասկանալի է, չի բացառվում դաստակերտ-ագարակներում շահագործման նաև այլ օժանդակ ձևերի կիրառման հնարավորությունը. չպետք է մոռանալ, թե որքան բարդ պատկեր է ներկայացնում հողագործների շահագործումը հին աշխարհում, երբ այն լավ է արտացոլված աղբյուրներում։

Այն երևույթը, որ Հայաստանում ևս գործ ունենք ստրուկների հետ, խարսխվում է, մասամբ, ինչպես ասվեց, նաև Մովսես Խորենացու որոշ տվյալների վրա։ Վկայաբերելով «Ողիւմպ քուրմ Հանեայ գրոց մեհենական պատմութեանց»-ին, Խորենացին հաղորդում է, որ գահի հափշտակիչ Երվանդի պարտությունից հետո Սմբատը՝ Արտաշես արքայի զորավարը, առնելով Բագարանը, Երվանդի եղբոր՝ քրմապետ Երվազի աթոռանիստը, բռնագրավեց նրա գանձերն ու 500 ստրուկներին (ծառայ-ներին)։ Այդ բոլորը ներկայացնելով Արտաշեսին, Սմբատը իբրև նվեր ստացավ հիշյալ ստրուկներին, որոնց և «տարեալ բնակեցուցանէ ի թիկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն» (II, 48)։ Մովսես Խորենացու այդ տեղեկություններին առնչվում են նրա ու-

[1] А. Г. Периханян, К вопросу о рабовладении и землевладении в Иране парфянского времени. ВДИ, 1952, № 4.

բից տվյալներ են։ Նույն Սմբատը հյուսիսային արշավանքի ժամանակ վերցրած ռազմագերիներին Թագավորի հրամանով բնակեցրեց Մասիսի արևելյան լանջում (II, 52)։ Դեպի արևելք կատարած արշավանքի ժամանակ վերցված գերիներին Արտաշեսը նվիրեց Սմբատին, որը գժտվելով արքայորդի Արտավազդի հետ, քաշվեց Հայաստանի հարավային ծայրամասը, Տմորիք գավառում գտնվող իր տերությունը, որտեղ և, Ալկի վայրում, բնակեցրեց գերիներին (II, 58)։ Համրագումարի բերելով Արտաշեսի այդ և մյուս արշավանքների արդյունքները, Խորենացին գրում է, որ Թագավորը «հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհն Հայոց բազում ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս» (II, 56)։

Հայոց աշխարհում օտարերկրացիների բնակեցումը սերտորեն կապելով համայնական և մասնատիրական հողերի որոշակի սահմանազատման անհրաժեշտության հետ, Խորենացին, անկասկած, նկատի ուներ այն հանգամանքը, որ վերաբնակեցվածները լրացնում էին հենց դաստակերտ-ագարակների բնակիչների շարքերը։ (Հմմտ. նաև Խորենացու հաղորդածը գերի մարերին դաստակերտներում բնակեցնելու մասին—I, 30)։

Խորենացու այս տեղեկությունները անուղղակի հաստատումն են գտնում Արտաշես I Թագավորի նվաճումների մասին Ստրաբոնի հաղորդմամբ (XI, 14, 5) և Տիգրան II-ի ժամանակ օտարերկրացիների զգալի զանգվածներ Հայաստան գաղթեցնելու մասին անտիկ պատմագրության բազմաթիվ տվյալներով։ Այդ կարգի տեղեկություններ կան նաև Տիգրան II-ի որդու՝ Արտավազդ II-ի ժամանակի մասին։ Նվաճված երկրների բնակչությունը տեղահանելու և Հայաստանում բնակեցնելու հետևողական քաղաքականությունը վկայում է հայ հին հասարակության այլ կարիքներից բացի, նաև ստրուկների թիվը համալրելու ձգտման մասին։ Ստրկական ուժը, անկասկած, լրացվում էր և այլ ճանապարհներով։ Այն, որ մենք տեղեկություններ ունենք հոմերյա բացառապես պատերազ-

մի միջոցով ստրուկներ ձեռք բերելու մասին, հազիվ թե նշանակում է, որ այդ միջոցը վերակշռող նշանակություն ուներ ներքին այն միջոցների (պարտային ստրկություն, տաճարներին նվիրատվություն, երեխաների վաճառք, ինքնավաճառք, հանցագործների ստրկացում և այլն) գումարի համեմատությամբ, որոնք լավ հայտնի են Հայաստանին սահմանակից[1] հին և հելլենիստական ժամանակաշրջանների, ինչպես նաև մ. թ. առաջին դարերի Միջագետքի, Ասորիքի, Փոքր Ասիայի համար։ Բանն այն է, որ Հայաստանի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները այլ բնույթի են, նրանք պահպանվել են ոչ թե վավերագրերում, այլ ուշ շրջանի մատենագրական աղբյուրներում։

Աղբյուրները մեզ թույլ չեն տալիս հին Հայաստանի գյուղատնտեսության մեջ ստրուկների շահագործման վերը նշված ձևերից ավելի հեռուն գնալ և բացահայտել նրանց նախորդած ձևերն ու մեթոդները։ Ս. Երեմյանը, ինչպես տեսանք[1], մշակների անցումը «գյուղատնտեսական ստրուկների» կամ, որ նույնն է, նրանց բնակեցումը հողի վրա, կապում է «ֆեոդալացման պրոցեսի խորացման» հետ[2], որը, նրա պարբերացման համաձայն, տեղի է ունեցել մ. թ. II—III դարերում[3]։ Շահագործման նախորդած մեթոդների հարցը Ս. Երեմյանը ուղղակի ձևով չի դրել, բայց որոշ ակնարկներից կարելի է կռահել, որ նկատի ունի արտադրամիջոցներից բոլորովին զրկված ստրուկների անմիջական շահագործումը։

Կարիք չկա սակայն ստրուկներին հողին կցելու սկիզբը կապել անպայման հասարակության ֆեոդալացման հետ։ Այդ երևույթը, որի էությունն էր կալվածում կցված հողամասերի բերքի մի մասը ստրուկների կողմից օգտագործելու իրավունքը, որոշ գործիքների հատկացումը նրանց, ընտանիք ունե-

---

[1] Տե՛ս վերևում, էջ 19։

[2] С. Т. Еремян, О рабстве и рабовладении.., ВДИ, 1950, № 1, էջ 14։

[3] С. Т. Еремян, Рабовладельческое общество древней Армении (դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատ)։ М., 1953, էջ 40։

նալու թույլատվությունը և այլն, այսինքն նրանց համար, թեկուզ և նվազագույն, ինքնուրույնության հնարավորություններ ստեղծելը, ճիշտ է, նշանակում էր բացառապես արտատնտեսական հարկադրման վրա հիմնված կլասիկ ստրկատիրական շահագործման ճգնաժամ, սակայն այդ ճգնաժամի առաջին նշաններից մինչև ստրկատիրական հասարակարգի ճըգնաժամը և անկումը դեռևս շատ ու շատ հեռու էր։ Դեռ ավելին, հիշյալ նշանները սկզբնական պահերին ուղեկցվում էին ստրկատիրական սիստեմի զգալի աճմամբ ու ճյուղավորմամբ, որոնք արտահայտվում էին, ամենից առաջ, ստրկատիրական հասարակությունների աշխարհագրական արեալի ինտենսիվ լայնացմամբ, թույլ զարգացած ծայրամասային երկրներում նրա տարածմամբ։ Տվյալ դեպքում մենք նկատի ունենք հելլենիստական ժամանակաշրջանի պատմությունը, բայց համանման երևույթներ կան նաև և հին-արևելյան և հռոմեական պատմության մեջ։

Հայաստանում, որը ծայրամասային այդպիսի երկրներից մեկն էր, հողի վրա նստած ստրուկների շահագործման սիստեմի ծնունդը կարելի է վերագրել զգալիորեն ավելի հեռավոր ժամանակաշրջանի, քան ֆեոդալացման պրոցեսների խորացումը, այն կապելով Հայաստանը հելլենիստական աշխարհի զարգացման միասնական պրոցեսի մեջ ընդգրկելու հետ։ Ընդսմին Հայաստանում, ի տարբերություն զարգացած ըստրկատիրական երկրների, այդ սիստեմի ներքին ակունքները կարելի է տեսնել ոչ թե անպայման զարգացած «կլասիկ» ստրկատիրության տնտեսաձևերի մեջ, որոնք Հայաստանը հավանորեն երբեք չի էլ թևակոխել, այլ հենց արխաիկ նահապետական ստրկության պայմաններում, որոնք նրան հատուկ են եղել հելլենիստական շրջանի նախօրեին։ Ինչ վերաբերում է այս վերջին՝ նահապետական ստրկության նշված սիստեմին անմիջականորեն, «կլասիկ» փուլի շրջանցմամբ, փոխարկվելու հնարավորությանը, ապա այն ապահովված էր ստրկության երկու այդ՝ արխաիկ և ուշ, ձևերի միջև եղած որոշակի նմանության գծերով։

* * *

Ստրկատիրական հասարակության զարգացման այն ժամանակաշրջանը, երբ սկսվում և տարածում է ստանում ըստրուկների բնակեցումը հողի վրա, բնութագրվում է, բացի ծայրամասային երկրները ստրկատիրական աշխարհի մեջ ներառելուց, նաև ստրկատիրական սիստեմի ուռճացման այլ ուղղությամբ՝ ազատ բնակչության, ամենից առաջ, հողագործական բնակչության ներգրավմամբ շահագործման նրան հատուկ ձևերի ոլորտը: Այդ երկու հանդիպական պրոցեսները դեռ երկար ժամանակ ստրկատիրական հասարակության զարգացման այնպիսի ուղիներ էին, որոնք երկարացնում էին նրա կյանքը, և հետագայում միայն, հարյուրամյակներ հետո, հանգեցրին հողագործների դրության համահարթմանը ֆեոդալական կախվածության մակարդակի վրա:

Հռոմեական կոլոնատի զարգացումը կարող է ծառայել այդ պրոցեսների կլասիկ օրինակ: Սովետական մի շարք հետազոտողների կարծիքով, մ. թ. III դարում նրանք արդեն շատ հեռու էին գնացել: Այսպես, Ե. Մ. Շտաերմանը գրում է. «...այստեղ (խոշոր ագարակներում և լատիֆունդիաներում— Գ. Ս.) հիմնական արտադրողներ դառնում են ոչ թե ստրուկները, ...այլ հողի վրա նստած, տարբեր կատեգորիաների պատկանող աշխատողները, որոնց կատեգորիաների միջև սահմաններն արդեն սկսում են ջնջվել: Դրանք և ստրուկ՝ քվազի-կոլոններ էին, և կոլոններ, և արձակվածներ, և ինքվիլիններ, և ազատավարձուներ և այլն: Նրանք իրենց հողամասերում վարում էին փոքր տնտեսություն, ժամանակի մի մասը նվիրելով տիրոջ կամ խոշոր վարձակալի օգտագործման ներքո պահպանված հողի մշակմանը: Բերքի մի մասը մնում է նրանց ի սեփականություն, ինվենտարը գտնվում է նրանց տնօրինության տակ: Տիրոջ իշխանությունը նրանց նկատմամբ սահմանափակված է, կալվածքի հետ նրանց կապը գնալով ամրանում է: Ստրուկների համար այդ դրությունը նշանակում էր նրանց վիճակի որոշ մեղմացում, կոլոնների

*համար, ընդհակառակը՝ վիճակի վատթարացում: Ստրկատիրության ճգնաժամի պարզացմանը զուգընթաց, բանող ուժի կարիքի աճման համեմատ... ուժեղանում է կոլոնների կախումը, ըստ որում նրանց ստատուսի վրա գնալով ավելի մեծ ազդեցություն են գործում ստրկատիրական հասարակության նորմերը»*[1]:

*Այլ հետազոտողների կարծիքով, համահարթման պրոցեսը դեռ ավարտված չի եղել նաև VI—VII դարերում: «Ստրկատիրությունից ֆեոդալիզմին անցման ժամանակաշրջանում կոլոնատը գնալով ավելի ու ավելի է առաջատար դիրքեր գրավում Իտալիայի տնտեսական կյանքում: Կոլոնները այդ վավերագրերում (VI—VII դարերի Ռավեննյան Պապիրուսներում—Գ. Ս.) պատկերանում են որպես առավել տարածված և դրա հետ մեկտեղ կալվածքի հետ տնտեսապես զգալի չափով կապված՝ գյուղական կախյալ բնակչության կատեգորիա, թեպետև ստրկությունը դեռևս ամբողջովին չէր զիջել իր դիրքերը... Գնալով ավելի պարզ է ուրվագծվում այն ժամանակների սոցիալ-տնտեսական զարգացման տենդենցը, որը արտահայտվում էր այդ կատեգորիաների դրության մերձեցմամբ, նրանց համահարթումով, կապված Ապենինյան թերակղզում ֆեոդալական հարաբերությունների հաստատման հետ»*[2]:

*Այս կամ այն ձևով և ինտենսիվությամբ այդ նույն պրոցեսները հատուկ են եղել նաև մյուս ստրկատիրական հասարակություններին, և հենց նրանց արտահայտությունն է, օրինակ, Փոքր Ասիայի մ. թ. ա. III դարի վերը հիշատակված արձանագրությունը: Մնեսիմաքոսի արձանագրության մեջ ստրուկները և գյուղացիները, չնայած նրանց դրության*

---

[1] Е. М. Штаерман, Кризис рабовладельческого строя в западных провинциях Римской империи, М., 1957, էջ *114*:

[2] З. В. Удальцова, Рабство и колонат в византийской Италии во второй половине VI—VII вв. (Преимущественно по данным Равеннских Папирусов). „Византийский временник", М., 1961, էջ *120*:

տարբերությունը. Համապատասխան մտնում են կալվածքի կազմի մեջ:

Ստրկատիրական հարաբերությունների ազդեցությունը գյուղացիության շահագործման ձևերի վրա, նրա կախման աստիճանական սաստկացումն ու նրա ամրացումը հողին. նրա մերձեցումը հողի վրա նստեցված ստրուկների դրությանը—առանձնապես լավ է ցուցադրում, այսպես կոչված, «Լաոդիկեի արձանագրությունը» (նույնպես Փոքր Ասիայից), որից իմանում ենք այն մասին, որ Անտիոքոս II Թագավորը (261—247 թթ. մ. թ. ա.) հիշյալ Լաոդիկեին նվիրել է մի գյուղ իր հողերով, նրանց պատկանող գյուղացիներին (λαοί) իրենց տներով և ունեցվածքով, այլև այն գյուղացիներին, որոնք լինելով այդ գյուղից, գաղթել են այլ տեղեր[1]:

Այս համադրումը բնավ չի նշանակում, որ մենք ձգտում ենք հավասարության նշան դնել հռոմեական կոլոնների և հելլենիստական ժամանակաշրջանի λαοί-ների միջև՝ հողի, հողատիրոջ, բերքի նկատմամբ նրանց ունեցած կապի տեսակետից: Բայց բանն այն է, որ նման է եղել նրանց դերը ստրկատիրական հասարակության էվոլյուցիայի սոցիալ-տնտեսական համապատասխան պրոցեսներում, նրա շարժման մեջ դեպի այն վիճակը, որը ելակետային դարձավ ֆեոդալական հասարակության զարգացման համար:

Նույն վերապահությամբ կարելի է ընդունել Ն. Ադոնցի առաջարկած՝ Արշակունիների ժամանակաշրջանի նաև հայ գյուղացիության այն մասի համեմատությունը IV դարի փոքրասիական կոլոնների հետ, որն ապրում էր ոչ թե պետական, այլ անձամբ թագավորին, նախարարներին, եկեղեցուն պատկանող և այլ մասնատիրական հողերի վրա[2]: Այդ համեմատությունը մենք հանդիպում ենք նաև Մանանդյանի մոտ, որը

---

[1] C. B. Welles. Royal Correspondence in the Hellenistic Period. A Study in Greek Epigraphy, New Haven, 1934, № 19.

[2] Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիզ, 1948, էջ 100:

մեր հետաքրքրող ժամանակաշրջանի հայ գյուղացուն (շինականին) բնութագրում է որպես «կիսազատ ճորտի»: Տվյալ սահմանումը, որը հիմնված է թեև ոչ սակավաթիվ, բայց անուղղակի տվյալների վրա[1], մեր գիտելիքների ներկա էտապում ընդունելի կարող է համարվել լոկ այն չափով, որչափով ցույց է տալիս այդ ժամանակաշրջանում շինականների կախյալ վիճակի սաստկացումը, իսկ այդ պրոցեսը անտարակուսելի է: Այն արտահայտվում է Հ. Մանանդյանի մոտ հավաքված տվյալներից բացի, նաև հողագործական բնակչության դեպի քաղաք ձգտման խիստ աճի փաստով:

Այսպիսով, Հայաստանի համար ևս, թեպետև դեռևս ընդհանուր գծերով, կարելի է արձանագրել դաստակերտ-ագարակների բնակիչների՝ հողի վրա նստած ստրուկների ու գյուղերի և շեների բնակիչների՝ գյուղացի-համայնականների վիճակի մերձեցման պրոցես, որ նշանակում է առաջինների դրության որոշ բարելավում և վերջինների դրության վատթարացում: «...Գյուղացի-համայնականները... և հողի վրա նստեցված ու ինքնուրույն տնտեսություն վարող ստրուկները իրենց ընտանիքներով... հետզհետե կազմում են մի նոր դասակարգ՝ ֆեոդալական կախման մեջ գտնվող գյուղացիություն»—գրում է Ս. Տ. Երեմյանը[2]: IV—V դարերում կալվածները, որպես կանոն ներկայացնում են և՛ դաստակերտ-ագարակներ, և՛ գյուղերն ընդգրկող կոմպլեքսներ. այս հանգամանքը, Մնեսիմաքոսի արձանագրության մեջ արտացոլված դրության համանման, ցույց է տալիս նրանց վիճակի մերձեցումը, բայց համահարթում դեռևս չկա—նրանք պարզորոշ կերպով տարբերակվում են աղբյուրներում[3]: Որոշ տարբերություններ պահպանվում են թերևս անգամ զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, XII դարում, թեև հիմք կա մտածելու, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը տվյալ դեպքում,

[1] Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 160:
[2] Очерки истории СССР (III—IX вв.), М., 1958, էջ 169:
[3] Տե՛ս վերևում, էջ 21 և հետ.:

ինչպես մի շարք այլ դեպքերում, որովհետև կարելի է գտնել այդ կարգի ամեն մի հուշարձանում, ավելի շատ արտահայտում է իրավաբանական (կամ նույնիսկ՝ գրական) ավանդությունը՝ վաղուց անցած ժամանակների ձևունը՝ քան թե իրենց ժամանակակից կյանքը[1]:

Ինչպես և վերևում՝ դատաստանա-ադաթների բնակիչների կապակցությամբ, այստեղ էլ ավելին է հիշեցնել, որ Հին Հայ գյուղացիության դրությանը վերաբերող բոլոր դատողությունները հիմնված են այնպիսի աղբյուրների վրա, որոնք լուսաբանում են իրերի դրությունը ոչ ավելի վաղ, քան IV—V դարերում, այսինքն՝ շոշափում են ուսումնասիրվող պրոցեսների լոկ վերջին էտապները: Իսկ ի՞նչ էր հայկական գյուղական համայնքի պատկերը հելլենիստական ժամանակներում և մ. թ. առաջին դարերում: Այդ հարցը ոչ միայն ամենաքիչ ուսումնասիրվածներից մեկն է, այլև մեկն է ուսումնասիրության համար առավել դժվար մատչելիներից:

Հայկական մինչֆեոդալական գյուղական համայնքի հետազոտության ուղղությամբ որոշ աշխատանք կատարել է Ս. Երեմյանը: Նա հանգել է այն եզրակացությանը, որ համայնքը կազմված էր տոհմանահապետական ընտանիքներից: Գույքն ուներ «կոլեկտիվ հողային սեփականության մասնավոր հողօգտագործման առկայությամբ»: Իրավաբանորեն ազատ գյուղացի-համայնականները համայնքի հետ կապված էին հողից օգտվելու ժառանգական իրավունքով, որից չէր օգտվում տվյալ համայնքին չպատկանող մարդը: «Գյուղը հարկվում էր կոլեկտիվ կերպով և համայնականները կոլեկտիվ կերպով էլ կատարում էին իրենց պարհակները»: «Այդ պարհակները շարունակ աճում էին, և պարհակն ավարտած համայնականը ընդմիշտ մնում էր այդ ծանր աշխատանքներին ամրացված, փաստորեն ընկնելով ստրուկի դրության

---

[1] Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 103, ծանոթություն 51:

*մեջ»։ Այդպիսի համայնականները «տարկացվում էին և ժամանակի ընթացքում համալրում էին ստրուկների՝ մասնավորական տնտեսությունների հիմնական աշխատողների շարքերը»։ «Համայնքի ներսում տեղի ունեցած շերտավորումը նրա միջավայրից... գնալով ավելի էր զատում արտադրամիջոցներից զրկված և իշխող դասակարգի տնտեսություններում ստրուկի վիճակով աշխատող մարդկանց»։ Սրանք նույնպես աստիճանաբար դառնում էին ստրուկներ։ Այսպիսով, արևելյան համայնքը եղել է «ստրկության աղբյուր»[1]։*

*Սակայն, բերված դրույթները նախաֆեոդալական Հայաստանի գյուղական համայնքի հարցի ավելի շուտ տեսական դրումն է և ոչ լուծումը, որի համար մենք առայժմ բավարար տվյալները չունենք։ Ուստի հնարավոր ենք համարում որոշ դիտողություններ անել շոշափված հարցի առթիվ, նույնպես նրա դրման կարգով։*

*Ամենից առաջ չպետք է համայնքի, որպես «ստրկության աղբյուրի», նշանակությամբ սքողել նախաֆեոդալական համայնքի ստրկատիրական էության մյուս ասպեկտները։ Չի կարելի, օրինակ, թերագնահատել այն փաստը, որ Արևելքի երկրներում գյուղական համայնքը ոչ միայն եղել է մասնավորական տնտեսություններում աշխատող ստրուկների կադրը համալրելու աղբյուր, այլև ինքնին հանդիսացել է, հատկապես ստրկատիրական կարգի ուշ էտապներում, անմիջական ստրկատիրական շահագործման օբյեկտ[2]։*

*Մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել ոչ միայն համայնքի փոխհարաբերությունը պետության և ընդհանրապես համայնքից դուրս գտնվող շահագործողների հետ, այլև նրա ներքին վիճակը։ Սովորաբար այդ հարցը շոշափելիս վկայաբերում են արևելյան համայնքի սոցիալական շերտավորումն ու քայ-*

---

[1] С. Т. Еремян, Рабовладельческое общество..., *էջ 15 և հետ.։*

[2] *Տե՛ս* А. И. Тюменев, Передний Восток и античность, „Вопросы истории", 1956. № 6, *էջ 53 և հետ.։*

քայումը, սակայն ոչ մի կերպ չբացատրելով դրանց ար-դյունքները: Փաստորեն ենթադրվում է, որ համայնքն ընդունակ չէ ներքին էվոլյուցիայի, իր սոցիալական կառուցվածքի զարգացման ու փոփոխման. նրան վերագրվում է լոկ արտաքին զարգացման, լոկ այն փոխհարաբերությունների էվոլյուցիայի ընդունակություն, որոնք առաջացել էին համայնքի և հասարակության իշխող դասակարգերի միջև, որ հանգում է համայնքի՝ վերևից կատարվող շահագործման մեթոդների ու չափի փոփոխմանը: Այս մետաֆիզիկական հայացքի օբյեկտիվ հիմքն է, անկասկած, գյուղական համայնքի պահպանողականության չափազանցումը: Բայց չէ՞ որ պահպանողականությունը նշանակում է լոկ զարգացման դանդաղում և ոչ նրա իսպառ բացակայություն:

Մասամբ նախընթացի հետ կապված մյուս ընդունված դրույթն այն է, որ ստրկատիրությունը և գյուղական համայնքը մեկուսացած, մեկը մյուսից անկախ պատմական երևույթներ էին, որ նրանք կարող էին լոկ գոյակցել, մնալով, ամենաշատը, անխուսափելի արտաքին հարաբերությունների մեջ և մեկը մյուսին խորթ մնալով ներքնապես: Դա հանգեցնում է ստրկատիրության և գյուղական համայնքի որոշակի հակադրությանը, որը դրսևորվում է այսպես. որքան մեծ նշանակություն է տրվում մեկին, այնքան փոքր դեր է հատկացվում մյուսին: Այսպես, օրինակ, Հ. Մանանդյանը հին Հայաստանի ստրկատիրության վերաբերյալ տեսակետի դեմ որպես հիմնական փաստարկ առաջ է քաշում այն նկատառումը, թե համայնական գյուղացիության դերը արտադրության մեջ այնքան մեծ էր, որ ստրուկների համար լոկ աննշան տեղ էր թողնում[1]:

---

[1] Տե՛ս Я. А. Манандян. Проблема..., էջ 20 և այլն: Համեմատե՛ Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, I, էջ 220, 216, 218 և այլն:

Հին Հայաստանում ստրուկների ու համայնականների քանակական հարաբերության հարցը[1] բավականաչափ կարևոր է և հետաքրքրական, որպեսզի լուրջ ուշադրություն նվիրվի նրան, սակայն, նախ՝ դրա լուծման համար մենք չունենք վիճակագրական ոչ մի տվյալ կամ դրան փոխարինող տեղեկություններ, և այդ առթիվ արված բոլոր դատողությունները մնում են ոչ ավելի, քան ուշ աղբյուրների տեղեկությունների վրա հիմնված ենթադրություններ. երկրորդ՝ թե որքան մեծ է եղել համայնքի դերը արտադրության մեջ, բնավ էլ այդ հարցը չէ կենտրոնականն ու վճռականը հին հայկական հասարակության սոցիալ-տնտեսական բնույթը որոշելու գործում։ Այդպիսին է այն հարցը, թե որպիսին է եղել գյուղական համայնքի դերը, որպիսին է եղել նրա բնույթը։

Գյուղական համայնքը ինքնին երբեք որևէ սոցիալ-տնտեսական կացութաձևի հատկանիշ չի հանդիսացել։ Անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում նա կարող էր գոյություն ունենալ ոչ միայն ֆեոդալիզմի ժամանակ, որ սովորաբար ընդգծվում է, այլև ստրկատիրական կարգերի ժամանակ, և, առանձին դեպքերում, նույնիսկ կապիտալիզմի ժամանակ (օրինակ՝ Ռուսաստանում)։ Եթե վերանանք հիմքում ոչ ճիշտ և պատմականությանը հակասող այն մտքից, որ

[1] Տե՛ս. С. Л. Утченко, Е. М. Штаерман, О некоторых вопросах истории рабства, ВДИ, 1960, № 9 և հետ.։ Հոդվածի հեղինակների կարծիքով, այս կամ այն հասարակայնությունը ստրկատիրական ֆորմացիային վերագրելիս «ստրուկների թվի չափանիշից հարկավոր է հրաժարվել ամենավճռական կերպով»։ «...Ստրկական աշխատանքը, ստրկությունը որպես շահագործման ձև բուն անտիկ հասարակությունների զարգացման որոշ ժամանակաշրջաններում, ...իսկ առավել ևս զարգացած ստրկատիրական պետությունների ազդեցության տակ ընկած հասարակությունների մեջ, կարող էին և շահագործման (ու աշխատանքի) գերակշռող ձևեր չլինել։ Բայց դա ոչ մի կերպ չպետք է խախտի մեր պատկերացումը ստրկատիրական ֆորմացիայի մասին։ Եթե ստրկատիրական աշխատանքի կամ շահագործման ստրկատիրական ձևը չէին գերակշռում քանակապես (ինչպես և ստրուկների թիվը անտիկ պետություններում), ապա նրանք, անկասկած, գերակշռում էին որակապես» (էջ 11)։

գյուղական համայնքը բացարձակապես քայքայված է, ու անշարժ և ընդունակ միայն անվերջ քայքայվել սոցիալական շերտավորման պրոցեսի անվերջ սրման հետևանքով, ապա հարկ կլինի ընդունել, որ նրանում, ինչպես և ամեն մի հասարակական օրգանիզմում, անխուսափելիորեն առաջացվում են այն հասարակության համար բնորոշ սոցիալական փոխհարաբերությունները, որի բաղկացուցիչ մասն է կազմում համայնքը։ Ստրկատիրական երկրների գյուղական համայնքների ներսում առաջանում էին ստրկատիրական հարաբերություններ, իհարկե, համայնական կյանքի յուրահատուկ պայմանների ազդեցության ներքո որոշակիորեն ձևափոխված։ Խոսքը վերաբերում է, հիմնականում, պարտային ըստրկությանը համայնքների ներսում[1], բայց նաև այն ըստրուկներին, որոնք հարուստ համայնականների կողմից ձեռք էին բերվում դրսից[2]։ Ստրկատիրական հարաբերությունները թափանցում էին նաև ընտանիքը՝ համայնքի բաղկացուցիչ մասը, և ազդում էին կանանց ու երեխաների դրության վրա[3]։

---

[1] Տե՛ս օրինակ, И. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, Л., 1949. Մ. թ. ա. XII դարի ասորեստանյան դատաստանագրքերը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում այդ մասին։ Պարտքը չվճարելու դեպքում պարտատերը ձեռք էր բերում ստրկացվածի վրա իշխելու լրիվ իրավունք և նույնիսկ կարող էր այդ ստրուկին վաճառել Ասորեստանի սահմաններից դուրս (էջ 68 և հետ.)։ Բացի անմիջական ստրկացումից, որի օբյեկտ էին հանդիսանում անվճարունակ պարտապանները, այս նույն ժամանակաշրջանում նկատվում են նաև քողարկված ձևեր՝ թշվառության մեջ ընկած համայնականների կամ նրանց երեխաների «վերադաստիարակումը» և «սնուցումը» ունևոր համայնականների կողմից (էջ 69 և հետ.)։

[2] Հմմտ. И. С. Свенцицкая, Сельская община Малой Азии в I—III вв. н. э., ВДИ, № 3, էջ 58։

[3] И. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, էջ 63 և հետ. «Հոր և ամուսնու իշխանությունը երեխաների ու կնոջ նկատմամբ, քիչ էր տարբերվում տիրոջ իշխանությունից ստրուկի նկատմամբ. այսպես, դեռ հին ասորեստանյան ժամանակաշրջանում երեխաները և ստրուկները հավասարապես գրավվում էին այն գույքի շարքում, որից պարտատերը կարող էր հատուցում վերցնել պարտքի դիմաց» և այլն։

*Մյուս կողմից, լինելով տվյալ ստրկատիրական հասարակության օրգանական մասը, համայնքը իր հերթին յուրահատուկ կնիք էր դնում այդ հասարակության վրա։ Այսպես, հողի սեփականության համայնական ձևի կայունությունը արգելակում էր մասնավոր սեփականության զարգացումը, որ արևելյան ստրկատիրական հասարակությունների զարգացման դանդաղության, նրանց լճացածության պատճառներից մեկն էր։ Համայնական կարգերի ազդեցությունն արտահայտվում էր նաև ստրուկների շահագործման եղանակի վրա և այլն։*

*Եվ այսպես, գյուղական համայնքը ներքին զարգացման ընդունակ սոցիալական մի օրգանիզմ էր և այդ տեսակետից բացառություն չէր կազմում հասարակության մյուս բոլոր բաղկացուցիչ մասերի շարքում։ Հին հայկական գյուղական համայնքը այդ առումներով դեռ համարյա ուսումնասիրված չէ, ահա թե ինչու բավականաչափ կամ անվաղն յուրաժամանակ չէ նրա դերի վերլուծումը որպես փաստարկի հին Հայաստանի հասարակարգի ստրկատիրական բնույթի դեմ կամ ֆեոդալական բնույթի օգտին։ Նման կարգի առարկությունը լավ ցույց է տալիս հին Հայաստանի հասարակարգի պրոբլեմի ո՛չ բավարար չափով ուսումնասիրված կամ բոլորովին չուսումնասիրված օղակների մանրակրկիտ հետազոտման անհրաժեշտությունը։*

* *
*

*Հելլենիստական աշխարհի սոցիալ-տնտեսական կյանքում գյուղական միջավայրից ո՛չ պակաս կարևոր առարկա է եղել քաղաքը։ Հին Հայաստանի համար դա այնքան էլ պարզ չի դրսևորվում, հավանորեն, մասամբ այն պատճառով, որ քաղաքային կյանքը այստեղ չհասավ զարգացման այն աստիճանին, ինչ, օրինակ, հելլենիստական Ասորիքում, Փոքր Ասիայում և Միջագետքում։ Բայց դրա գլխավոր պատճառը այսուհանդերձ մնում է աղբյուրների բնույթը, որոնց մեջ հին հայկական հասարակության կյանքի այդ կողմը սքողված է։ Տվյալ հարցը, ինչպես և նույնին վերաբերող մյուս հարցերը*

մանրամասնորեն քննության են առնված մեր հատուկ աշխատության մեջ[1], և այստեղ մեզ մնում է համառոտակի կրկնել հիմնականը։

Մեր թվականությունից առաջ III—I դարերի Առաջավոր Ասիան գիտեր ստրկատիրական քաղաքի մի շարք տիպեր։ Դրանցից մեկը և կարևորագույնը հելլենիստական պոլիսն էր, որ կլասիկ հունական քաղաք-պետությունից ժառանգել էր սոսկ կազմակերպական ձևերը, բայց նրանից շատ հեռու էր իր սոցիալ-տնտեսական ու քաղաքական էությամբ և այդ տեսակետից ավելի մոտ էր կանգնած հենց հելլենիստական ժամանակաշրջանի քաղաքների մյուս տիպերին։ Վերջիններից հայտնի են բաբելական քաղաքները—տեղական ձևերի երկարատև էվոլյուցիայի արգասիք, Փոքր Ասիայի, Ասորիքի նույնպես հին արմատներ ունեցող քաղաք-տաճարները, Պաղեստինի քաղաքները և ուրիշներ[2]։

Բոլոր այդ քաղաքները, որոնք տարբեր են ծագումով, արտաքին տեսքով, վարչական կառուցվածքով և այլն, երևան են բերում բացահայտ նմանության գծեր, երբ համեմատում ենք նրանց սոցիալ-տնտեսական կառուցվածքը և քաղաքական դերը հելլենիստական միապետությունների սիստեմում. Նրանք բոլորը կազմված էին բնակչության երկու հիմնական խավերից—տվյալ քաղաքի քաղաքացիական կոլեկտիվի մեջ միավորված լիիրավ քաղաքացիների համեմատաբար նեղ ու պարզորոշ գծագրված շրջանից և քաղաքում ու նրան շրջապատող, մասամբ քաղաքային համայնքին, մասամբ առանձին քաղաքացիների պատկանող հողային տերիտորիայի վրա ապրող և աշխատող ստրուկների ու կիսակախյալ ազատների զանգվածից։ Քաղաքացիական համայնքները, որոնք հանդիսանում էին ռեալ ու պոտենցիալ ստրկատերերի կոլեկտիվներ

[1] Г. Х. Саркисян, Тигранакерт, Из истории древнеармянских городских общин, М., 1960.

[2] Г. Х. Саркисян, Социально-экономическая роль клинописной нотариально-правовой системы в эллинистической Вавилонии, Eos, XLVIII, 2, Varsaviae-Vratislaviae, 1957, էջ 43 և հետ.։

և հակադրված ու վերադասված էին ոչ լիիրավ ու իրավազուրկ մնացյալ բնակչությունից, հելլենիստական պետություններում օժտված էին մի շարք արտոնություններով և իրավունքներով— մասնակի ավտոնոմիայի իրավունքով, շատ տուրքերից ու պարհակներից ազատ էին և այլն: Նրանք ինքնավարության օրգաններ ունեին, թագավորների հետ գրագրություն էին վարում իրենց կյանքի տարբեր կողմերի հետ կապված հարցերով: Թագավորները ընդարձակ հողային տարածություններ էին նվիրաբերում քաղաքներին: Հելլենիստական ժամանակաշրջանում թագավորական իշխանության ու քաղաքների միջև այդպիսի հարաբերությունները հանդիսանում էին ստրկատերերի դասակարգի տարբեր խավերի դաշինքի, նրա կոնսոլիդացիայի արտահայտություն. իսկ այդ դաշինքն ու կոնսոլիդացիան միակ միջոցն էին շահագործվող մասսաներին ճնշելու և սանձահարված պահելու, ինչպես նաև պետության՝ երկու կողմերին ձեռնտու ամբողջականությունը պահպանելու համար: Թագավորական իշխանության և քաղաքների միջև եղած հակասությունները երկրորդ պլանն էին մղվում այդ խնդիրների կարևորության ու կենսականության հանդեպ:

Այդ փոխադարձ շահագրգռվածությունը եղել է քաղաքների աճման ու զարգացման համար թագավորների հոգատարության պատճառներից մեկը, հելլենիստական քաղաքաշինության՝ այն վիթխարի պրոցեսի հիմքերից մեկը, որն ընդգրկել էր ամբողջ Մերձավոր Արևելքը և երկու-երեք հարյուրամյակի ընթացքում ծնել հարյուրավոր նոր քաղաքներ: Այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանում հիմնվեցին մեկ տասնյակից ոչ պակաս նոր քաղաքներ: Լինելով երկրի ներքին զարգացման արտահայտություն, Հայաստանում քաղաքների թվի աճումը, դրա հետ մեկտեղ, նաև հելլենիստական քաղաքաշինության ընդհանուր պրոցեսի օղակներից մեկն էր:

Հայաստանում, ինչպես և հելլենիստական աշխարհի մյուս երկրներում, թագավորների հիմնած քաղաքները կրում էին դինաստիական անուններ: Բազմաթիվ Ալեքսանդրիաների, Սելևկիաների, Անտիոքիաների և այլնի նման Հայաստանում

երևան եկան Երվանդաշատը, Երվանդավանը[1], Արշամաշատը[2], Արկաթիոկերտը[3], Արտաշատը[4], մի քանի Զարեհավաններ, Զարիշատներ, Տիգրանակերտներ և այլն: Մեր թվականության I—II դարերում հիմնվել են Վաղարշապատը, Մծուրնը-Հուլիանուպոլ նաև Նախճավանը[5]:

Սակայն քաղաքաշինությունը Հայաստանում ուներ նաև իր առանձնահատկությունը: Արևմուտքի ու Արևելքի կլասիկ ստրկատիրական երկրներում քաղաքաշինությունը տարածում է ստացել ստրկատիրական հասարակարգի զարգացման համեմատաբար ուշ էտապներում — հիմնականում հելլենիստական ժամանակաշրջանում — և նախապատրաստվել է քաղաքների տարերային զարգացման նախընթաց երկարատև պրոցեսում, որը Արևելքի ու Արևմուտքի մի շարք երկրներում հանգեցրել քաղաքային կյանքի խիկական ծաղկմանը: Ի տարբերություն դրան, Հայաստանում առավել հին քաղաքները, որոնք ստեղծվել էին մեր թվականությունից առաջ III—II դարերում, արդեն քաղաքաշինության արդյունք էին: Փաստորեն միայն Արմավիրն է ու, միգուցե, ևս մեկ-երկու քաղաք, որ, ըստ երևույթին, տարերայնորեն են կազմվել: Մինչ այդ ժամանակները Հայաստանում քաղաքային կյանքի թույլ զարգացման մասին է վկայում, բացի այլ ամենից, նաև քաղաքային բնակչության այն սուր պահանջը, որը առաջացել էր քաղաքաշինության կապակցությամբ և բավարարվում էր օտարերկրյա քաղաքացիների զգալի զանգվածների վերաբնակեցման միջոցով:

Այսպիսով, քաղաքների զարգացումը հին Հայաստանում ընթանում էր անհավասարաչափ: Մի փոքր խտացնելով գույները, կարելի է նույնիսկ ասել, որ քաղաքների զարգացումը հին Հայաստանում սկսվել է այնպիսի կետից, որին ուրիշ եր-

[1] Մովսես Խորենացի, II, 39, 42, 46:

[2] Polyb., VIII, 25. Plin., Nat. hist., VI, 9.

[3] Plin., նույն տեղում. Steph. Byz., s. v. Ἐπιφάνεια:

[4] Strab., XI, 14 6. Plut., Luc., 31. Մովս. Խոր., II, 49:

[5] Մովսես Խորենացի, II, 65. Փավստոս Բուզանդ, IV, 14. Ptol., Geogr., ed. K. Müller, v. I, Paris, 1901, էջ 941:

կյանքում նախորդել է երկար ուղի։ Պետք է, ենթադրել, որ քաղաքների զարգացման կորագծի այդպիսի յուրովի բնույթը եղել է ամբողջ Հին Հայկական հասարակության զարգացման առանձնահատկության արտահայտություն։

Իրենց տեսքի ու կառուցվածքի տեսակետից Հին Հայաստանի քաղաքները ևս մի տարատեսակ էին Հելլենիստական ժամանակի քաղաքների վերը թվարկված տիպերի շարքում։ Նրանք կիսաավտոնոմ էին, ունեին կառավարման իրենց օրգանները, իրենց զինված ուժերը, ազատված էին մի շարք հարկերից ու պարհակներից և այլն։ Տեղեկություններ են պահպանվել նաև քաղաքային հողագործական դասի մասին, որը կազմված է եղել գյուղերից ու դաստակերտ-ագարակներից[1]։ Արտոնյալ քաղաքային համայնքների և հողագործական բնակչության կախյալ մասսայի փոխհարաբերությունները արտացոլված են Մովսես Խորենացու այն հաղորդման մեջ, ըստ որի Վաղարշակ թագավորի հրամանով գեղջուկները քաղաքացիներին պետք է վերաբերվեին «որպես իշխանի»[2]։ Հիշենք, որ Մովսես Խորենացու ժամանակներում «իշխան» բառը նշանակում էր խոշոր ֆեոդալ։ Ահա թե որքան սուր է գրված հարցը Խորենացու մոտ։ Նույն պատկերն ենք տեսնում մ. թ. VI դարին վերագրվող՝ Կարկա դե Բեթ Սելոխ քաղաքի ասորական ժամանակագրության այն հաղորդման մեջ, ըստ որին Սելևկոս I-ը, հիմնելով քաղաքը, այն կոչեց իր անունով և նրան տվեց ամբողջ մարզը... որպես ստրուկներ»[3]։ Այս հաղորդումը, վերաբերվելով մոտավորապես Խորենացու ժամանակներին, նույնքան հարազատորեն է արտացոլում վաղ ժամանակների իրավիճակը, որքան և Խորենացու վկայությունը։

[1] Եղիշե, էջ 63, 79. Փավստոս Բուզանդ, IV, 19. Մովսես Խորենացի, II, 90։

[2] Մովսես Խորենացի, II, 8։

[3] Н. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, М.—Л., 1956, էջ 38 և հետ.։

Հին հայկական քաղաքների առևտրական կապերի մասին, միջազգային առևտրի մեջ նրանց, որպես առևտրական ճանապարհների վրա գտնվող կարևոր տարանցիկ կետերի ու հանգույցների, մասնակցության մասին պահպանվել են բավական շատ տեղեկություններ[1]։ Կասկածից վեր է, որ միջազգային առևտուրը, իսկ էլ ավելի մեծ չափով՝ երկրի ներքին պահանջմունքները, հատկապես իշխող դասակարգի և արքունիքի պահանջմունքները, պետք է խթանեին արհեստավորական արտադրության շատ ճյուղերի զարգացմանը հին Հայաստանի քաղաքներում։ Սակայն, մի կողմից պահպանված աղբյուրների առանձնահատկության և մյուս կողմից այդ քաղաքների ծայրահեղ թույլ հնագիտական ուսումնասիրվածության պատճառով է, որ արհեստավորական արտադրության մասին մեր ունեցած ստույգ տվյալները աննշան են։ Ս. Երեմյանը սուղ տեղեկությունների վերլուծության հիման վրա հանգել է այն եզրակացության, որ հին Հայաստանի քաղաքներում զգալի զարգացման են հասել մետաղագործությունը, մետաղյա, ապակյա, փայտյա զանազան իրերի (զենքի, կենցաղային և պերճանքի առարկաների) արտադրությունը, կավագործությունը, ջուլհակությունը և այլն։ Իր օգտագործած աղբյուրներում նա երևան է բերել շուրջ հիսուն արհեստների հիշատակություն, սակայն այդ տերմինները մեծ մասամբ գտնվում են աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ և անստույգ կերպով են արտացոլում արհեստների վիճակը Հայաստանում[2]։ Արհեստավորական արտադրությանը վերաբերող տվյալների սղությունը, բնականաբար, հնարավորություն չի տալիս պարզելու նաև այդ արտադրության մեջ ստրուկների մասնակցության մասշտաբների ու սպեցիֆիկայի

---

[1] Я. А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), изд. 2, Ереван, 1954, էջ 23 և հետ. և 53 և հետ. և այլք։

[2] С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, էջ 26 և հետ.։

մասին՝ հելլենիստական աշխարհի մյուս երկրների համեմատությամբ։

Հելլենիստական ժամանակաշրջանում կազմավորված քաղաքները շարունակում էին դեռ գոյություն ունենալ մեր թվականության IV դարում։ Ֆեոդալականացած նախարարության դեմ կենտրոնական իշխանության պայքարում նրանք հանդես էին գալիս իրենց դաշնակցի՝ թագավորի զորավիգ և նրա հետ միասին ընդունում էին նախարարների և նրանց աջակցող Սասանյանների հարվածները։ Թե որքան սուր էր նախարարների ու քաղաքների միջև եղած թշնամությունը, ցույց է տալիս Արշակավանի օրինակը, այն քաղաքի, որը հիմնվել էր IV դարի կեսերին հայոց թագավորի կողմից և կարճ ժամանակ անց՝ կործանվել նախարարների ձեռքով։ Այդ նույն օրինակը վկայում է նաև այն մասին, որ քաղաքային կարգերը այն ձևով, ինչ ձևով նրանք կազմավորվել էին հնում, IV դարում արդեն ապրել էին իրենց ժամանակը և հետագա գոյության հեռանկարներ չունեին զարգացող ֆեոդալիզմի պայմաններում։

Հայաստանի քաղաքներին կատարյալ ավեր բերեց և նրանց մարման պրոցեսը խիստ արագացրեց պարսկական զորքերի արշավանքը IV դարի 50-ական թվականների վերջին—60-ական թվականների սկզբին, երբ կործանվեցին երկրի բոլոր խոշոր քաղաքները[1]։ Այդ քաղաքներն այլևս չվերականգնվեցին, ինչպես վերականգնվում էին նախորդ դարերում, նման ավերներից հետո։ Որոշ քաղաքներ բոլորովին անհետացան երկրի երեսից, մյուսները կորցրին իրենց նշանակությունը։ Այսպես, Երվանդաշատ և Զարիշատ քաղաքները բնավ, իսկ Վան քաղաքը մի քանի դար չեն հիշատակվում աղբյուրներում։ Զարեհավանը և Նախճավանը V դարում դարձել էին գյուղեր[2], Արտաշատը՝ Արշակունիների մայրաքաղաքը, այդ նույն ժամանակներում իջել էր գյուղա-

[1] Փավստոս Բուզանդ, IV, 21. Մովսես Խորենացի, III, 28, 35։

[2] Ղազար Փարպեցի, էջ 63 և 121։

ռաղաքի դրության[1]։ Հաճախ հիշատակվում է միայն Վաղարշապատը, որը կրոնական կենտրոն էր։ Տիգրանակերտի մասին մենք հետագայում լսում ենք որպես ավանի մասին[2], քանի դեռ նա Հուստինիանոսի կողմից վեր չէր ածվել բանակային ուժեղ ամրոցի՝ Մարտիրոպոլիս անվան տակ[3]։ IV դարի երկրորդ կեսում փլատակներ էր ներկայացնում Մծուրն քաղաքը[4], որը այլևս երբեք չվերածնվեց։

Ճիշտ է, V դարի երկրորդ կեսում առաջ քաշվեց և մի շարք հարյուրամյակների ընթացքում ծաղկում էր Դվին քաղաքը, բայց նրա վերելքը պայմանավորված էր ոչ թե ներքին պատճառներով, այլ նրանով, որ նա Առաջավոր Ասիայի տարանցիկ առևտրի կարևոր հանգույց և պարսկական, իսկ հետագայում՝ արաբական վարչական կառավարման կենտրոն էր։

Քաղաքների անկումը Հայաստանում շարունակվեց շուրջ հինգ դար։ Քաղաքային կյանքն սկսեց աշխուժանալ միայն IX—XI դդ. և նոր ծաղկման հասավ XII—XIII դդ.։ Սակայն հին քաղաքներից համարյա թե ոչ մեկը չվերածնվեց։ Քաղաքային նոր կենտրոնները՝ Անին, Կարսը, Արծնը և մյուսները առաջացել են աշխարհագրական այլ վայրերում։

*

Աղբյուրների առանձնահատուկ բնույթը ոչ պակաս, քան նրանց սղությունը, այս կամ այն չափով ազդում է հին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության բոլոր հարցերի մշակման վրա։ Մասնավորապես, սոցիալ-տնտեսական երևույթների մասին եղած տվյալները բավական չեն, որպեսզի կարելի լիներ տալ ստրկատիրական հասարակարգի զարգացման պարզորոշ պատկերացումը, հենվելով միայն նրանց վրա։ Այնպիսի պրոցեսներ, ինչպես են՝ դաստակերտ-ագա-

[1] Ղազար Փարպեցի, էջ 144։

[2] Փավստոս Բուզանդ, V, 27։

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 141, 173

[4] Փավստոս Բուզանդ, IV, 14։

հանքերում աշխատող անմիջական արտադրողների շահագործման մեթոդների փոփոխումը, ապա համայնական գյուղացիության կախվածության սաստկացումը, հողային սեփականության զարգացումը դեպի ֆեոդալական հողատիրություն և այլն; Թեպետև արձանագրվում են տասնյակ տարակուսանքի, բայց առայժմ մեզ պատկերանում են միայն ամենաընդհանուր գծերով, և դժվար է դրանց ժամանակագրությունը ճշգրիտ որոշել:

Այդ պատճառով հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման պարբերացման համար հարկ է լինում դիմել նաև հին հայկական հասարակության կյանքի մյուս՝ քաղաքական ու կուլտուրական բնագավառների զարգացման գծերին:

Անկախ հայ ժողովրդի այս կամ այն ներգաղթած կոմպոնենտի ծագման տեղից, նրա գոյացման, կազմավորման պրոցեսը տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհում, հին արևելյան ստրկատիրական պետությունների շրջապատման մեջ: Հայերի կյանքի սկզբնական էտապները, նախնադարյան համայնական հասարակարգից դասակարգային հասարակության նրանց անցման և քաղաքական միավորներ կազմելու առաջին ձգտումների ժամանակաշրջանը վերաբերում են մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսին, այսինքն այն ժամանակներին, երբ խոշոր և ուժեղ պետություններ՝ Ասորեստանյան տերությունը, Ուրարտուի պետությունը, Մեդական ու Աքեմենյան պետությունները, փոխեփոխ իրենց իշխանության տակ էին պահում Առաջավոր Ասիայի, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհի ընդարձակ տարածությունները:

Հայերի քաղաքական զարգացման համար այդպիսի իրադրությունը հազիվ թե բարենպաստ էր: Այնուամենայնիվ հայկական ցեղերին հաջողվեց բավական ուժեղ միավորում ստեղծել[1], որը մեր թվականությունից առաջ VII դարի վեր-

---

[1] Ս. Տ. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 59 և հետ.:

չիրին, միտանիների և բաբելացիների հետ դաշնակցած՝ հավանորեն մասնակցեց Ասորեստանյան տերության ջախջախման գործում[1]:

VI դարի սկզբներին Ուրարտուի պետության տապալումից հետո, որին հայերը նույնպես պետք է որ աջակցած լինեն, նրանց վիճակվեց պայքարել մեդացիների, իսկ այնուհետ՝ Աքեմենյան Իրանի դեմ: Այդ պայքարի վերջին դրվագը հանդիսացան Դարեհ I-ի Բիսութունյան արձանագրության մեջ նկարագրված իրադարձությունները, որից հետո Հայաստանը մտավ Աքեմենյանների տերության կազմի մեջ և միայն վերջինիս անկումով անկախություն ձեռք բերեց:

Սակայն այդ նույն պատմական պայմանները—վերոհիշյալ պետությունների հետ զանազան գծերով շփումը, ներառյալ նաև ռազմական ընդհարումները—պետք է նպաստեին հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական աճմանը: Կուլտուրական շփման արդյունքները, գլխավորապես ուրարտացիների և պարսիկների հետ, երևում են հայ հեթանոսական կրոնական հավատալիքներում ու միֆական ավանդություններում և, հատկապես վառ կերպով՝ հայոց լեզվի մեջ, որը ուրարտերեն և պարսկերեն լեզուների հետ ընդհանուր բազմաթիվ բառեր է պահպանել:

Տնտեսական շփման արդյունքները, աղբյուրների վիճակի պատճառով, շատ ավելի դժվար է որսալ: Բիսութունյան արձանագրությունը, Հերոդոտը, Քսենոփոնի «Կյուրոպեդիան» ու «Անաբասիսը» և այլն, հնարավորություն են տալիս լոկ ընդհանուր դատողություններ անել հայերի մոտ դասակարգային հասարակության առաջացման պրոցեսի մասին: Այնուամենայնիվ ավելի լավ, քան ներքին գործոնները, այդ աղբյուրներում արտացոլվել է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման արտաքին գործոնը, այն է՝ Աքեմենյան տերության համահարթող ուժը, թեև այն շատ զգալի չափով

[1] Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 11 և հետ.

զիջում էր հաջորդած հելլենիստական դարաշրջանի համանման ուժերին, որոնց մասին մասամբ խոսվել է վերևում։

Աքեմենյան տերության քայքայումից հետո, Հայաստանը, սահմանակից մի շարք երկրների նման ինքնուրույն դարձավ և այստեղ պահպանվեցին նրա նախկին սատրապները՝ Երվանդյանների տոհմից։ Աքեմենյան տրադիցիաները շատ ուժեղ էին — պոնտական, կապադովկիական և այլ թագավորների նման, Երվանդյաններն էլ իրենց սերած էին համարում պարսկական անվանի տոհմերից մեկից և նույնիսկ, իգական գծով, հենց Դարեհից[1], իսկ պետական կառուցվածքում, պետք է կարծել, դեռ երկար ժամանակ պահպանվել էին պարսկական սատրապության[2] կազմակերպական գծերը։ Միևնույն ժամանակ երկիրը գտնվում էր Սելևկյանների սահմանակից տերության ուժեղ ազդեցության տակ։

Մ. թ. ա. III դարի վերջերին Սելևկյանները կարճ ժամանակով նվաճեցին Հայկական լեռնաշխարհը։ Հայկական հողերի գլուխ կանգնեցին ստրատեգներ Արտաշեսը և Զարեհը (Ստրաբոնի մոտ՝ Արտաքսիաս, Զարիադրես)։ Շուտով, 189 թվականին, նրանք անջատվեցին Սելևկյաններից և իրենց թագավորներ հայտարարեցին Հայաստանի տարբեր մարզե-

---

[1] Ստրաբոնի տվյալներով, հայկական Երվանդյանները, համարվում էին, գուցե և հանդիսանում էին Սմերդիս (Գաումատա) մոգին սպանած յոթ պարսիկներից մեկի՝ Հյուդառնեսի (Վիդարնայի) հետնորդներ (XI, 14, 15)։ Իգական գծով Երվանդյանները, ինչպես երևում է Նեմրութ-դաղի արձանագրություններից, իրենց համարում էին Աքեմենյանների հետնորդներ։ Երվանդյաններից մեկը, Հայաստանի սատրապ, ամուսնացած է եղել արքենյան արքայադստեր հետ (Xen., Anab., II, IV, 8) K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 303։

[2] Աքեմենյան տրադիցիաները Հայաստանում բավականին ուժեղ էին դեռ մեր թվականությունից առաջ II–I դարերում։ Դրա օրինակ կարող է ծառայել Արտաշես I-ի արձանագրությունների արամեերեն լեզուն՝ Աքեմենյանների դիվանատան գործածական լեզուն, ինչպես նաև մի շարք այլ երևույթներ։ Հմմտ. Г. А. Тирацян, Ахеменидские традиции в древней Армении, „XXV Международный конгресс востоковедов. Доклады делегации СССР“, М., 1960.

րում։ Հասավ Երվանդյանների իշխանության վերջը։ Արտաշեսի միավորիչ քաղաքականության հետևանքով առաջացավ Մեծ Հայք պետությունը՝ հենց այն տերիտորիայով, որի վրա ընթանում էր հայ ժողովրդի պատմական զարգացումը։ Ստրաբոնը, թվարկելով միավորված հողերը, նշում է, որ նրանք բոլորը միալեզու են[1]։

Մեծ Հայքի պետության առաջացումը հայ ժողովրդի պատմության կարևոր հանգուցային կետ հանդիսացավ։ Հելլենիստական և, առանձնապես, Սելևկյան պետության զգալի ազդեցության տակ կատարվեցին մեծ վերափոխումներ, հողային[2], վարչական[3], ռազմական և, հավանորեն, նաև այլ ռեֆորմներ[4]։ Ծայրամասային փոքր թագավորությունից Հայաստանը արագորեն դարձավ Առաջավոր Ասիայի ուժեղ և խոշոր պետություններից մեկը և, որպես այդպիսին, պահպանեց իր գոյությունը ամբողջ վեց հարյուրամյակ, ընդհուպ մինչև մեր թվականության V դարի սկիզբը։

Այդ վեց հարյուրամյակի ընթացքում Հայաստանը տեսել է վերելքներ ու անկումներ, դինաստիայի փոփոխում։ Տիգրան II-ի օրոք եռանդուն նվաճողական քաղաքականությունը մ. թ. ա. I դարի առաջին տասնամյակներում հանգեցրեց Հայաստանի շուրջը խոշոր, տերիտորիայով զգալիորեն նրան գերազանցող, տերության առաջացմանը։ Այնուհետև Հայաստանը զրկվեց արտաքին նվաճումներով ձեռք բերած երկրամասերից։ Մ. թ. I դարի առաջին կեսում պետությունը փոխեփոխ կառավարում էին մերթ Հռոմի, մերթ պարթևների դրածոները։ Այդ տերությունների մրցակցությունը և Հայաս-

[1] Strab., XI, 14. 5.

[2] Տե՛ս վերևում, էջ 30 և հետ.։

[3] Տե՛ս վերևում, էջ 8, ծան. 1։

[4] Ըստ երևույթին, նույն ժամանակներին է վերաբերում թագավորների նախնիների պաշտամունքի սահմանումը։ Այդ ժամանակների ռեֆորմների մասին չափազանց հարուստ տվյալներ կան Մովսես Խորենացու մոտ։ Սակայն նախքան օգտագործելը, նրանք կարոտ են մանրակրկիտ հետազոտության։

ռանի ներքին գործերին նրանց միջամտությունը շարունակվեցին նաև հետագայում, հայ Արշակունիների կառավարման ժամանակաշրջանում։ Ընդհանուր առմամբ, սակայն, երկիրը կարողանում էր հաջողությամբ դիմագրավել նրանց հարվածներին և պաշտպանել իր անկախությունը։ IV դարում, Տրդատ III Թագավորի հաջորդների օրոք, Հայաստանում ուժեղացավ պայքարը Թագավորական իշխանության և սեպարատորեն տրամադրված, մինչև Սասանյանների քաղաքական ու ռազմական օգնությունը վայելող խոշոր հողատիրական ավագանու՝ նախարարների միջև։ Այդ պայքարը ժամանակ առ ժամանակ վեր էր ածվում քաղաքացիական ավերիչ պատերազմների, որոնք բարդանում էին պարսկական զորքերի արշավանքների հետևանքով[1]։ Պետությունը հետզհետե կորցնում էր իր ուժերն ու դիմադրողականությունը, և 387 թվականին նրա տերիտորիան բաժանվեց ազդեցության երկու անհավասար մասի՝ Սասանյան Պարսկաստանի ու Հռոմի միջև. դրանցից արևելյան, պարսկական մասն ընդգրկում էր հիմնական հայկական հողերը[2]։ Դա պետության փաստական քայքայումն էր։ Թագավորական իշխանությունը դարձավ անվանական, գլխավոր դերը խաղում էին նախարարները, իսկ քաղաքականության հիմնական գծերը որոշում էր պարսից թագավորը։ Իրավաբանորեն հայկական կենտրոնացված պետությունը դադարեց գոյություն ունենալուց 428 թվականին[3]։ Դա դի-

---

[1] Այդ պայքարը մանրամասնորեն նկարագրված է V դարի պատմագիր Փավստոս Բուզանդի աշխատության մեջ, ինչպես նաև Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության III գրքում։

[2] Մովսես Խորենացի, III, 42. Ղազար Փարպեցի, էջ 8։ Արմենիայի փոքր մասում Արշակունի թագավորը շատ շուտով փոխարինվեց բյուզանդական կառավարիչով (Մովսես Խորենացի, III, 46)։

[3] Ղազար Փարպեցին պատմում է, որ Հայաստանում թագավորական իշխանությունը վերացվեց հայ նախարարների խնդրանքով, որոնք վերջին Արշակունի Արտաշեսի դեմ գանգատով դիմել էին պարսից թագավորին։ Այդ խնդրանքը, նշում է հեղինակը, լիովին համընկնում էր պարսկական արքունիքի ցանկությունների հետ և ուրախությամբ կատարվեց (Ղազար Փարպեցի, էջ 24 և հետ.)։

նաստիաների փոխարինման նման մի բան չէր, ինչպես, օրի-նակ, երբ ժամանակին Արշակունիները փոխարինեցին Արտա-շեսյաններին։ Հետագայում ծավալված պայքարը՝ կենտրո-նացված պետություն ստեղծելու համար, երկար դարեր ան-արդյունք մնաց և պսակվեց մասնակի հաջողությամբ միայն IX դարի վերջում։ Բայց նոր պետությունն ընդգրկում էր Մեծ Հայքի տերիտորիայի սոսկ մի մասը։

IV դարը բեկման ժամանակաշրջան էր հայ ժողովրդի նաև կուլտուրական կյանքի ասպարեզում։ Ինչպես հայտնի է, IV—V դարերի սահմանագծում տեղի ունեցավ հայ գրերի գյուտը, և V դարում սկսվեց հայ ինքնատիպ գրականության հուժկու հոսանք, որը դեռ իր ակունքներում տվեց պատմու-թյան, փիլիսոփայության, աստվածաբանության և այլ բնա-գավառներին վերաբերող, ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև գեղարվեստական արժանիքներով ու լեզվով հիանալի առաջնակարգ երկեր։ V դարից սկսվում է ազգային ոճի զարգացումը նաև հայ ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության մեջ և այլն։ Բայց ի՞նչ է նախորդել այդ երև-վույթներին։

Կուլտուրայի երևույթներն արտացոլող առկա դոկումեն-տալ աղբյուրներից Հայաստանի հողի վրա ստեղծված հնագույ-նը հանդիսանում են Արմավիրի հունարեն արձանագրու-թյունները, որոնք թվագրվում են մ. թ. ա. III—II դարերի սահմանագծով։ Այդ արձանագրությունների մեջ գտնում ենք գրական տեքստեր, մասնավորապես մի տեքստ, որի մեջ հի-շատակվում են Հեսիոդեսի «Գործեր և օրեր» պոեմի գործող անձերից մեկի և հենց իրեն՝ Հեսիոդեսի անունները, այնու-հետև՝ նամակային ժանրի նմուշ, մակեդոնական օրացույցի ամիսների թվարկում և այլն։ Ինչպիսի կոնկրետ մեկնաբա-նություն էլ ստանան այդ տեքստերը[1], մի բան պարզ է. հենց

[1] Տե՛ս А. И. Болтунова, Греческие надписи Армавира, „Известия Армянского филиала Академии наук СССР", 1942, № 1—2. Я. А. Манандян, Армавирские греческие надписи в новом освещении, Ереван, 1946. К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 104 և հետ.։

սկզբից՝ դրանք հանդիսանում են դեռևս Երվանդյանների ժամանակներում Հայաստանի վրա հելլենիստական կուլտուրայի ազդեցության վկայությունն ու արտահայտությունը։

Հայաստանում կուլտուրայի հետագա զարգացման շըղթայից մեզ առայժմ հայտնի են համեմատաբար հազվագյուտ, բայց դրա փոխարեն խիստ արտահայտիչ օղակներ։ Այդպիսի փաստեր են, օրինակ, Տիգրան II-ի հիմնած թատրոնը Տիգրանակերտում, նույնպիսի թատրոնի ստեղծումը Արտաշատում նրա որդի Արտավազդ II-ի կողմից[1], վերջինիս կուլտուրական գործունեությունը՝ նրա հեղինակած ողբերգությունները, պատմական երկերը, գրված, անշուշտ, հունարեն լեզվով և հունական ոճով[2]։ Դրանցից է, այնուհետև, Գառնիի հեթանոսական տաճարի տիպիկ հռոմա-հելլենիստական, Միջերկրածովյան Արևելքի և Փոքր Ասիայի համար բնորոշ ճարտարապետությունը[3], ինչպես նաև նույն բնույթի՝ արվեստի և կենցաղային բազմաթիվ առարկաները, որոնք պեղվել են Գառնիում կամ պատահականորեն գտնվել Հայաստանի տարբեր անկյուններում[4]։ Դրանցից է, վերջապես, ավելի ուշ շրջանի պատկանող, նույն Գառնիում պեղված բաղնիքի՝ հունական աստվածությունների պատկերներով և համապատասխան հունարեն արձանագրություններով զարդարված խճանկարային հատակը[5], հենց բաղնիքի ճարտարապետությունը

[1] Plut., Luc., 29. Crass., 33 Մանրամասնությունները տես Գ. Գոյանի „2000 лет армянского театра", т. I, М., 1952 գրքում (էջ 129 և հետ.)։

[2] Plut., Crass., 33.

[3] Տե՛ս К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении, էջ 23 և հետ.։

[4] Տե՛ս Б. Н. Аракелян, Гарни, I—II. Г. А. Тирацян, Материальная культура древней Армении по данным некрополя и бани в Гарни. М., 1956 (Թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատ)։ Ա. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, և ուրիշ.։

[5] Տե՛ս Б. Н. Аракелян, Мозаика из Гарни, ВДИ, 1946, № 1.

և մի շարք այլ երևույթներ։ Ոչ պակաս հատկանշական փաստ է նաև հունարեն լեզվի լայն օգտագործումը ինչպես պետական պաշտոնական կյանքում, որպիսի հանգամանքի վկայություն են հանդիսանում, բացի Արմավիրի արձանագրություններից, նաև Գառնիի, Ապարանի, Տիգրանակերտի թագավորական արձանագրությունները, այնպես էլ, հնարավոր է, մասնավոր կյանքում[1]։

Հելլենիստական կուլտուրան, որը մեզ պատկերացնում է թվարկված տեղեկություններով և հուշարձաններով, իհարկե, հայկական հասարակության միայն վերին խավերի սեփականությունն էր, իսկ իր որոշ մասով, ինչպես ցույց են տալիս հենց իրենք՝ հուշարձանները, կարող է բնութագրվել նույնիսկ որպես պալատական կուլտուրա։

Նրա հետ մեկտեղ, Հայաստանում, անտարակույս, զարգանում էր և հասունանում նաև մի այլ կուլտուրա, որը արտացոլվել է ժողովրդական ճարտարապետության դեռևս չպեղված հուշարձաններում, ինչպես նաև, օրինակ, Մովսես Խորենացու մոտ պահպանված վիպական երգերում ու զրույցներում և այլն, որը և նախապատրաստեց հայկական ազգային կուլտուրայի, հատկապես մատենագրության և ճարտարապետության, V դարում սկսված զարմանալի վերելքը։ Այդ կուլտուրայի բաղկացուցիչ մասն էր և ինքը՝ հայոց լեզուն։

Կարելի է վկայաբերել նաև հայերի կրոնը՝ բազմաստվածությունը, որը, ըստ երևույթին, հատուկ է եղել բոլոր հին ժողովուրդներին։ Նա իր մեջ ընդգրկել է աքեմենյան ժամա-

[1] Հմմտ. Մայաթխայի շրջանից ծագող հունարեն արձանագրությունը (К. В. Тревер. հիշ. աշխ., էջ 244 և հետ.), ինչպես նաև էջմիածնի հունարեն արձանագրությունը (նույն տեղում, էջ 251 և հետ.)։ Վերջինիս հեղինակը հռոմեական սպա է և հռոմեացի, բայց ուշադրավ է այն հանգամանքը, որ արձանագրության լեզուն լատիներենը չէ (որով գրված էին հռոմեական պաշտոնական արձանագրությունները Հայաստանում, հմմտ. К. В. Тревер. հիշ. աշխ., էջ 212 և հետ., 223 և հետ. 262 և հետ.), այլ հունարենը, որը, ըստ երևույթին, ավելի հասկանալի և տարածված է եղել Հայաստանում։ Երկու արձանագրություններն էլ վերաբերվում են մեր թվականության II դարին։

նակաշրջանում իրանական, իսկ հելլենիստականում՝ հունական տարրեր, և այդպիսի շերտավորման հետևանքով նրա պանթեոնում ներկայացված են մի շարք սինկրետիկ աստվածություններ, ինչպես, օրինակ, Արև-Տիր-Ապոլոն և Լուսին-Անահիտ-Արտեմիս, որոնք մեծարվում էին Արմավիրի տաճարում[1], կամ Վահագն-Հերակլ՝ Աշտիշատի տաճարում[2] և այլն։ Այդ կրոնը, որն ընդգրկվում էր նաև Թագավորի նախնիների աստվածացումն ու պաշտամունքը, թերևս, նաև հենց Թագավորի անձի պաշտամունքը[3], իր վախճանը գտավ դարձյալ IV դարում, երբ Հայաստանը քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն[4]։

Հին Հայաստանում կյանքի տարբեր կողմերի զարգացման պրոցեսների թռուցիկ ակնարկից արդեն երևում է, որ հելլենիստական ժամանակաշրջանը հին Հայաստանի հասարակության համար դարձավ հզոր մղման և հետագա բուռն վերելքի շրջան—կազմակերպվեց պետություն, աշխուժացան առևտրական կապերը, աճեցին քաղաքներ, ծաղկեց առաջավոր հունական կուլտուրայի տարրերով բեղմնավորված հայկական կուլտուրան. ընդամենը երկու հարյուրամյակի ընթացքում Հայաստանը—Աքեմենյանների պետության հյուսիսային ծայրամասում գտնվող սատրապությունը—մ. թ. ա. I դարի սկզբներին վերածվեց Առաջավոր Ասիայի ամենահզոր պետության։ Այնուհետև պարզորոշ տեսնում ենք, որ այդ բոլոր պրոցեսները, անցնելով մի շարք աստիճաններ, իրենց ավարտմանն են հասնում մոտավորապես միևնույն ժամանակ՝ մ. թ. IV դարի շուրջը—կենտրոնացված պետությունը կործանվում է, քաղաքային կյանքը դեպի անկում է դիմում, կուլտուրան ու կրոնը արմատական փոփոխություններ են ապրում։

---

[1] Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 30 և հետ.։

[2] Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, III, 14։

[3] Г. Х. Саркисян, նշվ. աշխ., էջ 33 և հետ.։

[4] Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 404—412, 421—424. Հ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն յ ա ն, Պատմություն Տարոնոյ, Երևան, 1941, էջ 78—144։

Միանգամայն ակներև է, որ հայ հասարակության վերնաշենքի այդ բոլոր կողմերի զարգացման գծերը, որոնք ինքնին արտահայտում են որոշակի ժամանակաշրջան, պատմական զարգացման առանձին ինքնուրույն դարաշրջան, ենթադրում են իրենց հիմքում համապատասխան բազիսի, սոցիալ-տնտեսական այնպիսի կարգի առկայություն, որը սկզբունքորեն տարբեր է հաջորդած դարաշրջանի հասարակարգից՝ ֆեոդալիզմից, այն է՝ ստրկատիրական հասարակարգի առկայությունը։

* * *

IV դարի Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների տիրապետման, գերակշռության փաստը, ինչպես արդեն ասվել է վերևում, հիմք էր ծառայում այն պնդումների համար, թե հին հայ հասարակության բնույթը՝ ընդհանրապես և հին հայկական պետականության, հատկապես Արշակունիների պետության բնույթը՝ մասնավորապես, ֆեոդալական է եղել[1]։

---

[1] Նկատվում է նաև պրոբլեմի հաշտողական լուծման փորձ։ Հայաստանում ֆեոդալական հասարակարգի կազմավորումը վերագրում են մեր թվականության I դարին, հայ Արշակունիների թագավորության սկզբին, իսկ նախորդող մինչֆեոդալական ժամանակաշրջանում որոշակի տեղ է հատկացվում ստրկատիրական հասարակարգի ինստիտուտներին։ Այդ տեսակետի էկլեկտիկ բնույթը ակներև է. համերաշխելով մասամբ նոր տեսակետի հետ, այն միաժամանակ գտնվում է Հայաստանի պատմության պարբերացման ավանդական սխեմայի գերիում, իսկ սա իր արմատներով, վերջին հաշվով, հասնում է մինչև Մովսես Խորենացին։ Նախարարության գաղափարախոսը իր պատկերացմամբ առաջին Արշակունի հանդիսացող Վաղարշակի անվան տակ ստեղծել է մեծ ռեֆորմատորի, հայկական թագավորության գրեթե բոլոր հիմքերի ստեղծողի, նախարարական կարգերի հիմնադրի կերպարը, նրա մեջ կենտրոնացնելով այն ամենը, ինչը իրականում կազմավորվել, ստեղծվել է տարբեր ժամանակներում, բազմաթիվ սերունդների կյանքի ընթացքում։ Հետագայում այդ կերպարի գծերը հայազետ պատմաբանները վերագրել են հայ Արշակունիների դինաստիայի իրական պատմական հիմնադիր Տրդատ I-ին, որը թագավորել է մեր թվականության I դարի երկրորդ կեսում։ Արշակունիների՝ իշխանության գլուխ անցնելու ժամա-

*Իրականում, սակայն, հին հայկական պետականությունը, ի դեմս Արշակունիների պետության, IV դարում ապրում էր իր անկման շրջանը, մինչդեռ հայկական ֆեոդալական հասարակությունը այդ ժամանակաշրջանում գտնվում էր դեռևս իր երկար ճանապարհի սկզբում:*

*Իրականում, Արշակունիների կողմից կառավարվող, ֆեոդալական թվացող պետական ապարատը լոկ որոշ չափով ֆեոդալականացած էր, բայց իր էությամբ մնում էր ստրկատիրական պետական ապարատ, դեռևս մեր թվականությունից առաջ II դարում կազմավորված պետության հետագա զարգացման արդյունք: Սա, իհարկե, որոշ էվոլյուցիա էր ապրել—տնտեսական բազիսի զարգացումն ու փոփոխումը հանգեցնում էին քաղաքական վերնաշենքի համապատասխան զարգացման ու փոփոխման, պետական կարգը հարմարվում էր նոր պայմաններին, նրանում ստեղծվում էին նոր հիմնարկներ և անհետանում՝ հները: Որպեսզի հասկանալի լինի, թե ի՛նչ կարգի փոփոխությունների մասին է խոսքը, կարելի է մատնանշել, որ ի հաճույս ֆեոդալների ծնունդ առած դասակարգի, կենտրոնական իշխանությունը հարկադրված էր, որոշ չափով, ճանաչել պետական կարևորագույն պաշտոնների ժառանգականության կարգը նախարարական տոհմերի ներսում, իսկ է՛լ ավելի առաջ, ըստ երևույթին,*

---

*նակի, որպես Հայաստանի պատմության բեկման ժամանակաշրջանի պատկերացումը, երկար ժամանակ եղել է հայ պատմագրության հիմնական կանոններից մեկը (տե՛ս թեկուզ՝* Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, *էջ 427 և հետ.): Սակայն այդ պատկերացումը, լինելով Վաղարշակ—Տրդատի կերպարի ֆետիշացման հետևանք, ըստ էության սխալ պատմական հող չունի: Ըստ արժանվույն գնահատելով Տրդատ I-ի աչքի ընկնող գործունեությունը, Արշակունիների իշխանության գլուխ անցնելու փաստի մեջ հնարավոր չէ, այնուամենայնիվ, ինչ-որ ավելի բան տեսնել, քան գահատոհմի փոխարինում, իհարկե, կապված քաղաքական, կուլտուրական բնագավառներում, նույնիսկ երկրի տնտեսական կյանքում տեղի ունեցած որոշ փոփոխությունների հետ, որոնց նշանակությունը սակայն, հարկավոր չէ չափազանցնել:*

սատրապական իշխանության ժառանգականությունը գավառներում, որը վերջ ի վերջո հանգեցրեց գավառների վերածմանը նախարարների ֆեոդալական սեփականության[1]։ Կարելի է մատնանշել նաև պետության հրաժարումը, հօգուտ եկեղեցու, թագավորական դատավարության կարգից, թագավորական դատավորների ինստիտուտից, որը, ըստ երևույթին, Հայաստանում գոյություն է ունեցել հելլենիստական աշխարհի հարևան երկրների օրինակով[2], և այլն։

Ինքնըստինքյան զարմանալի չէ այն փաստը, որ քաղաքական վերնաշենքը իրեն ծնունդ տված տնտեսական կարգից ավելի երկար ապրեց և շարունակեց իր գոյությունը նոր հասարակարգի սկզբնական էտապներում, համարվելով նրա պահանջմունքներին. պատմությունը այդպիսի շատ օրինակներ գիտե։ Բայց հելլենիստական մի շարք թագավորությունների ֆոնի վրա, որոնք կազմավորվում կամ քայքայվում էին ներքին ու արտաքին քաղաքական բարեհաջող կամ անբարեհաջող իրադրության համեմատ, հայկական թագավորության կայունության փաստը, թագավորություն, որը երկար դարեր դիմադրել է հին աշխարհի երկու հզոր, նրան մասերի ծվատող տերությունների, պահանջում է լրացուցիչ բացատրություն։

Բանն, անկասկած, այն է, որ, ի տարբերություն ցեղերի և ազգությունների զուտ քաղաքական միավորումներ կազմող հելլենիստական ժամանակաշրջանի մի շարք պետությունների, Հայաստանը պատկանում էր այն պետությունների թվին, որոնք կազմավորվել են միասնական միալեզու ժողո-

[1] Տե՛ս Очерки истории СССР (III—IX вв.). М., 1858, էջ 174 և հետ., 183 և հետ. (Ս. Երեմյանի բաժինը)։

[2] Տե՛ս Մովսես Խորենացի, II, 8։ Հարևան երկրներից՝ թագավորական դատավորության և թագավորական դատավորների ինստիտուտը գոյություն ուներ Պարթևների պետության մեջ, որտեղ այն ժառանգվել է, թերևս, Սելևկյաններից։ Տե՛ս C. B. Welles, Dura Pergament 21. Hypothek und Exekution am Euphratufer im I Jahrhundert n. Chr., „Zeitschrift für Savigny—Stiftung für Rechtsgeschichte. Romanische Abteilung, LVI. 1936, էջ 101 և հետ.։

վերջի հիմքի վրա։ Այդ իսկ պատճառով, նրանք իրենց մեջ կրում էին քայքայման ավելի փոքր վտանգ, իսկ արտաքին, պետությունների վերահիշյալ տիպի համար կործանարար, արհավիրքները այնպիսի երկրի համար, ինչպես Հայաստանն էր, ընդհակառակը, որոշ իմաստով ամրապնդող, միացնող գործոն էին, որը ապահովում էր պետության լայն պաշտպանությունը բնակչության տարբեր խավերի կողմից։

Սակայն, այնուհանդերձ, պետական կարգը չէր հասնում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքին, և նոր պայմաններին նրա հարմարվելը չէր կարող շարունակվել անվերջ։ Բանը անշեղորեն հանգում էր պետության սոցիալական բազայի նեղացմանն ու թուլացմանը։ Տնտեսական և քաղաքական ավելի ու ավելի մեծ հզորություն ձեռք բերելուն զուգընթաց, հողատեր-ֆեոդալները գնալով ավելի էին ձգտում ազատագրվել թագավորական իշխանությունից։ Նախարարության սեպարատիզմը հասարակության ֆեոդալականացման արտահայտությունն էր, կոնկրետ կերպով՝ տնտեսության նատուրալացման, ապրանքային արտադրության կրճատման, արտաքին տնտեսական կապերի ժամանակավոր թուլացման։

Հելլենիստական ժամանակաշրջանի ծնունդ հանդիսացող ծանրաշարժ և բազմաճյուղ պետական ապարատը ֆեոդալական հարաբերությունների զարգացման նոր պայմաններում կաշկանդում ու ծանրաբեռնում էր հողատիրական ավագանուն։ Մովսես Խորենացին, իր «Պատմութիւն Հայոց» աշխատությունը եզրափակող «Ողբ»-ում գրում է Արշակունիների մասին. «...Թագաւորք խիստք և չարաչարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս»։ Այստեղ պատմագիրը հանդես է գալիս ո՛չ թե աշխատավոր մասսաների դիրքերից, ինչպես կարող էր այդ թվալ առաջին հայացքից, այլ որպես նախարարության գաղափարախոս։ Նախարարներն իրենց ի վիճակի էին զգում ինքնուրույն, առանց Արշակունիների անհանդիստ ու պահանջկոտ իշխանության օգնության, իրագործելու այն ֆունկցիաները (դրանց

նոր, ֆեոդալական, ձևափոխությամբ), որ առաջ կատարում էր այդ իշխանությունը։

Արշակունիների կենտրոնացված իշխանության ճգնաժամը իր ամբողջ ուժով երևան եկավ IV դարում։ Սակայն աղբյուրների մեջ ընձեռած տեսադաշտի սահմաններում այդ ճգնաժամը կապված պայքարի ձև ընդունեց թագավորական իշխանության և նախարարության միջև. մի որոշ չափով հաջողվում է ի հայտ բերել նաև քաղաքների մասնակցությունը նրանում։ Արտաքին ուժերի՝ Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի էքսպանսիայի սաստկացման պայմաններում տեղի ունեցած այդ պայքարը, անցնելով մի շարք փուլեր, ինչպես հայտնի է, հանգեցրեց թագավորական իշխանության վերացմանը Հայաստանում, որի մասին արդեն ասվել է վերևում։ Կասկածից վեր է, որ ճգնաժամը դրսևորվել է նաև այլ ոլորտներում—ժողովրդական մասսաների կեղեքվող գյուղացի-համայնականների, քաղաքի ու գյուղի չքավորության և ստրուկների շարժման մեջ, սակայն այդ մասին մենք կարող ենք գտնել V դարի հեղինակների ամենամշուշապատ ակնարկներից միայն։

Արշակունիների կենտրոնացված իշխանության քաղաքական ճգնաժամը ստրկատիրական հասարակարգից ֆեոդալիզմին անցման պրոցեսը բնութագրող տնտեսական երևույթների խտացրած արտահայտությունն էր։

Դա Հայաստանի ստրկատիրական սոցիալ-տնտեսական ֆորմացիայի ճգնաժամի վերջին, եզրափակիչ էտապն էր։

* * *

Քննարկված նյութերը, չնայած իրենց ծայրահեղ սահմանափակությանը, թույլ են տալիս, թեև ամենաընդհանուր գծերով, պատկերացնել այդ ֆորմացիայի հիմնական երևույթներն ու պրոցեսները և երևան բերել, նույնպես ընդհանուր ձևով, հին հայկական հասարակության զարգացման ուղու որոշակի առանձնահատկությունները, որոնք ուրվագծելու

փորձով էլ մենք համոզվածորեն կրկնենք ներկա աշխատու-թյունը:

Մեր թվականությունից առաջ I հազարամյակում, գտնվե-լով հին և հելլենիստական Արևելքի զարգացած ստրկատիրա-կան երկրների ծայրամասում, Հայաստանի հասարակարգը չէր կարող անցնել և չանցավ զարգացման կանոնական ուղի՝ առաջացում և ամրապնդում—ծաղկում—ճգնաժամ և անկում: Ընդհանրապես ծայրամասային հասարակության զարգացման տեմպերը անհավասարաչափ են լինում, քանի որ, հենվելով հարևան ավելի զարգացած երկրների՝ կյանքի տարբեր բնա-գավառներում ձեռք բերած նվաճումների վրա և օգտագործե-լով դրանք, նա ոչ միայն արագացնում է իր զարգացումը, այլև հաճախ շրջանցում նրա առանձին փուլերը, արագ քայ-լերով հասնելով այն երկրներին, որոնք խթանել են նրա զար-գացումը:

Հասկանալու համար, թե ինչո՞ւմն էր Հայաստանի զար-գացման անհավասարաչափությունը, հարկավոր է հիշել, որ հելլենիստական ժամանակը հին Արևելքի երկրների հա-մար եղել է ստրկատիրական հասարակության ավելի քան երկու հազար տարվա պատմության եզրափակիչ էտապ, մի ժամանակաշրջան, որը անմիջականորեն հանգեցրեց ֆեոդա-լական հասարակության անցմանը: Հելլենիստական ժամա-նակաշրջանում, իսկ Արևելքի որոշ երկրների համար մասամբ էլ դրանից առաջ, նկատվում է աշխատավոր, մասնավորապես հողագործական, բնակչության շահագործման ձևերի մեծ բազմազանություն: Դրանցից մի քանիսը հիշեցնում են ֆեո-դալական շահագործման ձևերը: Բնորոշ է դառնում հողի վրա նստեցված ստրուկը՝ իր ոչ-մեծ տնտեսությամբ, որը, ճիշտ է, նրա հետ միասին պատկանում է ստրկատիրոջը: Սաստկա-նում է ազատ գյուղացիության շահագործումը, բարձրանում նրա կախման աստիճանը և տեղի է ունենում նրա՝ հողին մասնակի ամրացման պրոցես: Մի կողմից՝ այդ և նման երևույթները դեռ դուրս չեն գալիս ստրկատիրական հասարա-կարգի շրջանակներից, հայտանշելով լոկ նրա ճգնաժամը, և իրենցից ներկայացնելով այնպիսի մեթոդների որոնումներ,

որոնք ընդունակ են երկարացնելու նրա գոյությունը, մյուս կողմից՝ դրանք արդեն ապագա ֆեոդալական հարաբերությունների տարրերի սաղմերն են, որոնք առաջանում են ստրկատիրական հասարակության ներսում և նախապատրաստում նրա անկումը։

Հենց այդ բարդ, ճգնաժամի գծեր կրող տնտեսական իրադրության մեջ է ներքաշվում Հայաստանը հելլենիստական ժամանակաշրջանում, իր թիկունքում չունենալով, սակայն, զարգացման այն երկար ուղին, որի արդյունքն էր հանդիսացել այդ իրադրությունը։ Հազիվ սկսելով զարգանալ ստրկատիրության ուղիով, Հայաստանը միանգամից մուտք գործեց ստրկատիրական հասարակության այն ստադիան, որը նախորդել էր ֆեոդալիզմին։ Այդ պատճառով, նա փաստորեն չկարողացավ ապրել ստրկատիրական տնտեսության այն ծաղկման ժամանակաշրջանը, որը տարբեր ժամանակներում և տարբեր ձևերով հատուկ է եղել Հին Արևելքի երկրներին ու հունա-հռոմեական աշխարհին, և, հետևաբար, չկարողացավ լրիվ չափով ստեղծել ստրկատիրական հասարակության համար բնորոշ մի շարք սոցիալական և քաղաքական ձևեր ու հիմնարկներ։ Դրա շնորհիվ, սակայն, Հայաստանի զարգացման տեմպերը, հին արևելյան հասարակությունների համեմատությամբ, սրընթաց էին և նրա անցումը ֆեոդալական հարաբերություններին ավելի հեշտությամբ կատարվեց։ (Հայտնի է, որ տվյալ արտադրաեղանակի փոխարինումը ամենից ավելի դժվար է ընթանում այնտեղ, որտեղ այդ արտադրաեղանակը ամենից ավելի է արմատացել)։ Հայաստանը արդեն մեր թվականության առաջին դարերում դուրս եկավ ծայրամասային երկրի վիճակից և այնուհետև ինքն սկսեց խթանիչ և քաղաքակրթիչ դեր խաղալ հարևան երկրների նկատմամբ։

* * *

Վերջացնելով, ուզում ենք մի քանի խոսք ասել հին Հայաստանի հասարակարգի պրոբլեմի արմատական լուծման հեռանկարների մասին։

Սկզբում մենք խոսեցինք աղբյուրների երկու մեծ խմբերի մասին՝ արտաքին ու ներքին, և ընդգծեցինք վերջինների նկատմամբ առաջինների գերակշռության փաստը։ Այդ գերակշռությունը, սակայն, չպետք է համարել ճակատագրական ու վերջնական։ Հին Հայաստանի պատմության արտաքին աղբյուրների գումարը, իհարկե, կարող է աճել, բայց հազիվ թե այն աճի էական չափով։ Եթե խոսելու լինենք, օրինակ․ առավել կարևոր՝ հունա-հռոմեական աղբյուրների մասին, ապա այսօր էլ մենք օգտվում ենք նրանց համարյա թե այն նույն շարանից, որը սրանից 50—100 տարի առաջ արդեն հայտնի էր հայագետներին։ Ընդհակառակը, ներքին աղբյուրներն ընդունակ են, ինչպես ցույց է տալիս վերջին տասնամյակների պրակտիկան, ուժեղ աճման, և, ըստ․երևույթին, Հայաստանի պատմաբանների ու հնագետների մոտակա տարիների խնդիրը պետք է լինի՝ ձգտել բարձրացնել նրանց դերը, իսկ այնուհետև ապահովել նրանց գերակշռող նշանակությունը հին Հայաստանի պատմությունը մշակելու գործում, չանտեսելով, իհարկե, արտաքին աղբյուրների տվյալների հետագա մանրակրկիտ հետազոտությունն ու որոնումը։

Նշված նպատակին հասնելու ուղին ինչպես եղած նյութի խոր ուսումնասիրությունն ու գիտական շրջանառության մեջ մտցնելն է, այնպես էլ նորի ձեռքբերումը։

Մասնավորապես, դեռ շատ բան կարող են տալ վաղ միջնադարի հայ հեղինակները, եթե նրանք դիտվեն համապատասխան տեսանկյունով, և, առանձնապես, Մովսես Խորենացին, որի «Պատմութիւն Հայոց»-ի տեքստը իսկապես որ անսպառ գանձեր է պարունակում։ Թերևս, այդ բնագավառում կենտրոնական խնդիրը հենց «Պատմութիւն Հայոց»-ի պրոբլեմի լուծումն է։ Իսկ պրոբլեմը փոխադարձաբար միմյանց հետ կապված երկու հարցի մեջ է՝ թվագրության և հավաստիության։ Ինչպես հայտնի է, Մովսես Խորենացու «Պատմութիւն»-ը անցյալ դարի վերջին—ներկա դարի սկզբին ենթարկ-

վեց խիստ, անշուշտ, չափազանցրած, քննադատության[1]։ Այդ քննադատության ծայրահեղություններից շատերը մերժվել են հենց այն ժամանակ, իսկ նրա մի շարք այլ դրույթներ հերքվել են հետագայում[2]։

«Պատմություն Հայոց»-ի թվագրության հարցում սովետական հետազոտողների կարծիքները ներկայումս համընկնում են՝ այն համարվում է V դարի երկ։ Այնուամենայնիվ, այդպիսի բուռն քննադատությունից հետո, անհրաժեշտություն են ներկայացնում լրացուցիչ նոր հետազոտությունները, որոնք նորից ու նորից գալիս հաստատելու այդ կարծիքի ճշտությունը և նոր ավանդ մտցնեին աշխատության հավաստիության վերաբերյալ մեր պատկերացումների մեջ։

Վերջին ժամանակներս նկատվում է Մովսես Խորենացու աշխատության ուսումնասիրության նոր ուղի — փորձ է կատարվում պարզելու նրա հաղորդած այս կամ այն տեղեկության հավաստիության աստիճանը՝ լինի դա արխեոլոգիական վերլուծության միջոցով կամ այլ ճանապարհով, բայց այդ փորձը սերտորեն չկապելով թվագրության պրոբլեմի հետ[3]։ Այդպիսի ուղին նույնպես արդյունավետ է թվում, այն

---

[1] Մովսես Խորենացու վերաբերյալ գրականությունը հսկայական է։ Բազմաթիվ քննադատական գործերից նշենք Գ ր. Խ ա լ ա թ յ ա ն ց ի աշխատությունները, որոնց մեջ հանրագումարի են բերված «Պատմության Հայոց»-ի տեքստին և նրա հեղինակին ներկայացված բոլոր հիմնական մեղադրանքները՝ Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. Опыт критики источников, ч., I. Исследование, ч. II. Материалы. М., 1896. Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского, ч. I. Исследование, ч. II. Материалы, М., 1903.

[2] Օրինակ՝ Յ. Կ ո ն ի բ ե ր ի «Մովսես Խորենացու ժամանակի մասին», «Մովսես Խորենացու «Պատմության» աղբերաց խնդիրը». «Մովսես Խորենացու «Պատմության» ժամանակի մասին» աշխատություններում («Հանդես ամսօրյա», 1902—1903 թթ.), Մ. Ա բ ե ղ յ ա ն ի «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» գրքում (Վաղարշապատ, 1899), Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց ի «Մովսես Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատության մեջ (Երևան, 1940) և այլն։

[3] Տե՛ս օրինակ, Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Արմավիրի հա-

տալիս է իր պատասխանը և, բացի դրանից, օրինակավորեն օգնում է նաև թվագրությունը վերջնականապես ճշգրտելու գործին։

Չի կարելի նաև ավարտված համարել այն, ճիշտ է, ոչ հարուստ, վիմագրական նյութի հետազոտությունը[1]։ Օրինակ՝ Արմավիրի կամ Տիգրանակերտի հունարեն արձանագրությունների ուսումնասիրվածությունը բավարար չէ։ Մյուս արձանագրություններից նույնպես դեռ կարելի է արժեքավոր նյութ քաղել։ Նույնը վերաբերում է նաև նյութական կուլտուրայի հուշարձաններին։

Հին Հայաստանի և նրա ներքին կյանքի վերաբերյալ տեղեկությունները բազմապատկելու ամենամեծ և ռեալ հույսերը, իհարկե, կապված են հնագիտական պեղումների հետ[2]։

Գառնիում կատարվող պեղումները ամեն տարի նոր հետաքրքրական նյութ են մատակարարում մեր թվականության առաջին դարերի Հայաստանի պատմության և կուլտուրայի

---

նարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ. Երևան, 1946, С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1. К. В. Тревер. Очерки по истории древней Армении, էջ 105—114։ Գ. Խ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3. И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, ВДИ, 1955, № 2 և ուրիշներ։

[1] Հայաստանի պատմության վիմագրական հուշարձանները, որոնք վերաբերում են մինչև V դարի ժամանակաշրջանին, ընդամենը շուրջ երկու տասնյակ, հավաքված են Կ. Վ. Տրևերի „Очерки по истории культуры древней Армении" գրքում (М., 1953)։ Բացառություն են կազմում Սևանա լճի շրջանում ավելի ուշ գտնված երեք կոթողները՝ Արտաշես I-ի արամեական արձանագրություններով, որոնք կրկնում են նույն շրջանում նախկինում գտնված համանման երկու կոթողների բովանդակությունը։ Այդ երեքից մեկը հրատարակել է Գ. Ա. Տիրացյանը (Новонайденная арамейская надпись Арташеса I, ИАНА, 1956, № 3).

[2] Б. Н. Аракелян, Археологические работы в Армении „Вестник Академии наук СССР", 1961, № 1.

վերաբերյալ[1], և արդեն ավել են, մյուս արժեքների հետ մեկ-տեղ, այնպիսի հուշարձան, ինչպիսին է բաղնիքի խճանկարով զարդարված հատակը՝ հունարեն արձանագրություններով[2], իսկ նախավերջին՝ 1961 թ. սեզոնում՝ արամեական գրերով հետաքրքրական արձանագրություն։ Բայց միայն Գառնիի պեղումները չեն կարող նյութ ապահովել ուրարտական հուշարձանների և վաղ-միջնադարյան Դվինի միջև ընկած ամբողջ հազարամյակի պատմությունը լուսաբանելու համար. Պատմական Հայաստանի, բարեբախտաբար Սովետական Հայաստանի սահմաններում գտնվող, չորս մայրաքաղաքների—հայկական քաղաքներից հնագույն, Ուրարտուի պատմության խորքերը հասնող Արմավիրի, հին Հայաստանի ամենախոշոր ու ամենափայլուն Արտաշատ քաղաքի, իրենց ժամանակին ծաղկուն Վաղարշապատ ու Երվանդաշատ քաղաքների—պեղումները հանդիսանում են հայ հնագետների առաջնահերթ խնդիրը[3]։ Չի կարող կասկած լինել այն մասին, որ այդպիսի պեղումներն ընդունակ են լույս աշխարհ հանելու ինչպես նյութական կուլտուրայի առաջնակարգ հուշարձաններ, այդ թվում՝ ճարտարապետական ու վիմագրական կոթողներ, այնպես էլ առօրյա կյանքն ու կենցաղը բնութագրող ոչ պակաս արժեքավոր բազմաթիվ նյութեր։

---

[1] *Տե՛ս* Б. Н. Аракелян, Гарни, I. Результаты работ археологической экспедиции Института истории Академии наук Армянской ССР, 1949—1950 гг. (Античный период), Ереван, 1961. *Նույնի*, Гарни, II. Результаты работ Гарнийской археологической экспедиции 1951—1955 гг. (Античный период), Ереван, 1956.

[2] Б. Н. Аракелян, Мозаика из Гарни, ВДИ, 1956, № 1.

[3] *Առայժմ այդ քաղաքները հնագիտորեն կամ բոլորովին հետազոտված չեն (Արտաշատ, Երվանդաշատ), կամ հետազոտված են չափազանց թույլ (Արմավիր, Վաղարշապատ)։ Տե՛ս* С. В. Тер-Аветисян, Археологическое обследование городища „Древний Армавир", „Научный сборник, посвященный 20-летию установления Советской власти в Армении", Ереван, 1941. *Ա. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935։*

# О ПУТЯХ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

(Резюме)

Армянская историческая литература, исключительно обильная и богатая, восходит к V веку и снабжает историков средневековья ценнейшими данными; перед ней бледнеет значение иноязычных, хотя и весьма важных, источников по этому периоду истории Армении. Предшествующий период — до IV—V вв.— являет обратную картину. Здесь на первый план выступает группа иноязычных источников, составляя тот материал, на основе которого преимущественно воссоздается история древней Армении. Конечно, определенную и все возрастающую роль здесь играет также местная, армянская группа источников.

Легко представить себе, насколько разнохарактерна информация, получаемая из источников по средневековью и по древности. В первом случае она многосторонне характеризует внутренний строй армянского общества, во втором — неизбежно оставляет его в тени. Характеризуемая этим трудность изучения общественного строя древней Армении толкала его первых исследователей к перенесению и распространению представлений о феодальном строе Армении, созданных на основе более поздних данных, также на древний период, и к приспособлению сохранившихся о нем скудных сведений к этим представлениям. Именно так поступил Николай Адонц, которому принадлежит первая серьезная и успешная попытка проникнуть в сущность армянского феодализма.

Опираясь на данные Плиния Старшего о том, что Армения делилась на 120 стратегий, Н. Адонц стремился доказать, что армянские феодальные княжества — нахарарства существовали уже в I в. н. э. Это мнение, однако, не подтверждается конкретным анализом упомянутого свидетельства Плиния и недавним окончательным установлением этимологии термина «нахарар», как «тот, кто держит первое место, начальник», первоначально являвшегося, как выясняется, синонимом термина «сатрап».

Достаточно рельефно вырисовывается эволюция нахарарства и стратегий на фоне развития института землевладения и земельной собственности в древней Армении. В эллинистический период в состав царской земли входила подавляющая часть территории армянского государства. В дальнейшем происходило постепенное «расползание» фонда царской земли, сначала медленное, затем все более стремительное, за счет чего возрастало храмовое, городское, в особенности — нахарарское землевладение. В IV в. основная масса земли уже принадлежала церкви и нахарарским родам, которые пробрались даже в самое сердце царских владений — область Айрарат.

По пути, проложенному Н. Адонцем, пошли также Я. А. Манандян и ряд других исследователей, датируя начало феодализма различными по отдаленности временами — от доурартского периода до эпохи Тиграна II (первая половина I в. до н. э.).

Однако стремление выявить собственное лицо социально-экономического строя древней Армении неизбежно должно было привести к пересмотру этой точки зрения. С. Т. Еремяном была выдвинута и обоснована в ряде статей новая концепция. С. Т. Еремян пришел к выводу о рабовладельческом характере общественного строя древней Армении и дал следующую периодизацию его развития: период общинно-рабовладельческий (VII—IV вв. до

н. э.), период расцвета рабовладельческой экономики (III в. до н. э. — II в. н. э.), период кризиса и упадка рабовладельческих производственных отношений (III—IV вв. н. э.).

В настоящее время, наряду с признанием большинством историков точки зрения о рабовладельческом характере древнеармянского общества, имеется и критика ее. Однако основной огонь этой критики бьет по неверной цели. Критики упорно утверждают, что эта концепция основана якобы лишь на аналогии или даже отождествлении общественного строя древней Армении со строем античных рабовладельческих обществ, полагая, по-видимому, что только путем доказательства идентичности общественного строя какой-либо страны греческому или римскому рабовладельческому строю и можно прийти к выводу о его рабовладельческом характере. Не учитывается то обстоятельство, что и эти два общества — греческое и римское — во многом были различны между собой, не говоря уже о существеннейших отличиях от них, свойственных восточным рабовладельческим обществам.

Рациональное зерно этой критики состоит в том, что действительно до сих пор основное внимание уделялось общим вопросам социально-экономического развития древней Армении и мало сделано для выяснения его особенностей.

В этом направлении наиболее существенным нам представляется вопрос о формах эксплуатации, связанных с земледелием. Важное значение здесь имеет дальнейшее исследование экономической природы частновладельческих хозяйств — агараков и дастакертов, принадлежавших царю, знати, храмам, духовенству, городам и т. д. О них написано довольно много, но не всегда с учетом того, что армянские источники об этих хозяйственных единицах относятся не ранее, чем к V в. н. э., и, следова-

тельно, сохраняют лишь пережиточные и остаточные данные о более древних этапах их эволюции.

Комплексное изучение всех контекстов этих терминов, содержащихся в исторической литературе V века, а также данных армянского перевода библии, сделанного в тот же период, показало, что слово «дастакерт» в то время употреблялось в двух различных смыслах. В одном из них оно полностью совпадало и являлось взаимозаменяемым с термином «агарак», обозначая вместе с ним «пахотное поле, усадьбу, поселение», находящееся в частном владении. В другом употреблении слово «дастакерт» сохраняло свое первоначальное значение «созданный, сотворенный рукой, рукотворный», в каком оно было заимствовано из персидского языка в парфянский период. В случаях такого употребления, «дастакерт» мог обозначать любой объект, если только речь шла о создании, сотворении этого объекта кем-либо.

Разграничение употреблений слова «дастакерт» исключает возможность затемнения его смысла как хозяйственной единицы, агарака, посредством навязывания ему чуждых для него черт, например, черт, свойственных городам.

С дастакертами-агараками прочно увязывается категория непосредственных производителей-земледельцев, называющихся в источниках «мшак». Мшак — это не всякий земледелец, но земледелец, который обрабатывал чужую землю в качестве наемного рабочего, арендатора или крепостного. Важнейшие сведения о мшаках содержатся в рассказе Лазара Парбеци о причислении персами двух духовных лиц — армян, в наказание, к категории «царских мшаков». Рассказ обрисовывает положение мшаков как рабское или близкое к рабскому.

Перебазировав эти представления на почву армянских царских и частновладельческих хозяйств — дастакер-

тов-агараков, мы получим то направление, в котором надлежит искать характеристику трудившихся там земледельцев. Их черты напоминают широко распространенную в древней Передней Азии категорию производителей материальных благ — посаженных на землю рабов; можно, однако, усмотреть в них и крепостных; но ведь весь наш материал освещает картину IV—V вв., времени интенсивного процесса феодализации, а задача состоит в определении положения жителей дастакертов-агараков до этого процесса. Решиться спроецировать картину IV—V веков в глубь истории можно лишь имея там какую-то реальную опору. Такую опору мы видим, прежде всего, в соответствующих данных о сопредельных странах доэллинистического, эллинистического периодов и первых веков н. э., которые говорят в пользу определения статуса земледельцев также армянских дастакертов-агараков как рабов, посаженных на землю, если не в IV—V веках, то, во всяком случае, не в очень отдаленном прошлом. Такой вывод подтверждается и прямыми данными Мовсеса Хоренаци о том, что рабы и военнопленные в древней Армении поселялись в дастакертах. Этим, разумеется, не исключалась возможность применения и других побочных форм эксплуатации в дастакертах-агараках.

Исторические источники не дают возможности ответить на вопрос о характере методов эксплуатации, предшествовавших формам, о которых шла речь. Однако нет нужды связывать начало процесса селения рабов на землю обязательно с феодализацией общества. Это явление, конечно, знаменовало собой кризис классической рабовладельческой эксплуатации, основанной исключительно на внеэкономическом принуждении, но от первых признаков этого кризиса до кризиса и падения рабовладельческого строя было еще очень и очень далеко. Более того, эти признаки сопровождались на первых порах значительным ростом и разветвлением рабовладельческой системы,

выражавшимся, прежде всего, в интенсивном увеличении географического ареала рабовладельческих обществ, включении в него периферийных стран. В данном случае мы имеем в виду историю эллинистического периода, но аналогичные явления прослеживаются и в древневосточной, и в римской истории.

Для Армении, являвшейся одной из таких периферийных стран, зарождение системы эксплуатации сидящих на земле рабов смело можно отнести к периоду более отдаленному, чем процесс феодализации, связывая его с включением Армении в единый процесс развития эллинистического мира. При этом внутренние истоки данной системы в Армении можно усмотреть в условиях архаичного патриархального рабства, а каналы процессов трансформации последнего непосредственно в указанную систему — в чертах известного сходства, роднившего эти две — позднюю и архаичную — формы рабства.

Период развития рабовладельческого общества, когда начинается и получает распространение селение рабов на землю, характеризуется также усилением влияния рабовладельческих форм эксплуатации на эксплуатацию свободного, прежде всего — земледельческого населения. Классическим примером этих встречных процессов может служить развитие римского колоната, но в той или другой форме и интенсивности они были свойственны и другим рабовладельческим обществам.

Для Армени также, хотя и в общих чертах, но вполне определенно, можно констатировать процесс сближения статуса жителей дастакертов-агараков — сидящих на земле рабов — и жителей деревень — крестьян-общинников, означавший некоторое улучшение положения первых и ухудшение — последних.

Однако и здесь все суждения основаны на источниках, выхватывающих лишь последние этапы изучаемых

процессов. А как обстояло дело с армянской общиной в эллинистическое время и в первые века н. э.? Этот вопрос из всех рассматриваемых не только наименее изучен, но и наиболее трудно доступен для изучения, и, нам кажется, пока возможна только его теоретическая постановка.

Сама по себе сельская община никогда не являлась признаком какой-либо общественно-экономической формации. При наличии необходимых условий она могла существовать не только при феодализме, что обычно подчеркивается, но и при рабовладельческом строе, и, в отдельных случаях, при капитализме (например, в России). Если отвлечся от той неверной и неисторической мысли, что сельская община абсолютно косна и способна лишь бесконечно долго распадаться вследствие бесконечно долгого процесса социальной дифференциации, то придется признать, что в ней, как и во всяком общественном организме, неизбежно отражаются характерные для общества, составной частью которого она является, социальные взаимоотношения. Например, внутри сельских общин рабовладельческих стран складывались рабовладельческие отношения, разумеется, определенным образом трансформированные специфическими условиями общинной жизни. Являясь органической частью данного общества, община, в свою очередь, накладывала на него свой специфический отпечаток.

В этих аспектах древнеармянская община почти не изучена, почему и нельзя считать правомерной или своевременной обычную ссылку на ее роль, как на аргумент против рабовладельческого или за феодальный характер общественного строя древней Армении.

Не менее важной, чем сельская местность, ареной социально-экономической жизни в эллинистическом мире был город. Передняя Азия III—I вв. до н. э. знала целый ряд типов рабовладельческого города, из коих наиболее

распространенным был эллинистический полис. Из других типов известны вавилонские города, города-храмы Малой Азии, Сирии, города Палестины, Финикии и т. д. Все эти города, столь разнообразные, обнаруживают черты явного сходства, когда речь идет об их социально-экономической структуре и политической роли в системе эллинистических монархий. Гражданские общины, представлявшие собой коллективы реальных и потенциальных рабовладельцев, в эллинистических государствах были наделены целым рядом привилегий и прав; цари практиковали обширные земельные дарения городам. Союз между царской властью и городами в эллинистический период был выражением консолидации различных слоев класса рабовладельцев в целях подавления и удержания в узде эксплуатируемых масс, а также сохранения политической целостности государства, выгодной для обеих сторон. Имевшиеся между царской властью и городами противоречия отступали на второй план перед важностью и жизненностью этих задач.

Эта же взаимная заинтересованность была одной из основ эллинистического градостроительства, грандиозного процесса, охватившего весь Передний Восток и в течение двух-трех столетий породившего сотни новых городов. В это же время в Армении возникло не менее десятка новых городов. Будучи выражением внутреннего развития страны, бурный рост городов в Армении явился вместе с тем и звеном в общем процессе эллинистического градостроительства. Города Армении, основанные, как и в других странах эллинистического мира, царями, носили династические названия. Подобно многочисленным Александриям, Селевкиям, Антиохиям и т. п., в Армении появились Ервандашат, Ервандаван, Аршамашат, Аркатиокерт, Арташат, по нескольку Заришатов, Зарехаванов, Тигранакертов; в I—II вв. н. э. были основаны Вагаршапат, Мцурн, вероятно — Нахчаван.

Однако градостроительство в Армении имело и свою специфику. В то время как в классических рабовладельческих странах Запада и Востока оно было подготовлено предшествующим длительным процессом стихийного роста городов, приведшего в ряде стран к подлинному расцвету городской жизни, в Армении уже наиболее древние города были продуктом градостроительства. Подобная специфика кривой роста городов была выражением особенностей линии развития древнеармянского общества в целом.

В отношении своего облика и устройства города древней Армении представляли собой еще одну разновидность среди перечисленных выше типов городов эллинистического времени. Эти города продолжали существовать еще в IV веке, однако городской строй в том виде, в каком он сложился в древности, к этому времени уже изжил себя и не имел перспектив дальнейшего развития.

Подлинной катастрофой для армянских городов, сильно ускорившей процесс их захирения, было нашествие персидских войск в конце 50-х — начале 60-х годов IV века; города больше не оправились, как оправлялись они раньше после подобных катастроф.

Упадок городов, начавшийся в Армении в IV—V вв., продолжался около пяти столетий. Городская жизнь оживилась лишь в IX—XI вв. и достигла нового расцвета в XII—XIII вв. Однако почти ни один из древних городов не возродился. Новые городские центры возникли в новых географических пунктах.

Имеющихся данных недостаточно, чтобы дать четкую периодизацию развития рабовладельческого строя в Армении, опираясь только на социально-экономические явления. Приходится, поэтому, обращаться к совокупности линий развития также других областей жизни древнеармянского общества. Из обзора их эволюции явствует, что

эллинистический период стал для него временем могучего толчка и последовавшего бурного развития: сложилось государство, оживились торговые связи, выросли города, зацвела армянская культура, оплодотворенная элементами передовой греческой культуры; в течение каких-нибудь двух столетий Армения — небольшая сатрапия на северной окраине государства Ахеменидов — выросла в одно из самых крупных государств Передней Азии. Далее мы видим, что все эти процессы, пройдя ряд ступеней, приходят к своему завершению приблизительно в одно и то же время — около IV века н. э.: гибнет централизованное государство, приходит в упадок городская жизнь, культура и религия переживают коренные изменения.

Очевидно, что линии развития различных сторон надстройки армянского общества, очерчивающие собой определенный период, отдельную самостоятельную эпоху исторического развития, предполагают наличие в своей основе соответствующего б а з и с а, социально-экономического строя, принципиально отличного от строя последовавшей эпохи — феодализма, а именно — рабовладельческого строя.

Факт преобладания, господства в Армении VI—V вв. феодальных отношений, как известно, брался за основу для утверждения феодального характера древнеармянского общества вообще и, в частности, феодального характера древнеармянской государственности, в особенности — Аршакидского государства. На деле же древнеармянская государственность в образе Аршакидского государства доживала свой век в то самое время, когда армянское феодальное общество находилось еще в начале своего долгого пути. На деле государственный аппарат, руководимый Аршакидами, был лишь до определенной степени феодализировавшимся, приспособившимся к новым условиям, но, по существу своему — рабовладельческим госу-

дарственным аппаратом, немалое значение для продления жизни которого имел тот факт, что Армения, в отличие от многих этнически пестрых государств, сложившихся в эллинистический период, принадлежала к числу государств с единой одноязычной этнической основой.

Однако государственный строй не поспевал за ходом социально-экономического развития общества, и процесс его приспособления к новым условиям не мог продолжаться бесконечно. Дело неуклонно шло к ослаблению социальной базы государства.

Политический кризис централизованной власти Аршакидов, разразившийся в IV веке и осложненный энергичным вмешательством мощных соседей — Рима и Персии, был концентрированным выражением экономических явлений, характеризовавших процесс перехода от рабовладельческого строя к феодализму. Это был последний, завершающий этап кризиса армянского рабовладельческого строя в целом.

Рассмотренные материалы, несмотря на их крайнюю ограниченность, позволяют в общих чертах реконструировать основные явления этого строя и выявить определенную специфику линии развития древнеармянского общества.

В I тысячелетии до н. э. Армения, находясь на окраине развитых рабовладельческих стран древнего, а затем эллинистического востока, не могла пройти и не прошла канонического пути развития: зарождение и укрепление — расцвет — кризис и упадок. Темпы развития всякого периферийного общества неравномерны, так как, опираясь на достижения соседних более развитых стран в различных областях жизни и используя их, оно не только ускоряет свое развитие, но даже зачастую и минует отдельные этапы его, быстрыми шагами догоняя страны, стимулировавшие его развитие.

Чтобы понять, в чем состояла неравномерность развития Армении, нужно вспомнить, что эллинистический период для стран Древнего Востока — это завершающий этап более чем двухтысячелетней истории рабовладельческого общества. Это время, когда получают распространение новые формы эксплуатации, которые пока не выходят за рамки рабовладельческого строя, указывая лишь на его кризис и представляя собой поиски методов, способных продлить его существование, но которые вместе с тем являются предпосылками возникновения элементов будущих феодальных отношений внутри рабовладельческого строя, подготовляющими его падение.

В эту-то сложную и уже отмеченную чертами кризиса экономическую обстановку и включается Армения в эллинистический период, не имея, однако, за плечами того длительного пути развития, результатом которого была эта обстановка. Едва начав развиваться по пути рабовладения, она перешагнула в ту стадию рабовладельческого общества, которая предшествовала феодализму. Она поэтому фактически не успела пережить периода расцвета рабовладельческой экономики, того расцвета, который наблюдался в разные сроки и в различных формах в странах Древнего Востока и в греко-римском мире и, следовательно, не успела в полной мере создать ряда присущих рабовладельческому обществу социально-экономических и политических форм и учреждений. Благодаря этому темпы развития Армении, по сравнению с древневосточными странами, были стремительны, и переход ее к феодальным отношениям оказался облегченным. (Известно, что смена способа производства труднее всего протекает там, где он более всего укоренился). Армения уже в первые века нашей эры вышла из положения периферийной страны и в дальнейшем сама стала играть стимулирующую роль в отношении сопредельных стран.

ԳԱԳԻԿ ԽՈՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ГАГИК ХОРЕНОВИЧ САРКИСЯН

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին

*Խմբագրությամբ՝ Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆԻ*

*Հրատ. խմբագիրներ՝ Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ*
*Վ. Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ*
*Նկարչական ձևավորումը՝ Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ*
*Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. ԳՈՐՈՅԱՆ*
*Սրբագրիչ՝ Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ*

---

*ՎՖ 06846, ԽՀԽ 754, Հրատ. 2130, պատվեր 393, տիրաժ 2500*

---

*Հանձնված է արտադրության 23/VIII 1962 թ., ստորագրված է տպագրության 17/XI 1962 թ., տպագրական 6 մամուլ, հրատ. 4,22 մամուլ, թուղթ 84×108¹/₃₂: Գինը 25 կ.:*

---

*Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ. տպարան, Երևան, Բարեկամության 24*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0007070

ЦЕНА
№20617